

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ - 90

**Գիտական նստաշրջան՝
նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 90-ամյակին**

(12-13 հուլիսի, 2019)

Նստաշրջանի նյութեր

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ՀՏԴ 78:06
ԳՄԴ 85.31
Չ 479

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ
Հրատարակվում է ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Արարատ ԱՂԱՍՅԱՆ (նախագահ) – ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Աննա ԱՍԱՏՐՅԱՆ – արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Մարգարիտա ՌՈՒՆԿՅԱՆ – արվեստագիտության դոկտոր
Նազենիկ ՍԱՐԳՍՅԱՆ – արվեստագիտության դոկտոր
Լիլիթ ԱՐՏԵՄՅԱՆ – արվեստագիտության թեկնածու
Անահիտ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ – արվեստագիտության թեկնածու
Մարիաննա ՏԻԳՐԱՆՅԱՆ – արվեստագիտության թեկնածու
Մարգարիտա ՔԱՄԱԼՅԱՆ – արվեստագիտության թեկնածու

Գիտական խմբագիր՝ **Աննա ԱՍԱՏՐՅԱՆ**

Չ 479 Հովհաննես Չեքիջյան - 90: Գիտական նստաշրջանի նյութեր (12-13 հուլիսի, 2019)/ ՀՀ ԳԱԱ արվեստի ին-տ: Խմբ. խորհուրդ՝ Ա.Վ. Աղասյան (նախագահ) և այլք: Գիտ. խմբ.՝ Ա.Ասատրյան. – Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019.- 240 էջ + 16 էջ նկ.:

2019թ. հունվարի 23-ին լրացավ ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 90-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը 2019թ. հուլիսի 12-13-ին գումարեց Հ.Չեքիջյանին նվիրված երկրորդ գիտական նստաշրջանը, որի լիագումար նիստը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, իսկ մյուս երկու նիստերը՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը (Արզական): Ժողովածուն պարունակում է նստաշրջանի մասնակիցների զեկուցումները: Նյութերը ներկայացվում են բնագրով, ըստ ելույթների հաջորդականության: Ժողովածուն հասցեագրված է երաժշտագետներին, երաժիշտ-կատարողներին, արվեստաբաններին, հայագետներին և ընթերցող լայն շրջաններին:

ISBN 978-5-8080-1403-9
© ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, 2019
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ - 90»

Լրացան ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Խորհրդային Միության և Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի երկարամյա գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Հարությունի Չեքիջյանի ծննդյան 90-ամյա և կատարողական գործունեության 75-ամյա հոբելյանները:

Այդ կապակցությամբ 2019 թվականի հուլիսի 12-ին և 13-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ, ՀՀ ԿԳՄՄՆ աջակցությամբ գումարվեց «Հովհաննես Չեքիջյան – 90» գիտական նստաշրջանը¹, որի բացումն ու լիազումար նիստը տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, իսկ մյուս երկու նիստերը՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը (Արզական):

Գիտական նստաշրջանի նպատակն էր համակողմանիորեն ներկայացնել Հովհաննես Չեքիջյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը:

Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Արարատ Աղասյանն** անդրադարձավ ՀՀ ԳԱ ակադեմիայի, մասնավորապես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ Հովհաննես Չեքիջյանի միջև

¹ Գիտական նստաշրջանի մասին տե՛ս **Սարգսյան Լիանա**, Համամարդկային Չեքիջյանը. գիտական նստաշրջան՝ նվիրված մաեստրոյի գործունեությանը, «Հայաստանի Հանրապետություն», 2019, 13 հուլիսի, էջ 5: **Ասատրյան Աննա**, Գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Չեքիջյանի գործունեության ուսումնասիրությանը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» թերթ, 2019, N 7-8, հուլիս-օգոստոս, էջ 1, 4: **Ասատրյան Աննա**, «Հովհաննես Չեքիջյան-90» գիտական նստաշրջանը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, N 3 (657), սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 298-302:

համագործակցությանը, որն ավելի բազմաբնույթ ու համակողմանի է դարձել վերջին տարիներին, և թերթեց այդ համագործակցության առավել նշանակալի էջերը, որոնցից մեկն էլ այս նստաշրջանն է:

Ա.Աղասյանը ներկաներին հիշեցրեց, որ սրանից ուղիղ 5 տարի առաջ՝ 2014 թվականին, այդ նույն դահլիճում երկօրյա գիտական նստաշրջանով նշվեց Մաեստրոյի ծննդյան 85-ամյակը. լսվեցին հետաքրքիր զեկուցումներ, և արդյունքում ընթերցողի սեղանին դրվեց նստաշրջանի նյութերի ժողովածուն: Եվ, կարծես, բարի ու գեղեցիկ ավանդույթ է ձևավորվում. երկօրյա գիտական նստաշրջանով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը նշում է Մաեստրոյի ծննդյան 90-ամյակը: Ա.Աղասյանը հույս հայտնեց, որ տարիներ անց այս նույն դահլիճում, Մաեստրոյի ներկայությամբ, նշվեն Մաեստրոյի ծննդյան 95-ամյա, ապա 100-ամյա հոբելյանները:

«Խիստ խորհրդանշական է, – շարունակեց Ա.Աղասյանը, – որ Ակադեմիական կապելլայի գեղարվեստական ղեկավարի և գլխավոր դիրիժորի հոբելյանը նշվում է հենց մեր ակադեմիայում: Վերջին տարիներին սերտացել է Մաեստրոյի համագործակցությունը ՀՀ ԳԱ ակադեմիայի հետ: Նա ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ է, և դա մեծ պատիվ է մեզ համար: Արվեստի ինստիտուտի գիտական խորհուրդը հրատարակության է երաշխավորել Մաեստրոյի մասին անգլերեն լեզվով գրված ստվարաձևով մենագրություն-պատկերագիրը, որի շնորհանդեսին անպայման կմասնակցենք: Գրքի հեղինակը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանն է:

Ուզում եմ հիշեցնել, որ 2008 թվականին, երբ նշվում էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հիմնադրման 50-ամյակը, Մաեստրոն գործուն մասնակցություն բերեց հանդիսավոր հոբելյանական միջոցառմանը, իր նվերը մատուցեց Արվեստի ինստիտուտին՝ ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում կազմակերպելով հրաշալի համերգ:

2013 թվականին Մաեստրոն առաջին անգամ կատարեց ՀՀ ԳԱԱ նորաստեղծ հիմնը, որի երաժշտության հեղինակը Արամ Սաթյանն է, տեքստի հեղինակը՝ Կարո Վարդանյանը:

Անցած տարի, երբ նշում էինք ՀՀ ԳԱԱ հիմնադրման 75-ամյակը, Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցած հանդիսավոր նիստի եզրափակիչ համերգի առանցքը, նրա յուրահատուկ զարդը դարձավ Մաեստրոյի ղեկավարությամբ կապելլայի ելույթը:

Ակադեմիայի ղեկավարությունը բարձր է գնահատել Մաեստրոյի վաստակը:

2007 թվականին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը Մաեստրոյին շնորհեց ՀՀ ԳԱԱ բարձրագույն պարգևը՝ ՀՀ ԳԱԱ հուշամեդալը, իսկ անցած տարի Մաեստրոն արժանացավ ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչման:

Ինչպես տեսնում ենք, կապերը բազմատեսակ են, և ես կարծում եմ, որ այդ կապերն այսուհետև ավելի կամրապնդվեն ու կխորանան»:

Անդրադառնալով գիտական նստաշրջանին՝ Ա.Աղասյանը նկատեց, որ հիմնական զեկուցողներն Արվեստի ինստիտուտի աշխատակիցներն են, քանի որ կազմակերպիչն Արվեստի ինստիտուտն է: Սակայն զեկուցումներով հանդես կգան նաև Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոսները: Ինչպես և նախորդ անգամ, նյութերը կիրատարակվեն առանձին գրքով:

«Ես ուզում եմ բոլորիս կողմից սրտանց և ջերմորեն շնորհավորել Մաեստրոյին, մաղթել քաջառողջություն և ստեղծագործական նորանոր նվաճումներ», – եզրափակեց իր խոսքն Ա.Աղասյանը և ողջույնի համար խոսքը տրամադրեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանն** իր ողջույնի խոսքում մասնավորապես ասաց. «Հարգարժան պրոֆեսոր՝ մեր հին և նոր բարեկամ (ես նկատի ունեմ Գիտությունների ակադեմիան):

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ:

Թո՛ւյլ տվեք ձեզ բոլորիդ ողջունել Գիտությունների ազգային ակադեմիայում և ցանկանալ գիտաժողովին հետաքրքիր քննարկումներ:

Հսկայական է այն ներդրումը, որ Մաեստրոն բերել է մեր մշակույթի զարգացման, այնուհետև՝ նրա տարածման, աշխարհին ներկայացման ասպարեզում: Ես մի սիմվոլիկ զուգահեռ եմ ուզում անցկացնել:

Մենք ունենք երկու մտավորական, որոնք մեր հայությանը, նրա կարողությունները ներկայացրել են աշխարհին: Առաջինը Վիկտոր Համբարձումյանն է, որն ամբողջ աշխարհին ներկայացրեց մեր գիտությունը, մեր գիտության նվաճումները: Մի շարք դեպքերում Հայաստանը՝ որպես երկիր, պետություն, ճանաչում են որպես Վիկտոր Համբարձումյանի հայրենիք:

Մյուս մտավորականը, որը, փաստորեն, նույն խնդիրն է լուծել և մինչև հիմա շարունակում է լուծել, մեր Մաեստրոն է՝ պրոֆեսոր Չեքիջյանը, որը մեր՝ հայ մշակույթի կոթողները, մեր երգերը, մեր երաժշտության նվաճումները, մեր կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունները ներկայացրել է աշխարհի ժողովուրդներին:

Դժվար է պատկերացնել աշխարհի որևէ երկիր, որտեղ Մաեստրոն իր երգչախմբով ելույթներ ունեցած չլինի»:

Ակադեմիկոս Ռ.Մարտիրոսյանը նկատեց, որ Մաեստրոյին ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում շնորհելը ոչ միայն հարգանքի նշան է եղել, այլև հաշվի է առնվել նրա կատարած հսկայական աշխատանքը:

Հավարտ խոսքի՝ ՀՀ ԳԱԱ նախագահը, ևս մեկ անգամ շնորհավորելով հոբելյարին, ասաց. «Ձեր 95-ամյակը՝ չգիտեմ, բայց 100-ամյակը անպայման պետք է նշենք: Ես, ինչպես նաև այստեղ բոլոր նստածները, համոզված ենք, որ Դուք լինելու եք, մենք էլ՝ կողքից կգանք: Ով հասցրեց՝ կգա: Ով չի հասցնի՝ թող մտածի իր մասին»:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի և նախարարության ամբողջ անձնակազմի

անունից նստաշրջանի մասնակիցներին ողջունեց փոխնախարար, արվեստագիտության թեկնածու **Արա Խզմալյանը**: «Պատիվ եմ համարում այս հնարավորությունը՝ Ձեզ ողջունելու, և անկեղծ ասած՝ այն պատկառելի վաստակը, պատկառելի անունը, որ Դուք ունեք, կաշկանդում է որևէ որակում Ձեզ տալու՝ չափազանց բարդ բան է:

Եվ կարծում եմ միամիտ կլինեք՝ բազմաթիվ գիտական հոդվածներից, բազմաթիվ հրապարակումներից, գիտական աշխատություններից հետո, մասնագիտական լիարժեք արժևորումից հետո փորձել որևէ նոր բան ասել Ձեր վաստակի և Ձեր հեղինակության վերաբերյալ: Անկասկած է, որ առանց Ձեր անձի անպատկերացելի է երգչախմբային արվեստը: Հսկայական դերակատարություն ունեք ընդհանուր առմամբ մշակույթի տիրույթում՝ երգչախմբային արվեստի դիրքավորման առումով:

Ինչպես պարոն Մարտիրոսյանը նշեց, տասնամյակներ շարունակ Դուք եղել եք հայ երգարվեստի, երաժշտարվեստի դեսպանը աշխարհում: Եվ միայն պատկառանքի ու հարգանքի խոսքերից բացի՝ որևէ այլ բան ասել հնարավոր չէ:

Ձեր առկայությունը մեր իրականության մեջ չի սահմանափակվում միայն մասնագիտական վաստակով: Հասարակության նորմալ կենսագործունեության տեսակետից նման հեղինակություններն անհրաժեշտ են: Հասարակությունը պետք է ունենա կողմնորոշիչներ և չափանիշներ: Առանց դրանց մենք շատ խոտոր ճանապարհներ ենք ընկնում. եթե դրանք չլինեն՝ մարդիկ, որոնց փողոցում տեսնելիս մատնացույց են անում:

Եվ այդ իմաստով Դուք կողմնորոշում տվող եք: Այդ իմաստով Դուք մասնագիտական հանրությունը զգաստացնող և սթափեցնող եք:

Եվ հսկայական այդ աշխատանքի և պատասխանատվության հետ մեկտեղ, Ձեր անցած պատկառելի ճանապարհի հետ մեկտեղ չի խամրում Ձեր արտիստիզմը, Ձեր արտիստական փայլը, չի խամրում Ձեր մտքի սթափությունը, նաև՝ հմայքը, և չի խամրում ստեղծագործելու և արարելու Ձեր մեծ մղումը:

Եվ ուրեմն՝ թույլ տվեք ՀՀ ԿԳՄՍ նախարարության ամբողջ անձնակազմի, նաև ՀՀ ԿԳՄՍ նախարար պարոն Արայիկ Հարությունյանի անունից մաղթել Ձեզ արևշատ օրեր, երկարակեցություն, և, տա աստված, որ մենք երկար տարիներ կարողանանք վայելել Ձեր կարևոր ներկայությունը մեր իրականության մեջ:

Շնորհավորում եմ Ձեզ, Մաեստրո»:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի անունից ողջույնի խոսք ասաց և գիտաժողովին հաջողություն մաղթեց բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը**, ով գիտաժողովը բնորոշեց որպես առանձնահատուկ, քանի որ զեկուցողները փորձելու են ընդհանրացնել և արժևորել մի մարդու ստեղծագործական գործունեությունը, որը դարձել է կենդանի լեգենդ, դասական:

Քանի որ կատարողական արվեստի ներկայացուցիչներն ասես յուրատեսակ կամուրջ լինեն կոմպոզիտորի և ունկնդրի միջև, ուստի կարևոր էր լսել նաև Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, կոմպոզիտոր **Արամ Սաթյանի** ողջույնի ու շնորհավորանքի խոսքը: «Դժվար է հավատալ, որ Հովհաննես Չեքիջյանը 90 տարեկան է: Երբ նա բեմ է բարձրանում, մենք տեսնում ենք մի երիտասարդի, որի ձեռքի տակ ոչ միայն հնչում է երաժշտությունը, այլև ստեղծվում են պատկերներ, որոնք կարող է կերտել միայն երիտասարդը: Ես ցանկանում եմ, որ պարոն Չեքիջյանը ապրի երկար տարիներ, որովհետև նրա ամեն մի ելույթը, ամեն մի քայլը մեր կողմից ընկալվում է որպես բարձր արվեստի օրինակ:

Երբ մենք խոսում ենք կոմպոզիտորական արվեստի մասին, միշտ նշում ենք, որ կոմպոզիտորական արվեստն առանց կատարողական արվեստի չի կարող զարգանալ: Երգչախմբային երաժշտության մեջ եթե չլինեին Չեքիջյանի հմտությունները՝ շատ գործեր չէին ստեղծվի:

Այսօր մեր երիտասարդ կոմպոզիտորները նույնպես մեծ ձգտում ունեն ստեղծագործել երգչախմբի համար, որովհետև երբ դիրիժորական վահանակի մոտ է Չեքիջյանը, նա գտնում է այն-

պիսի նրբերանգներ, որոնք շատ անգամ նույնիսկ ստեղծագործող մարդկանց անհասկանալի ու անհասանելի են:

Իզուր չեն ասում, որ ստեղծագործության հաջողության 70-80, ինչու չէ՝ 90 տոկոսը կախված է լավ կատարողից:

Ես շնորհակալ եմ, որ առիթ եմ ունեցել համագործակցելու Հովհաննես Չեքիջյանի հետ: Եվ այն խոսքերը, որ ասում է Հովհաննես Չեքիջյանը, շատ խոր արձագանք են գտնում յուրաքանչյուր ստեղծագործողի մեջ և ստիպում են նոր ձևեր, նոր մոտեցումներ ցուցաբերել իր արվեստում:

Եթե հավանեց Չեքիջյանը, ուրեմն այդ երգչախմբային ստեղծագործությունը հաջողված է:

Շնորհակալություն, Մաեստրո, որ Դուք կաք:

Շնորհակալություն, որ մեր հայ արվեստն ունի այսպիսի նվիրյալ, որովհետև միայն նվիրյալը կարող է այդպես իր ողջ կյանքը նվիրաբերել իր գործին:

Բարի երթ այս գիտաժողովին»:

Լիագումար նիստում տողերիս հեղինակը ներկայացրեց Հովհաննես Չեքիջյանի ներդրումը հայ երաժշտարվեստում՝ եզրակացնելով, որ Հ.Չեքիջյանի շնորհիվ որակապես նոր մակարդակի է բարձրացել երաժշտական կյանքի որակը Հայաստանում, իր գործունեությամբ նա էական նպաստ է բերել Խորհրդային Միությունում խմբերգային և դիրիժորական կատարողական արվեստի զարգացմանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անահիտ Բաղդասարյանը** «Հոգևոր երաժշտությունը Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի կատարողական արվեստում» բանախոսության մեջ նշեց, որ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի՝ կապելլայի չեքիջյանական 58-ամյա շրջանի բազում համերգների ծրագրերում, Հայաստանում և այլուր, մշտապես ընդգրկվել է հոգևոր երաժշտությունը: Մաեստրոն նախընտրում է խոշոր կտավի բազմամաս կանտատա-օրատորիալ ժանրի հոգևոր երկեր՝ կատարելով դրանց գրեթե բոլոր տարատեսակները՝ Պատարագ, Մեսսա, Ռեքվիեմ,

Stabat Mater, Magnificat, Te Deum և այլն: Բանախոսը նկատեց, որ համերգային կյանքում հայտնի հոգևոր ստեղծագործությունների հետ մեկտեղ (Մ.Եկմալյանի և Կոմիտասի բազմաձայն Պատարագները, Մոցարտի և Վերդիի Ռեքվիեմները և այլն) Մաեստրոն անդրադարձել է նաև սակավ հնչող ստեղծագործությունների: Դրանցից են Հայր Արսեն արք. Այտընյանի, Արա Պարթևյանի և Էդգար Մանասի Պատարագները, Հ.Բեռլիոզի և Գ.Ֆորեի Ռեքվիեմները, Զ.Ռոսսինիի, Կ.Շիմանովսկու և Ք.Պենդերեցկու “Stabat Mater” կանտատները և այլն, որոնց կատարումներն ամենուրեք արժանացել են մասնագետների և երաժշտասերների բարձր գնահատականին:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր **Մարգարիտա Ռուխկյանը** ներկայացրեց «Մշակութային ավանդույթների զարգացումը՝ ազգային ինքնության պատվար» թեմայով բանախոսությունը:

Իր կատարողական ողջ գործունեության ընթացքում Մաեստրո Չեքիջյանը հավատարիմ է կոմիտասյան պատգամներին: Եվ պատահական չէ, որ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի հիմնադրման օրվանից՝ 2015 թվականի հունվարի 29-ից, Մաեստրոն նրա գիտական խորհրդի անդամ է: Ավելին՝ կանգնած լինելով այդ թանգարանի գաղափարի և ստեղծման ակունքներում՝ նա մեծապես կարևորել է թանգարանի ստեղծումը Երևանում: Իսկ մինչ այդ՝ 2011 թվականին, եղել է Կոմիտասի անվան Առաջին միջազգային փառատոնի պատվավոր հյուրը և ընտրվել մրցանակային ժյուրիի պատվո նախագահ, փառատոնի «գեղարվեստական մասի ձևավորման գործին աջակցելու և վերջինիս նկատմամբ նվիրվածություն ցուցաբերելու համար» 2011թ. օգոստոսի 7-ին պարգևատրվել Պատվոգրով:

Լիագումար նիստը եզրափակեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի դոկտորանտ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Լուսինե Սահակյանը**՝ «Կո-

միտասի խմբերգերը չեքիջյանական մեկնաբանությամբ» զեկուցմամբ:

Այնուհետև **Հովհաննես Չեքիջյանն** իր երախտագիտությունը հայտնեց՝ այս էլ երկրորդ անգամ նման պատվի արժանանալով՝ իրեն նվիրված ակադեմիական գիտաժողովի կազմակերպման համար: «Ես պերճախոս չեմ, շատ խոսել չեմ սիրում: Բայց ես հիմա իմ երախտագիտությունն եմ հայտնում այն բանի համար, որ արդեն երկրորդ անգամ արժանանում եմ նման փառքի:

Անչափ երախտապարտ եմ ես Ձեզ:

Շնորհակալ եմ:

Լինելով արվեստի մարդ՝ ես գիտեմ, որ այսպիսի գիտաժողովի արժանանալը քիչ բան չէ, որովհետև գիտաժողովը սովորաբար լինում է գիտության ասպարեզում գործունեություն ծավալած մարդկանց մասին, և երևի աննախադեպ բան է, որ արվեստի աշխատողը այսպիսի փառքի է արժանանում:

Դրա համար ես հայտնում եմ իմ երախտագիտությունը:

1961 թվին, որ եկա Հայաստան, ինձ ոչ ոք չէր ճանաչում: Ինչի համար եմ սա ասում, որովհետև ինչ որ արել եմ՝ իմ քրտինքով եմ արել, «մեջք» չեմ ունեցել:

Եվ փառք Աստծո, որ կարողացել եմ խմբերգային արվեստը միլիոնավոր ունկնդիրների առաջ ներկայացնել և աշխարհում շատ արվեստի կենտրոններում ցուցադրել հատկապես Կոմիտասի մեծությունը: Դրանով իսկ երջանիկ եմ զգում ինձ:

Այնպես եմ անում, այնպես եմ արել ու պետք է, երևի, անեմ, ինչքան Աստված ինձ շնորհի կյանք, Կոմիտասի արվեստը ցուցադրել լավագույն ձևով, որ Կոմիտասին հավանի ոչ միայն հայը, այլև ճապոնացին, հունգարացին կամ անգլիացին:

Այդպիսի բարձր մակարդակով ուզում եմ ներկայացնել, և, երևի, ինչ-որ չափով դա հաջողվել է ինձ:

Իմ գործունեությունը միայն խմբերգային արվեստը չէ, որովհետև, ինչպես անդրադարձան այստեղ, 69 սիմֆոնիկ նվագախմբի հետ գործ եմ ունեցել: Ոչ թե 69 անգամ, այլ 69 սիմֆոնիկ նվագախմբի, որոնց թվում՝ աշխարհում հինգերորդ տեղը գրավող՝

Մրավինսկու նվագախումբը, որի հետ ունեցել եմ 73 համերգ: Եթե դիրիժորն իր կյանքում ընդամենը մեկ անգամ է այդ նվագախմբի առջև կանգնում, դա արդեն մեծ փառք ու պատիվ է: Իսկ ես բախտ եմ ունեցել 8 անգամ միայն Բեռլինոյ՝ «Requiem» չափ տալ Լենինգրադում: 96 համերգ եմ ունեցել ես Լենինգրադում: Քիչ բան չէ:

Շնորհակալ եմ, որ Ձեր ուշադրությանն արժանացել եմ, երախտապարտ եմ:

Ինձ հավանողները, սիրողները ուզում են ինձ հարյուր տարեկան տեսնել:

Ես չեմ կարող խոստանալ, բայց կաշխատեմ:

Շնորհակալ եմ»:

Այնուհետև գիտական նստաշրջանի նիստերը շարունակվեցին Արզականում՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը:

Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ համերգներով շրջագայել է Հայաստանի սահմաններից դուրս 184 քաղաքներում՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, Լիբանանում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Սիրիայում, Շվեյցարիայում, Թուրքիայում, Արգենտինայում, Ավստրալիայում... 869 համերգների ընթացքում հանդես է եկել աշխարհի 69 առաջնակարգ նվագախմբերի հետ:

55 տարի առաջ՝ 1964-ի նոյեմբերի 24-ին, 25-ին, 26-ին, 27-ին 28-ին և 29-ին, տեղի ունեցավ Հ.Չեքիջյանի դեբյուտը ԽՍՀՄ մայրաքաղաք Մոսկվայում: Մոսկովյան դեբյուտից հետո անցած 55 տարիների ընթացքում Մոսկվայում Մաեստրոն ունեցել է 90 համերգ: Հենց Մոսկվայում տեղի ունեցան վոկալ-սիմֆոնիկ մի շարք ստեղծագործությունների, այդ թվում՝ Բեռլինոյի «Requiem»-ի, Գաբրիել Ֆորեի «Requiem»-ի, Գունոյի «Մահ և կյանք» օրատորիայի, Բեռլինոյի «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկական սիմֆոնիայի համափութենական պրեմիերաները: Չեքիջյանի մոսկովյան հյուրախաղերին էր նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գի-

տաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մարիաննա Տիգրանյանի** զեկուցումը:

1964թ. հոկտեմբերի 29-ին, 30-ին, 31-ին և նոյեմբերի 1-ին կապելլան Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ «նվաճեց» Լենինգրադը: 1964-ին սկիզբ առած բարեկամությունը Լենինգրադի ունկնդրի հետ շարունակվեց հետագայում. Մաեստրո Չեքիջյանի ղեկավարությամբ երգչախումբը 97 համերգ է ունեցել Լենինգրադում: «Հովհաննես Չեքիջյանի և հայկական կապելլայի լենինգրադյան հյուրախաղերը. Լենինգրադում Մաեստրոյի առաջին հյուրախաղերի 55-ամյակի առթիվ» զեկուցման մեջ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ **Նաիրա Մադոյանն** անդրադարձավ լենինգրադյան այն համերգներին, որոնցում Մաեստրո Չեքիջյանն ու նրա ղեկավարած կապելլան իրականացրել են տարբեր ստեղծագործությունների համամիութենական պրեմիերաները:

Իսկ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի դոկտորանտ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Աննա Հարությունյանը** ներկայացրեց Մաեստրոյի արտասահմանյան համերգային շրջագայությունների լեհաստանյան էջը:

2019թ. մայիսի 14-ին Ա.Խաչատրյան համերգասրահում Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի և Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ, Հովհաննես Չեքիջյանի փայլուն ղեկավարությամբ հնչեց Կառլ Օրֆի “Carmina Burana” կանտատը, որի չեքիջյանական մեկնաբանության առանձնահատկությունների մասին էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր և երգեհոնահար **Հովհաննես Մանուկյանի** զեկուցումը:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի տնօրեն, արվեստագիտության թեկնածու **Սարգիս Բալբաբյանի** զեկուցումը նվիրված էր Հովհաննես Չեքիջյանի և նվագախմբի բեղմնավոր

համագործակցությանը: Բանախոսը քննության առավ երգչախմբային արվեստին վերաբերող մի քանի գեղարվեստական ու տեխնիկական հարցեր, որոնցով առանձնանում է Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը, ինչպես նաև ներկայացրեց երգչախմբի և նվագախմբի համագործակցության առաջիկա նախագծերը:

1982թ. Հովհաննես Չեքիջյանը համատեղությամբ նշանակվեց Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրեկտոր՝ պաշտոնավարելով մինչև 1987-ը և ծավալելով իր արդյունաշատ գործունեությունը օպերային երաժշտության բնագավառում ևս՝ մեծապես նպաստելով թատրոնի խաղացանկի հարստացմանը: Խմբավար և սիմֆոնիկ դիրիժոր Հ.Չեքիջյանը հանդես է գալիս որպես օպերային դիրիժոր ևս: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր **Նազենիկ Սարգսյանն** անդրադարձավ Հովհաննես Չեքիջյանի գործունեությանը Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում: Բանախոսն իր զեկուցման վերջում իրավացիորեն նկատեց, որ եթե ժամանակին Չեքիջյանը չհեռանար օպերային թատրոնից, ապա այսօր մենք կունենայինք այլ մակարդակի ու որակի օպերային թատրոն:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու, արվեստաբան **Մարգարիտա Քամալյանը** «Հովհաննես Չեքիջյանը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» զեկուցման մեջ մասնագիտական քննության ենթարկեց նկարիչներ Ռուդոլֆ Խաչատրյանի, Մարկոս Արզումանյանի, Արամ Սարիբեկյանի, Լիլիա Կարճիկյանի և Միքայել Հարությունյանի, ռեժիսոր, ծաղրանկարիչ Վարդան Աճեմյանի և քանդակագործներ Լևոն Թոքմաջյանի, Ալիս Մելիքյանի ու Էդուարդ Շախիկյանի՝ մեծանուն դիրիժոր Հովհաննես Չեքիջյանի վառ անհատականությունը հավերժացնող ստեղծագործությունները: Բանախոսը ներկայացրեց նաև Մաեստրոյի տաղանդով հիացած անվա-

նի կերպարվեստագետներ Երվանդ Քոչարի, Մարտիրոս Սարյանի, Հակոբ Հակոբյանի, Գրիգոր Խանջյանի բարձր գնահատանքի խոսքերը:

Վերջում տողերիս հեղինակն ամփոփեց նստաշրջանի արդյունքները, որից հետո Մաեստրոն մատուցեց իր անակնկալը. գիտական նստաշրջանի ունկնդիր՝ կապելլայի արտիստների ոչ մեծաթիվ խմբի կատարմամբ հնչեց Մակար Եկմալյանի «Ով, հայոց աշխարհ» ա կապելլա խմբերգը, որից հետո իր երախտագիտության խոսքն ասաց Մաեստրոն:

Նկատենք, որ Մ.Եկմալյանի այս խմբերգը Մաեստրոյի ղեկավարությամբ կապելլան հնչեցրել էր 2007 թվականի մայիսի 16-ին՝ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հիմնադրման 70-ամյակին նվիրված գիտաժողովի ավարտին՝ ՀՀ ԳԱԱ նախագահության շենքի կամարների ներքո²:

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

² Տե՛ս **Ասատրյան Աննա**, ՀՀ ԳԱԱ հուշամեդալը՝ Հովհաննես Չեքիջյանին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2007, № 3 (620), էջ 271:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ,
Երաժշտության բաժին վարիչ,
ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏՈՒՄ

«Դիրիժոր Չեքիջյանը միատեսակ վիրտուոզությամբ ու եռանդով է աշխատում և՛ նվագախմբի, և՛ երգչախմբի հետ, նրա համերգներում երաժշտությունը հնչում է արտասովոր վառ, հյութեղ, իմաստային առումով՝ թափանցիկ, ունկնդրին հասկանալի: Նրանում զգացվում է արվեստագետի մտքի ուժը, որ ձգտում է թափանցել մարդկային կեցության ամենաբարդ հարցերի մեջ:

Հայաստանի պետական կապելլայի արտիստների և նրա գեղարվեստական ղեկավարի ու դիրիժորի վարպետությունը ոչ միայն ուրախություն է պարգևում իր ունկնդիրներին՝ նրանց մոտ առաջ բերելով հոգևոր բարձր տրամադրություն, այլև մեծ ավանդ բերում սովետական վոկալ արվեստի զարգացման մեջ և, խմբերգային երգեցողության մեջ ներգրավելով ունկնդիրների ամենալայն զանգվածներ՝ ցանում է այն բարին, որը տալիս է հրաշալի ծիլերը՝ ժողովրդի իսկական երաժշտական կուլտուրա, մարդու հարստացված սերը ֆոլկլորային և դասական ստեղծագործությունների հանդեպ»¹:

Իվան ԿՈՉԼՈՎՍԿԻ
Երգիչ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ,
Սոցիալիստական աշխատանքի հերոս

Դժվար է գուշակել, թե ինչպես կդասավորվեր ՀՀ ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիջյանի ստեղծագործական ճակատագիրը, եթե նա 1961 թվականին չթողներ իր ծննդավայրը՝ Ստամբուլը, որտեղ ծնավորվել էր որպես անհատականություն և երաժիշտ, ու չտեղափոխվեր հայրենիք՝ Խորհրդային

¹ Козловский Иван, Песнь о жизни. На соискание Государственной премии СССР, “Правда”, 7 августа, 1975.

Հայաստան: Հավանաբար՝ այսօր նա կլիներ թուրքական կատարողական արվեստի կարկառուն ներկայացուցիչներից մեկը, թուրքական դիրիժորական արվեստի առաջին խոշոր ներկայացուցիչը՝ դիրիժոր Գյուրեր Այկալից շատ առաջ, գուցե՝ թուրքական դիրիժորական արվեստի սկզբնավորողը: Եվ դա կընկալվեր միանգամայն օրինաչափ. չէ՞ որ նույնպես պոլսեցի Տիգրան Չուխաճյանը, ով իր ողջ կյանքում ապրեց և ստեղծագործեց Թուրքիայում, այսօր իրավամբ համարվում է թուրքական օպերետի (և ոչ միայն օպերետի) սկզբնավորողը: Հավանաբար՝ այսօր Չեքիջյանը կլիներ թուրքական ամենանշանավոր նվագախմբերից մեկի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը...

Դժվար է գուշակել նաև, թե ինչպես կդասավորվեր Հովհաննես Չեքիջյանի ստեղծագործական ճակատագիրը, եթե նա 1961 թվականին հաստատվեր Խորհրդային Միության մայրաքաղաք Մոսկվայում, որտեղից հրավեր էր ստացել և որտեղ նրան, որպես տաղանդավոր և հեռանկարային երաժշտի, առաջարկվեց աշխատանք և բնակարան, ու չտեղափոխվեր հայրենիք՝ Խորհրդային Հայաստան: Խորհրդային բարձրակարգ դիրիժորների կատարողական ընտանիքի լիիրավ անդամ Հ.Չեքիջյանը հետագայում, Խորհրդային Միության փլուզումից հետո, հավանաբար կդառնար ռուսական դիրիժորական արվեստի ականավոր ներկայացուցիչներից մեկը: Հավանաբար՝ կլիներ մոսկովյան կամ լենինգրադյան նվագախմբերից մեկի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը...

Երկու դեպքում էլ՝ մենք ստիպված կլինեինք հաղորդակցվել նրա արվեստին հեռակա՝ տեսագրությունների ու ձայնագրությունների միջոցով, նաև՝ հայրենիքում տեղի ունեցող հյուրախաղերի ընթացքում:

Սակայն նա ընտրեց իր Հայրենիքը՝ եկավ Երևան: Եկավ Հայաստան՝ իր արվեստով ծառայելու հարազատ ժողովրդին ու իր հայրենիքին:

Երևան տեղափոխվելուց ամիսներ անց նա խոստովանեց. «Իմ անկեղծ ցանկութիւնս, իմ սրտագին մաղթանքս է, որ արտա-

սահմանի մեր բոլոր տաղանդաւոր արուեստագէտները գան խմբովի հայրենի երկրին մէջ՝ ի շահ իրենց ստեղծագործական վերելքին եւ ի փառս մեր ժողովուրդին: Որովհետեւ հայրենի երկրին մէջ միայն հայ արուեստագէտը ունի ծաղկման ամենալայն հնարաւորութիւնները: Միայն հայրենի երկրիդ մէջ, հայրենի ժողովուրդիդ ծոցին մէջ, ներշնչումդ կրնայ ըլլալ անմիջական եւ հարազատ, որովհետեւ ամէն օր շուրջդ կը տեսնես հայրենիքդ եւ ժողովուրդդ, կը լեցուիս անոնցմով, վերացական ապրումներդ այդպէսով կը դառնան շոշափելի բաներ, որոնք աւելի եւս կ'իմաստաւորեն զգացումներդ եւ մտածումներդ»²:

Ի տարբերություն հայ երաժշտարվեստի խոշոր ներկայացուցիչների, ովքեր հայրենիքի երաժշտական շինարարությանն ակտիվորեն մասնակցելու նպատակով 1920-ականներին Հայաստան տեղափոխվեցին Սովետական Հայաստանի կառավարության և անձամբ Ալեքսանդր Մյասնիկյանի հրավերով, հայրենիքում հաստատվելու վճիռը Հ.Չեքիջյանը կայացրեց ինքն անձամբ:

Նա եկավ, որովհետև չէր կարող չգալ, որովհետև նրա պրոֆեսիոնալ ներկայությունն անհրաժեշտ էր իր ժողովրդին ու հայրենիքին:

Եվ նա մնաց հավատարիմ իր ուխտին՝ շատ-շատերի պես չլքեց իր հայրենիքը: Մի՞թե չէր կարող երաժիշտներից շատ-շատերի պես հեռանալ Երևանից, բնակություն հաստատել որևէ երկրում, գտներ իր համար տաքուկ տեղ և հեռվից խրատներ տար մեզ՝ հայաստանաբնակ հայերիս:

Չարեց, որովհետև չէր կարող թողնել իր պատմության դժվարին օրերն ապրող հայրենիքը, ինչպես որ չես կարող անտերության մատնել արդեն տկար ու քո օգնության կարիքը զգացող ծնողիդ: Չարեց, որովհետև հայրենասիրությունը նրա համար ոչ թե ամպագողգող ու դատարկ խոսքերն են, այլ՝ պրոֆեսիոնալ բարձրագույն մակարդակով կատարած գործը:

² **Դարեան Արմեն**, Հայրենիքին մէջ. Յովհաննէս Չեքիջեանի հետ, «Յառաջգրական», հուլիս, 1962, էջ 6-7:

Եվ առհասարակ՝ Հ.Չեքիջյանի անցած մարդկային, կատարողական, կազմակերպական, մանկավարժական ու երաժշտահասարակական ուղին կարող է և պետք է օրինակ ծառայի մեր երիտասարդության համար: Օրինակ ծառայի, թե ինչպիսին պիտի լինի արվեստագետը. ոչ թե միշտ ընդդիմադիր կեցվածքով, այլ պրոֆեսիոնալ բարձր մակարդակով իր գործի կատարումով: Մարդ, ով իր ողջ գործունեությամբ ապացուցում է, որ հայ ժողովրդի հզորությունը նրա միասնականության մեջ է, ինչպես որ միասնական է նրա՝ արդեն շուրջ 60 տարի ղեկավարած հայկական կապելլան...

Անցած տարիների հեռվից փորձենք ձևակերպել հայ երաժշտարվեստում Հ.Չեքիջյանի ներդրումը՝ քննության առնելով միայն նրա կատարողական գործունեությունը, որն իսկապես, ծանրակշիռ է ու բազմակողմանի:

Անկասկած՝ նրա կատարողական, կազմակերպական, մանկավարժական ու երաժշտական-հասարակական գործունեության շնորհիվ նոր մակարդակի է բարձրացել երաժշտական կյանքի որակը Հայաստանում, իր դիրիժորական բարձրակարգ արվեստով նա էական նպաստ է բերել Խորհրդային Միությունում խմբերգային և դիրիժորական կատարողական արվեստի զարգացմանը: Դրա վառ վկայությունն է այն հանգամանքը, որ կատարողական բարձր արվեստի և ստեղծագործական ծանրակշիռ նվաճումների համար Հայաստանի պետական երգչախումբը 1969 թվականին արժանացավ «Ակադեմիական» կոչմանը, 1975-ին դարձավ Հայաստանի վաստակավոր կոլեկտիվ, իսկ 2012-ին ստացավ «Ազգային» կարգավիճակ:

Հ.Չեքիջյանի ղեկավարած երգչախումբը միակն է համաշխարհային երգչախմբային արվեստում, որը բեմում երգում է առանց նոտաների՝ անգամ խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարման ժամանակ՝ ղեկավարվելով «բեմ բարձրացողը նոտաներն իր սրտում ու մտքում պետք է ունենա և ոչ թե ձեռքին» չեքիջյանական նշանաբանով:

Դեռևս 55 տարի առաջ՝ 1964 թվականին, Հ.Չեքիջյանի և հայկական կապելլայի՝ մերձբալթյան հանրապետություններում տե-

ղի ունեցած համերգային առաջին շրջագայության ընթացքում, երգչախմբային դիրիժոր, կոմպոզիտոր, մանկավարժ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, Լենինյան և ԽՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր Գուստավ Էռնեստսոն իրավացիորեն նկատել էր. «Էստոնիա» համերգասրահի այցելուներին սպասում էր հաճելի անակնկալ, ես կասեի՝ «համերգային ռումբ»՝ Հայաստանի պետական երգչախմբի ելույթը: Ինտոնացիոն հարստությունը, ֆրազավորման հստակությունը հնարավորություն են ընձեռում հաղորդելու ունկնդրին այն, ինչն անհնար է ամրագրել նոտաներով: Կապելլայի կատարմամբ հնչում են ոչ միայն տեքստը, այլև ենթատեքստը, ոչ միայն տողերը, այլև այն, ինչ գտնվում է տողերի միջև, տողից վերև ու տողատակին:

Կապելլայի գլխավոր դիրիժոր և գեղարվեստական ղեկավար Հովհաննես Չեքիջյանը խիստ ինքնատիպ, օժտված երաժիշտ է: Հ.Չեքիջյանը կայծակի արագությամբ է արձագանքում երգչախմբի այս կամ այն մասում նկատվող ամենափոքր տատանումին կամ հնչերանգին: Չեքիջյանի ղեկավարությամբ խումբը հիշեցնում է սնդիկով լեցուն սրվակ, որն անդրադարձնում է ամենափոքր շեղումն իսկ: Յուրաքանչյուր ակնթարթ դիրիժորը պատրաստ է երգչախմբի ղեկավարման վահանակին միացնելու նորանոր նրբերանգներ. այդ ամենը կատարվում է էլեկտրոնային վիրտուոզությամբ:

...Ուղեծիր է ելել երաժշտական նոր նավ, որի անձնակազմը և հրամանատարը եռանդուն են, լի ավյունով և խիզախ թռիչքներով»³:

Հովհաննես Չեքիջյանը հայ դիրիժորներից, նաև՝ կատարողներից միակն է, ով ԽՍՀՄ պետական մրցանակի է արժանացել հենց կատարողական գործունեության համար: ԽՍՀՄ այդ բարձրագույն պարգևը տաղանդավոր երաժշտին շնորհվեց 1975 թվականին՝ «1971-1973 թվականների համերգային ծրագրերի համար»:

³ **Էռնեստսո Գ.**, Բարձր թռիչք ձեզ, «Սովետական Հայաստան», 3 նոյեմբերի, 1964: **Ernesaks G.**, Meeldiv Üllatus, “Rahva Hääl”, 29 oktoobril, 1964.

այդ տարիներին Մանեստրոյի ղեկավարությամբ հայկական կապելլան բազմաթիվ համերգներով հանդես էր եկել Ռուսաստանում, Ուկրաինայում, Մոլդավիայում, Լիտվայում, Վրաստանում և Ադրբեջանում⁴:

Փորձենք անդրադառնալ Ամենայն հայոց մանեստրոյի կատարողական գործունեության երկու հիմնական ուղղություններին⁵:

Որպես խմբավար՝ նա աշխարհին է ներկայացրել հայ երգչախմբային երաժշտությունը: Այս տեսակետից Մանեստրոն հաջողությամբ շարունակում է Կոմիտասի գործը: Կոմիտասը հայ երաժշտության քարոզիչն էր՝ հայ երգի առաքյալն ինչպես օտարների, այնպես էլ հենց հայերի համար: Նրա կյանքի նպատակներից էր համոզել աշխարհին, որ հայն ունի իր ինքնուրույն երաժշտությունը: Կոմիտասը հայ երգը տարածեց նաև հայերի շրջանում և «ստիպեց» նրանց, որ սիրեն այն: Նա իր ժողովրդին վերադարձրեց սեփական երգը: Մինչ այդ՝ Հայաստանից դուրս, անգամ հայ մտավոր կյանքի կենտրոններում՝ Կ. Պոլսում, Թիֆլիսում, Վենետիկում, Մոսկվայում, Բաքվում, հայ ժողովրդական երգը քիչ էր ծանոթ: Երգվում էին հիմնականում «ազգային» երգեր, որոնց բառերը հայկական էին՝ հայրենասիրական, բայց երաժշտությունը մեծ մասամբ կտորներ էին եվրոպական օպերաներից կամ էլ փոխառված ծանոթ եվրոպական երգերից («Արի, իմ սոխակ», «Մեր հայրենիք» և այլն): Իր կատարողական ողջ գործունեության ընթացքում Մանեստրո Չեքիջյանը հավատարիմ է կոմիտասյան պատգամներին:

Հ.Չեքիջյանի երկացանկում կարևոր տեղ են գտել ինչպես հայ դասականների՝ Տիգրան Չուխաճյանի, Կոմիտասի, Մակար Եկմալյանի, Արմեն Տիգրանյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Արամ Խաչատրյանի և ուրիշների, այնպես էլ ժամանակակից և

⁴ Տե՛ս Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

⁵ Հ.Չեքիջյան-օպերային դիրիժորի գործունեությանը չենք անդրադառնում, քանի որ սույն գիտական նստաշրջանի զեկուցումներից մեկը՝ արվեստագիտության դոկտոր Նազենիկ Սարգսյանի զեկուցումը, նվիրված է հենց այդ թեմայի լուսաբանմանը:

սփյուռքահայ կոմպոզիտորների՝ Բարսեղ Կանաչյանի, Առնո Բաբաջանյանի, Ալեքսանդր Հարությունյանի, Ալան Հովհաննեսի, Էդվարդ Միրզոյանի, Էդգար Հովհաննիսյանի, Գրիգոր Հախինյանի, Ժան Ալմուխյանի, Արամ Սաթյանի, Կոնստանտին Պետրոսյանի, Աշոտ Բաբայանի և շատ-շատերի ստեղծագործությունները:

Հ.Չեքիջյանը հայ ժամանակակից կոմպոզիտորների մի շարք վոկալ-սիմֆոնիկ և խմբերգային ստեղծագործությունների փնտրված մեկնաբանն է...

Որպես սիմֆոնիկ դիրիժոր, հայրենիքում՝ Երևանում և Հայաստանի շրջկենտրոններում ու շրջաններում, Մաեստրոն ներկայացրել է ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան դասական և ժամանակակից երաժշտությունը, այդ թվում՝ Բախի, Հենդելի, Մոցարտի, Բեթհովենի, Շոպենի, Բելինիի, Ռոսինիի, Վերդիի, Վագների, Մենդելսոնի, Բրամսի, Բեռլիոզի, Գունդի, Ֆորեի, Սմետանայի, Գերշվինի, Գլինկայի, Բորոդինի, Մուսորգսկու, Չայկովսկու, Դմիտրի Շոստակովիչի, Տիխոն Խրեննիկովի, Գեորգի Սվիրիդովի, Դմիտրի Կաբալևսկու, Ռոդիոն Շչեդրինի, Յան Ֆրենկելի, Քշիշտոֆ Պենդերեցկու և շատ-շատերի ստեղծագործությունները:

Ընդ որում երկու դեպքում էլ Մաեստրոն դառնում է բազմաթիվ ստեղծագործությունների առաջին ու անգերազանցելի մեկնաբանը:

Նրա ղեկավարությամբ հայկական կապելլան ստեղծել է բազմազան, բազմաոճ ու հարուստ երկացանկ: Բնագրի լեզվով՝ 27 լեզուներով կատարվել են ավելի քան 700, այդ թվում՝ խոշոր կտավի ավելի քան 40 ստեղծագործություններ, որոնցից 15-ը ներկայացվել են Խորհրդային Միությունում առաջին անգամ:

Այսօր Հովհաննես Չեքիջյանը, ով էականորեն բարձրացրել է հայկական երգչախմբային արվեստի մակարդակը, հայաստանյան բոլոր երաժշտական միջոցառումների հանդիսատեսի կողմից խիստ ցանկալի ու շատ սպասված մասնակիցն է:

Իսկ ամեն ինչ սկսվեց 1961 թվականին, երբ Փարիզի «Ecole normale de Musique» կոնսերվատորիայի և Ստամբուլի կոնսերվատորիայի ասպիրանտուրայի շրջանավարտ, Թուրքիայի միակ պրո-

Ֆեսիոնալ երգչախմբի՝ Ստամբուլի պետական կապելլայի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, Ստամբուլի պետական օպերային թատրոնի երաժշտական ղեկավար Հ.Չեքիջյանը ժամանեց Հայաստան և սեպտեմբերի 5-ին ստանձնեց Հայաստանի պետական երգչախմբի ղեկավարությունը: Նրա գործունեությունը նշանավորեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի տարեգրության Ոսկեդարը, երբ հայկական կապելլան հասավ Խորհրդային Միության լավագույն երգչախմբերի մակարդակին՝ որոշ առումներով գերազանցելով նրանց:

Նոյեմբերի 27-ին տեղի ունեցավ հայրենիքում Մասստրոյի անդրանիկ համերգը, որի առաջին բաժնում հնչեցին Կարա-Մուրզայի «Ալագյազ», «Գացեք, տեսեք» խմբերգերը, Կոմիտասի «Գութանի երգը», «Ինչու Բինգյուլը մտար», «Երկրագործի երգը» (մենակատարներ՝ Աննա Սարաջևա (սոպրանո), Մելինե Միրուքյան (կոնտրալտո), Հովհաննես Յաղջյան (տենոր) և Հովհաննես Քարաջյան (բաս), «Կալի երգը» (մենակատար՝ Էդվարդ Բաղդասարյան) և հարսանեկան երգեր՝ «Փեսին արդուզարդը», «Մաղթանք», «Փեսին գովքը», «Կատակերգ», «Շուրջպար» (մենակատար՝ Հարություն Քարաջյան)⁶: Համերգի առաջին բաժինը եզրափակվեց Կարո Զաքարյանի՝ ծրագրից դուրս հնչած քնարական խմբերգով⁷:

«Բեմահարթակի վրա սպիտակ ու սև գույներ է ձգել Հայաստանի պետական երգչախումբը, որի համերգն այսօր վարում է նրա նոր գեղարվեստական ղեկավարը՝ Հովհաննես Չեքիջյանը,- գրեց երգչախմբի նախկին խմբավար Զեյնա Գյոզալյանը: Դահլիճում տարածվում են Կոմիտասի և Կարա-Մուրզայի երգերի հոյակապ հնչյունները, հետո թնդում են ծափահարությունները, իսկ ծափերի հետ թունդ է առնում հայրենադարձ երաժշտի սիրտը, նրա հուզումներն այսօր ուրիշ են, անսովոր: Սովետական Հայաստանի մայրաքաղաքի երաժշտական հասարակայնությունը առաջին անգամ իր գոհունակության արտահայտությունն է հղում հայրենադարձ դիրի-

⁶ Համերգի ծրագիրը, Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

⁷ Տե՛ս **Тэрян М.** Дебют талантливого дирижера, «Коммунист», 30 ноября, 1961.

Ժոր-խմբավարին»⁸:

Փորձենք ամփոփ ու համառոտ ուրվագծել Հ.Չեքիջյանի կատարողական գործունեության հիմնական ուղղություններն ու նվաճումները:

1. Հովհաննես Չեքիջյանը՝ հայ խմբերգային արվեստի անգերազանցելի մեկնաբան

1.1. Հովհաննես Չեքիջյանը և Կոմիտասի խմբերգային արվեստը

Խմբավար-Չեքիջյանի գործունեության կարևորագույն նվաճումը կապվում է Կոմիտասի ստեղծագործության մեկնաբանության հետ: Իր ողջ գործունեության ընթացքում նա մի կողմից՝ դարձավ կոմիտասյան խմբերգային արվեստի՝ աշխարհիկ և հոգևոր խմբերգերի, նաև՝ «Պատարագի» լավագույն ու անգերազանցելի մեկնաբանը, իսկ մյուս կողմից՝ Կոմիտասի խմբերգային արվեստի անդուլ պրոպագանդիստը Հայաստանում և աշխարհում: Իր համերգային գործունեության բացառիկ աշխարհագրության սահմաններում նա կոմիտասյան խմբերգերը ներկայացրել է ոչ միայն a cappella համերգների ընթացքում, այլև վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարման ժամանակ՝ ծրագրից դուրս, հանդիսատեսի խնդրանքով:

Մասնատրոն համերգներով շրջագայել է Հայաստանի սահմաններից դուրս 184 քաղաքներում՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, Լիբանանում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Սիրիայում, Շվեյցարիայում, Թուրքիայում, Արգենտինայում, Ավստրալիայում ևն: 869 համերգների ընթացքում (դրանցից 44-ը՝ Ֆրանսիայում, 97-ը՝ Լենինգրադում) մշտապես հնչեցրել

⁸ **Գյոզալյան Ջեյմս**, Չեքիջյանն է խմբավարը, «Սովետական արվեստ», 1961, N 12, էջ 63:

է կոմիտասյան խմբերգային երաժշտությունը⁹:

Ինչպես վերը նշեցինք՝ 1961թ. նոյեմբերի 27-ին Հայաստանում տեղի ունեցած Հ.Չեքիջյանի առաջին համերգի ծրագրում Կոմիտասի ստեղծագործություններն էին՝ «Գութանի երգը», «Ինչու Բինգյոլը մտար», «Երկրագործի երգը», «Կալի երգը» և հարսանեկան երգեր՝ «Փեսին արդուզարդը», «Մաղթանք», «Փեսին գովքը», «Կատակերգ», «Շուրջպար»¹⁰:

«Առաջին իսկ համարներից զգացվում են դիրիժորի նուրբ ճաշակը և կատարողական լուրջ վարպետությունը, մեծ խնամքով և յուրահատուկ մեկնաբանությամբ կատարվում են հայ երգի մեծ վարպետ Կոմիտասի «Գութանի երգը», «Ինչու Բինգյոլը մտար», «Երկրագործի երգը» և այլ գործեր: Խմբավարը կարողացել է երգչախմբի կատարողականության և հնչողության մեջ հասնել ծայնների միաձուլության, մաքուր ինտոնացիայի, դրսևորել բազմազան երանգավորում»¹¹:

«Ծրագրի առաջին իսկ համարի կատարումից կարելի էր եզրակացնել,- երիտասարդ դիրիժորի դեբյուտի մասին համերգից երեք օր անց երևանյան «Կոմունիստ» թերթի նոյեմբերի 30-ի համարում լույս տեսած գրախոսականում գրում է արվեստագիտության թեկնածու Միքայել Տերյանը,- որ մեր առջև է տաղանդավոր, բարձր կուլտուրայի տեր, վառ անհատականությամբ, երաժշտական մեծ զգացողությամբ, ֆրագի և նրբերանգների բոլոր առանձնահատկությունները նրբորեն արտահայտող դիրիժորական ժեստով օժտված նրբաճաշակ խմբավարը: Նրա ինքնատիպ, համոզիչ մեկնաբանման մեջ մենք նորովի, թարմ ընկալեցինք Կարա-Մուրզայի ու Կոմիտասի վաղուց հայտնի և յուրաքանչյուրիս հոգեհարազատ երգերը, որոնցից մի քանիսը մեզանում հնչեցին առաջին ան-

⁹ Հայաստանից դուրս՝ աշխարհի քաղաքներում Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի ելույթների ցանկը տե՛ս Հավելված 2-ում:

¹⁰ Համերգի ծրագիրը, Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

¹¹ **Գյոզալյան Զեյնա**, Չեքիջյանն է խմբավարը, «Սովետական արվեստ», 1961, N 12, էջ 64:

գամ: Դրանց կատարումը կրակոտ էր, նպատակամղված, մեծ հուզականությամբ և քնարական զգացմունքայնությամբ հագեցած»¹²:

Մաեստրոյի հետ ի մոտո շփված մարդկիկ գիտեն, որ նա առանձնապես չի սիրում հրապարակային ճառեր ասել ու ելույթներ ունենալ, խոսել, հարցազրույցներ տալ: Նա իսկական Արտիստ է և նրա տեղը բեմն է: Սակայն, այդուամենայնիվ, նա մամուլում բազմիցս հանդես է եկել Կոմիտասի մասին հոդվածներով:

Հայրենիքում Հ.Չեքիջյանի հաստատվելուց մի քանի տարի անց լրացավ Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանը, որը մեծ շուքով նշվեց ինչպես Հայաստանում, այնպես էլ Մոսկվայում: Եվ այդ հոբելյանն առիթ դարձավ, որպեսզի Հ.Չեքիջյանը ոչ միայն հանդես գա Կոմիտասյան խմբերգերի նոր ծրագրով, այլև ներկայացնի իր պատկերացումները Կոմիտասյան խմբերգային երաժշտության վերաբերյալ:

Թերթենք Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ՝ 1969 թվականին Հայաստանի պարբերական մամուլում տպագրված նրա հոդվածներն ու հարցազրույցները:

«Սովետական Հայաստան» օրաթերթի նոյեմբերի 2-ի համարում տպագրվում է «Երաժշտություն, որն ունի անհասանելի գագաթներ» վերնագրով հարցազրույցը Հ.Չեքիջյանի հետ: Խոսակցության հիմնական նյութը Կոմիտասի հոբելյանական համերգն է, որին նախապատրաստվում էր հայկական կապելլան: «Իմ կարծիքով,- գրում է Մաեստրոն,- Կոմիտասն անհասանելի է: Վստահ եմ, որ մինչև կյանքիս վերջն էլ որոնելու եմ նրա երգերի մեջ մարմնավորված բարդ հոգեբանության, սուր մտքի, մարդկային փիլիսոփայության ոսկե հատիկները»¹³:

Իր այս հարցազրույցում Հ.Չեքիջյանն առաջ է քաշում այն կարևոր միտքը, որ պետք չէ յուրաքանչյուր երգչախումբ, առանց հաշվի առնելու իր կարողությունները, անպատճառ կատարի Կո-

¹² **Тэрьян М.**, Дебют талантливого дирижера, “Коммунист”, 30 ноября, 1961.

¹³ Երաժշտություն, որն ունի անհասանելի գագաթներ, «Սովետական Հայաստան», 2 նոյեմբերի, 1969:

միտասի ամենաբարդ ու ամենագեղեցիկ ստեղծագործությունները: «Եթե Կոմիտասը մատուցենք ունկնդրին աղավաղված,- իրավացիորեն նկատում է Չեքիջյանը,- զրկված նրա երաժշտության կախարդական հմայքից, էլ ինչ ժողովրդականության մասին կարելի է խոսել: Դրա համար այն երգչախմբերը, որոնք ուզում են երգել Կոմիտաս, պետք է վարպետ դերձակի նման մի քանի անգամ չափեն և հետո սկսեն լուրջ աշխատանք: Աշխատանք, որը պետք է կատարեն կոմպոզիտորի թեկուզ և ամենափոքր ու պարզ երգի վրա, որպեսզի կարողանան հաղորդել ունկնդիրներին այդ երաժշտության բովանդակությունն ու գեղեցկությունը»¹⁴:

Կոմիտասի հանդեպ Չեքիջյանի խոնարհումն է խտացված հետևյալ խոստովանության մեջ: «Կոմիտասն աննյութեղեն ու հազարագույն մի էություն-տաճար է,- գրում է Մաեստրոն «Հայրենիքի ծայն» թերթի 1969 թ. նոյեմբերի 19-ի համարում,- նրա դռանը մոտենալու համարձակություն և իրավունք միայն կարող են ունենալ նրանք, ովքեր ժողովրդի մեծ արվեստի նկատմամբ ունեն երկյուղածություն և սրբազան դող»¹⁵:

«Գրական թերթի» նոյեմբերի 21-ի համարում տպագրված «Մեծ ներդաշնակություն» հոդվածը Հ. Չեքիջյանն սկսում է հետևյալ մտքով. «Կոմիտասը հայ ժողովրդի համար արել է այն, ինչ ոչ ոք չի արել մինչև օրս: Նա, ասես, մտել է մի վայրի անտառ և տարբեր խոտերից, բազմաթիվ անկանոն, խճճված բուսականությունից քաղել է հայկական ծաղիկները: Այդ փունջը նա ձերբազատել է օտար տարրերից, մաքրել, հասցրել գերագույն պարզության և բյուրեղացման: Նա ստեղծել է մի յուրատեսակ ներդաշնակություն»¹⁶:

Ապա շարունակում է՝ «Մենք հաճախ ենք ելույթ ունենում մերձբալթյան հանրապետություններում, որոնք հայտնի են իրենց խմբերգային կուլտուրայով: Երբ Մոցարտի և Բեռլիոզի Ռեքվիեմներ-

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ **Չեքիջյան Հ.**, Սրբազան դողով, «Հայրենիքի ծայն», 19 նոյեմբերի, 1969:

¹⁶ **Չեքիջյան Հ.**, Մեծ ներդաշնակություն, «Գրական թերթ», 21 նոյեմբերի, 1969:

րից հետո մենք կատարում ենք Կոմիտասի մեկ կամ երկու խմբերգ, դահլիճը շիկանում է, մթնոլորտը փոխվում, հանդիսատեսը մոռանում է համերգի բնույթը, և սկսվում է կոմիտասյան մի նոր համերգ: Ահռելի «Ռեքվիեմի» կողքին կատարված մի «Գութանի երգը» ունկնդրին հեշտությամբ փոխադրում է կոմիտասյան ոլորտը»¹⁷:

Այս հոդվածում ուզում եմ հատկապես ընդգծել մեծ երաժշտի հետևյալ միտքը, որն այսօր առավել քան արդիական է. «Կոմիտասը եզակի է. նրան ոչ ոքի հետ համեմատել չի կարելի: Սակայն պետք է ասել, որ *Կոմիտաս երևույթը պայմանավորված է Կարա-Մուրզայի, Եկմայանի առկայությամբ: Առանց նրանց չէր ստեղծվի Կոմիտաս* (ընդգծումը մերն է՝ Ա.Ա.): Սակայն Կոմիտասն է, որ հայ երաժշտական ոգին հասցրեց համաշխարհային երաժշտական կուլտուրայի մակարդակին: Ե՛վ բարձր է Կոմիտասը, և՛ պարզ: Կոմիտասի պարզությունը կատարելության արդյունք է: Կոմիտասը գիտեր, թե ինչ նոտա չպետք է գրեր: Պարզության մեջ է Կոմիտասի էությունը: Սակայն այդ պարզությունը հասկանալու համար պետք է ուսումնասիրել համաշխարհային խմբերգային ամբողջ գրականությունը»¹⁸:

Կոմիտասի վերաբերյալ չորս հարցերի պատասխաններն են ամփոփված Հ.Չեքիջյանի՝ «Գարուն» հանդեսի 1969 թվականի նոյեմբերյան համարում տպագրված «Իմ Կոմիտասը» հոդվածում: Հենց այդ լակոնիկ պատասխաններում էլ գտնում ենք Կոմիտասի գործունեության վերաբերյալ Չեքիջյանի գնահատականը:

Այսպես՝ ի պատասխան «Ինչ կասեիք ձեր երգչախմբի մասին, որպես Կոմիտասի երաժշտության լավագույն մեկնաբանող և պրոպագանդող խմբի մասին» հարցի՝ Մաեստրոն պատասխանում է. «Հայաստանի պետական երգչախումբը բազմաթիվ անգամ տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների առաջ, համաշխարհային դասականների՝ Ռոսսինիի, Մոցարտի, Բեռլիոզի կողքին ապացուցել է Կոմիտասի երաժշտության ուժը: Ու թերևս մեզ հա-

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում:

մար ամենամեծ գնահատականը Մինսկից մի երիտասարդի արտահայտությունն է, որը համերգից հետո մոտենալով մեզ՝ ասաց.

- Ես կուզենայի հայ լինել միայն նրա համար, որովհետև այդ ժողովուրդը Կոմիտաս ունի»¹⁹:

Կոմիտասյան ավանդների պահպանման և շարունակման վերաբերյալ Մաեստրոն հայտնում է հետևյալ կարծիքը. «Կոմիտասն այն բացառիկ երևույթներից է, որ թողել է մեզ շատ թանկագին ավանդներ: Բայց, դժբախտաբար, մենք այնքան էլ հոգատար ու հետևողական չենք այդ ավանդների նկատմամբ: Մեր կոմպոզիտորները իրենց նետում են նորարարական ամենատարբեր հորձանքների մեջ, բայց անտեսում են այն իսկական հայկական լադերի պահպանումը՝ առանց չափաժող տակտերի և առանց սովորաբար եվրոպական նոտայագրությունում ընդունված կադապարների, որը բնորոշում է անմիջապես բանալիից հետո նշանների տեղադրումը այս՝ որպես նորարարություն, Կոմիտասը սկսել է փոխել հարազատ մնալով անարատ հայկական երաժշտությանը: Մի՞թե այն նորարարությունը, որ սկսել է Կոմիտասը, չարժե շարունակել»²⁰:

Թղթակցի երրորդ հարցին՝ «Կոմիտասի երաժշտությունը կարիք ունի՞ մշակման» հետևում է Չեքիջյանի պատասխանը. «Կոմիտասը այն մեծությունն է, որը արվեստի մարգագետնից միայն ծաղիկներ է քաղել: Այդ ծաղիկները, շեշտում եմ, կատարյալ են և կարիք չունեն մշակման:

Կոմիտասը ինքը շատ անգամ նշել է, որ իր խմբերգային ստեղծագործությունները հարկավոր է կատարել առանց որևէ գործիքի ընկերակցության: Դժբախտաբար շատ-շատերը ուզում են վերամշակել Կոմիտաս, որը առնվազն հանդուրժելի չէ: Կոմիտասի խմբերգային ստեղծագործությունները մի մարգարտաշար է, որտեղ մի նոտայի փոփոխության դեպքում ամեն ինչ կխախտվի»²¹:

¹⁹ **Չեքիջյան Հ.**, Իմ Կոմիտասը, «Գարուն», 1969, նոյեմբեր, էջ 7-8:

²⁰ Նույն տեղում, էջ 8:

²¹ Նույն տեղում:

Եվ վերջին հարցի պատասխանն արդեն բացահայտում է Կոմիտասի հանդեպ Չեքիջյանի պաշտամունքի արմատները: «Դուք մանկուց հնարավորություն եք ունեցել շփվել մարդկանց հետ, որոնց երգել սովորեցրել է Կոմիտասը: Ունեցե՞լ է դա որևէ ազդեցություն Ձեր այժմյան գործունեության վրա»:

«Մանկուց լսած երգերը,- պատասխանում է Մաեստրոն,- իմ հիշողության մեջ լավ են մնացել: Այո, այդ հիշողությունները շատ են օգնում ինձ: Ես աշխատում եմ միշտ հարազատ մնալ Կոմիտասին»²²:

Հետագայում Մաեստրոն Կոմիտասյան խմբերգային ժառանգության վերաբերյալ իր մտորումներն ու խոհերը բազմիցս կիսել է ընթերցողների հետ, և հենց այդ հոդվածներում էլ ձևակերպվեցին նրա ստեղծագործական սկզբունքներն ու գեղագիտական հայացքները:

Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ Հ.Չեքիջյանը պատրաստում է 38 խմբերգ, որոնք առաջին անգամ կատարվեցին հոբելյանական տարում՝ հաստատուն ու մշտական տեղ գրավելով Կապելլայի երգացանկում: Դրանց մի մասը հնչեց նաև Մոսկվայում՝ 1969թ. դեկտեմբերի 3-ին Միությունների տան սյունազարդ դահլիճում տեղի ունեցած հոբելյանական երեկոյի համերգային բաժնում²³:

Իսկ ամիսներ անց՝ Փարիզի Շառլ Գրոյի անվան ծայնասկավառակների ակադեմիայի ամենամյա միջազգային մրցանակաբաշխության 1970 թվականի «Գրան պրին» (Մեծ մրցանակը) շնորհվեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբին՝ «Հայաստանի երգեր» ծայնասկավառակի համար, որտեղ տեղ էին գտել Կոմիտասի «Գութանի երգը», «Կալի երգը», «Հարսանյաց երգերը», Մ.Եկմայանի «Պլպուլն Ավարայրի», «Մեր հողը հնավանդ» և այլ ստեղծագործություններ, «որոնք կատարել է Հայաստանի պետա-

²² Նույն տեղում:

²³ Տե՛ս **Միկոյան Ն., Մելիքսեթյան Ռ.**, Մոսկվան նշում է Կոմիտասի հոբելյանը. երեկո Միությունների տան սյունազարդ դահլիճում, «Երեկոյան Երևան», 4 դեկտեմբերի, 1969:

կան ակադեմիական երգչախումբը՝ հանրապետության ժողովրդական արտիստ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ»²⁴։ Մեծ մրցանակի էր արժանացել նաև Դվորժակի կոնցերտի՝ Մստիսլավ Ռոստրոպովիչի և Հերբերտ Ֆոն Կարայանի ձայնագրությունը²⁵։

Նկատենք, որ նույն կարգի մրցանակի էր արժանացել Ս.Պրոկոֆևի «Հոկտեմբերի 20 տարին» ստեղծագործության ձայնասկավառակը, իսկ Երկրորդ կարգի Մեծ մրցանակ էր շնորհվել Սվիրիդովի երգչախմբային և Գլինկայի սիմֆոնիկ ստեղծագործությունների ձայնասկավառակներին։

Հետագայում ևս Հ.Չեքիջյանը պարբերաբար համերգային կյանքի ուղեգիր պիտի տար կոմիտասյան խմբերգերին։ 1981 թվականի փետրվարի 28-ին Հայհամերգի մեծ դահլիճում տեղի է ունենում Կոմիտասի երգաշարի պրեմիերան. առաջին անգամ կատարվում են կոմիտասյան «Լուսնակը սարի տակին», «Անձրևն էկավ», «Եղնիկ». «Վարդ ա յարս», «Տուն արի», «Առնեմ էրթամ իմ յարը», «Արևը կայնե կեսօր» խմբերգերը։

Տասնամյակներ շարունակ ծառայելով կոմիտասյան խմբերգերի տարածմանն ու քարոզմանը, կոմիտասյան աշխարհիկ և հոգևոր խմբերգերի բարձրարժեք կատարումների կողքին Մաեստրոն սերունդներին թողեց Կոմիտասի հոգևոր խմբերգային գլուխգործոցի՝ «Պատարագի» կատարումը, որի ձայնագրությունն իրականացրեց 2009 թվականին՝ ամբողջացնելով կոմիտասյան խմբերգային արվեստի չեքիջյանական մեկնաբանությունների գանձարանը։

Չեմ կարող չնշել Երևանում Կոմիտասի թանգարանի ստեղծման գործում Մաեստրոյի ջանքերի մասին։ Տարիներ են անցել, սակայն այդ դեպքը երբեք չի ջնջվի իմ հիշողությունից։ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի նախագահությամբ տեղի էր ունենում երաժշտական հանձնախմբի հերթական նիստը, որի անդամներն էին հայ երաժշտարվեստի առաջատար գործիչները՝

²⁴ Միջազգային մրցանակ «Հայաստանի երգերին», «Սովետական Հայաստան», 26 ապրիլի, 1970։

²⁵ Տե՛ս Նվաճել են «Մեծ մրցանակը», «Հայրենիքի ծայն», 29 ապրիլի, 1970։

կոմպոզիտորներ, կատարողներ, երաժշտագետներ, այդ թվում նաև տողերիս հեղինակը: Քննարկվում էր Կոմիտասի ծննդյան 140-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների ծրագիրը: Եվ ես այդ օրն առաջին անգամ բարձրաձայնեցի իմ վաղեմի երազանքի մասին: Դրա մասին ես մտորում էի շատ երկար տարիներ, և ինձ թվաց, թե արդեն եկել է հարմար պահը: Կոմիտասի հոբելյանի կապակցությամբ ես առաջարկեցի Երևանում հիմնել Կոմիտասի թանգարան: Խոսքս դեռ չէի ավարտել՝ Մաեստրոն, որ նստած էր իմ հարևանությամբ, անմիջապես հաստատեց իմ առաջարկության կարևորությունն ու հրատապությունը: Ու... մենք՝ ես և Մաեստրոն, մնացինք solo: Տիրեց քար լռություն, որը խախտեց նախարարը, ասելով, թե դրա կարիքն առհասարակ չկա: Ես լռեցի, Մաեստրոն առարկեց, սակայն՝ ապարդյուն... Հարցը միանգամից փակվեց, և մենք տարակուսած ու շվարած իրար նայեցինք: Այնուհետև «Պատմաբանասիրական հանդեսում» տպագրված իմ հոդվածում²⁶ ես, հուսահատ ու թևաթափ, այնուամենայնիվ, առաջ քաշեցի թանգարանի ստեղծման անհրաժեշտության հարցը, թեև այն արդեն անիրականանալի երազանք էր թվում:

Ինչևէ՝ անցան տարիներ, և Մաեստրոյի և իմ մերժված առաջարկությունը միս ու արյուն ստացավ, իրականություն դարձավ, բայց այդ գաղափարի հեղինակի դերում զարմանալիորեն հայտնվեցին այլ անձինք: Ինչևէ: Կարևորը դա չէ, կարևորն այն է, որ 2015 թվականին Երևանում բացվեց Կոմիտասի թանգարան-ինստիտուտը, որի գիտական խորհրդի անդամ նշանակվեց նաև Մաեստրոն:

Իսկ մինչ այդ՝ 2011 թվականին, Հ.Չեքիջյանը եղել էր Կոմիտասի անվան Առաջին միջազգային փառատոնի պատվավոր հյուրը և ընտրվել մրցանակային ժյուրիի պատվո նախագահ, փառատոնի «գեղարվեստական մասի ձևավորման գործին աջակցելու և

²⁶ Տե՛ս **Ասատրյան Ա.**, Կոմիտասը և հայ երաժշտական արվեստի զարգացման ուղիները (ծննդյան 140-ամյակի առթիվ), «Պատմա-բանասիրական հանդես», 2010, N 1, էջ 40:

վերջինիս նկատմամբ նվիրվածություն ցուցաբերելու համար» 2011թ. օգոստոսի 7-ին պարզևատրվել Պատվոգրով:

Այսօր Հայաստանում և սփյուռքում բազմաթիվ երգչախմբեր են կատարում Կոմիտասի խմբերգերը: Եվ այդուամենայնիվ՝ Կոմիտասի խմբերգային երաժշտության լավագույն ու անգերազանցելի թարգմանն ու մեկնաբանը հենց Մաեստրո Չեքիջյանն է, ում համար Կոմիտասն ազգային գանձ է ու աշխարհի կոմպոզիտորների մեջ անգերազանցելի տեղ ունի²⁷:

Եվ այսօր էլ Կոմիտասն ուղեցույց է՝ կատարելության բոլոր սահմանները նվաճած մեծ երաժշտի՝ Հ.Չեքիջյանի համար:

Կոմիտասի հանդեպ Հ.Չեքիջյանի խոնարհումի մեջ կա ևս մեկ ուշագրավ նախախնամություն: Բանն այն է, որ Փարիզում իր ուսումնառության շրջանում Հ.Չեքիջյանն աշակերտել է հայ գրող, քննադատ, բանասեր, լրագրող և հասարակական գործիչ Արշակ Չոպանյանին (1872-1954), լսել նրա դասախոսությունները: «Արշակ Չոպանյանը շատ ավելի բարձր առաքելություն ուներ, - տարիներ անց կխոստովանի Մաեստրոն, - նա, երբ ուսանողների հետ հայագիտական դասընթացներ և զրույցներ էր ունենում, ես հափշտակված լսում էի: Կային անտարբեր ուսանողներ, որոնք ֆրանսախոս էին: Արշակ Չոպանյանի համար դա շատ մեծ ցավ էր: Նա ուզում էր ցույց տալ իր ուսանողներին, թե ով է հայը, որն է հայոց լեզուն, ինչ շերտեր ունի, ինչ է գրաբարը: Չոպանյանը ուզում էր իր ֆրանսախոս ուսանողներին հայ դարձնել»²⁸:

Արդյո՞ք տեղյակ էր պոլսահայ Ա.Չոպանյանի ստամբուլահայ երիտասարդ սանը, որ իր հարգարժան ուսուցիչը կոմիտասագիտության հիմնադիրն էր, ով մեծ ու բացառիկ դեր էր կատարել Կոմիտասի ստեղծագործական ճակատագրում²⁹: Ա.Չոպանյանը ոչ միայն բարձր էր գնահատել Կոմիտասի տաղանդն ու նրա կատա-

²⁷ Հովհաննես Չեքիջյանի հետ անձնական զրույցից:

²⁸ **Առաքելյան Ս.**, Հովհաննես Չեքիջյան, ալբոմ-ժողովածու, Երևան, 2014, էջ 502:

²⁹ Տե՛ս **Ասատրյան Աննա**, Արշակ Չոպանյանը Կոմիտասի ստեղծագործական ճակատագրում, Կոմիտասական, 3, Երևան, 2019, էջ 25-61:

րած գործը, այլև կարևորել նրա գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը՝ այդ ուղղությամբ կատարելով բազմաթիվ գործնական քայլեր: «Անահիտ» հանդեսում և այլ պարբերականներում («Բիզանդիոն» (Կ.Պոլիս), «Հայաստանի կոչնակ» (Նյու Յորք) և այլն) տպագրված հոդվածներով Ա.Չոպանյանն արժևորել էր Կոմիտասի գործունեությունը և նպաստել նրա ստեղծագործության պրոպագանդմանը: «Անահիտ»-ի էջերում մի կողմից՝ ներկայացրել էր Փարիզում և Ժնևում Կոմիտասի ծավալած համերգային գործունեության լիարժեք համայնապատկերը, տպագրել տարբեր երաժիշտների կողմից Կոմիտասին նվիրված հոդվածներն ու գնահատականները, էջեր հատկացրել հուշագրություններին, մյուս կողմից՝ հրատարակել Կոմիտասի երաժշտագիտական ուսումնասիրությունները և ինքնակենսագրությունը:

Ու կարո՞ղ էր, արդյոք, կանխագուշակել Ա.Չոպանյանը, որ իր երիտասարդ սանը պիտի դառնար Մեծն Կոմիտասի խմբերգային երաժշտության անգերազանցելի մեկնաբանը՝ տարիներ ու տասնամյակներ շարունակ տարածելով նրա երաժշտությունն ամբողջ աշխարհով մեկ...

1.2. Հովհաննես Չեքիջյանը և Մակար Եկմալյանի խմբերգային արվեստը

Խմբավար-Չեքիջյանի գործունեությունը նոր շունչ հաղորդեց Մակար Եկմալյանի ստեղծագործական ժառանգության վերածննդմանն ու հանրահռչակմանը հայրենիքում և ամբողջ աշխարհում:

1962 թվականին Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված համերգում Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ կապելլայի կատարած երեք ստեղծագործություններից մեկը Եկմալյանի «Ահա ծագեց կարմիր արև» a cappella խմբերգն էր՝ գրված Րաֆֆու խոսքերով: Այդ համերգից՝ արդեն Եկմալյանի խմբերգերը դառնում են Մանստրոյի երկացանկի անբաժանելի մասը:

Հայ երաժշտության՝ մասնավորապես խմբերգային արվեստի

տարեգրության մեջ կարևոր հանգրվան էր 1963 թվականը. հունիսի 2-ին Հայկական պետական ֆիլիարմոնիայի համերգային մեծ դահլիճում, Հ.Չեքիջյանի ակտիվ մասնակցությամբ կազմակերպվում է Մակար Եկմալյանի ստեղծագործություններից կազմված համերգը, որի առաջին բաժնում, Մաեստրոյի ղեկավարությամբ, Հայաստանի պետական երգեցիկ խմբի կատարմամբ հնչում են նրա խմբերգերը՝ «Ո՛վ, հայոց աշխարհ», որը հետագայում դառնալու էր Մաեստրոյի ու կապելլայի այցեքարտերից մեկը, «Պլպուլն Ավարայրի», «Ողջուն տվեք», «Խորոտ աղջիկ», և «Ահա ծագեց կարմիր արև», ինչպես նաև հատված «Ռոզայի թափառումները» կանտատից, իսկ երկրորդ բաժնում՝ «Կիլիկիա», «Կեցցե Ձեյթուն»³⁰, «Տեր, կեցո դու զհայս», «Թաղումն քաջորդվույն», «Լռեց» (մենակատար՝ Շարա Տալյան)³¹:

Սա հայաստանյան բեմում Եկմալյանի ստեղծագործություններից կազմված առաջին համերգն էր, որի ընթացքում առաջին անգամ հնչեցին ունկնդրին անհայտ գործեր՝ արժանանալով ունկնդիրների խանդավառ ընդունելությանը:

«Первый концерт Екмаляна на сцене – поистине замечательное событие в культурной жизни республики», - նկատեց մամուլը³²:

Հայֆիլիարմոնիայի համերգային մեծ դահլիճում հավաքված բազմաթիվ երևանցիներ «մեծ սիրով և ուշադրությամբ լսեցին Երևանում դեռևս չկատարված Եկմալյանի մի շարք պարզ ու անպաճույճ ստեղծագործություններ»³³: Ու թեև համերգի կազմակերպման գործում մեծ դեր էր կատարել Շարա Տալյանը, ով նաև հանդես եկավ վարպետ կատարումներով, սակայն «ծրագրի հիմնական ծանրությունն իր վրա վերցրեց Հայաստանի պետական երգչախումբը, որը ղեկավարում էր Հովհաննես Չեքիջյանը»³⁴:

³⁰ Ծրագրում գրված է «Ձեյթունցիների երգը»:

³¹ Տե՛ս Նվիրված Մակար Եկմալյանին, «Գրական թերթ», 8 դեկտեմբերի, 1963:

³² **Галстян Х.** Возрожденный Екмалян, «Коммунист», 8 июня, 1963.

³³ **Մաթևոսյան Վ.**, Եկմալյանի երգերի երեկո, «Երևան», 5 հունիսի, 1963:

³⁴ Նույն տեղում:

Մեծ հաջողություն ունեցած համերգը կրկնվեց նոյեմբերի 30-ին:

Ըստ էության՝ Հ.Չեքիջյանի այս երկու համերգների շնորհիվ վերածնվեց Մակար Եկմալյանի խմբերգային երաժշտությունը, որն այնուհետև պիտի հնչեր միշտ՝ Հայաստանում և նրա սահմաններից դուրս:

Շնորհիվ Հ.Չեքիջյանի՝ Մ.Եկմալյանի խմբերգային երաժշտությունը հասավ Ֆրանսիա. կոմպոզիտորի աշխարհիկ խմբերգերն ու «Պատարագից» հատվածները Փարիզում և Մարսելում հնչեցին Հ.Չեքիջյանի և հայկական կապելլայի 1974թ. և 1986թ. ֆրանսիական հյուրախաղերի ընթացքում:

Իսկ 2001թ. փետրվարի 13-ին Փարիզի Աստվածամոր տաճարում տեղի ունեցավ կապելլայի աննախադեպ համերգը, որը բացառիկ երևույթ էր ոչ միայն Կապելլայի, այլև առհասարակ Հայաստանի կատարողական արվեստի պատմության մեջ, քանի որ այդ տաճարում առաջին անգամ ելույթ էին ունենում հայ երաժիշտներ³⁵:

Ծրագրում ընդգրկված էին «Ո՛վ, հայոց աշխարհ» խմբերգն ու չորս հատված Պատարագից: «Ինը հազար փարիզեցիներ, որոնք երեքշաբթի երեկոյան հավաքվել էին Փարիզի Աստվածամոր տաճարում, տեաական ծափողջույններով, հոտնկայս ողջունեցին Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի ելույթը: Երգչախմբի ղեկավար, ԽՍՀՄ ու Հայաստանի ժողովրդական արտիստ, Պետական մրցանակների դափնեկիր Հովհաննես Չեքիջյանին շնորհավորեցին համերգին ներկա նախագահներ Ռոբերտ Քոչարյանն ու Ժակ Շիրակը, նրանց տիկնայք՝ Բելլա Քոչարյանն ու Բերնարդետ Շիրակը, Փարիզի կարդինալ Ժան-Լյուկ Լյուստիժեն»³⁶:

³⁵ Տե՛ս **Գալոյան Սերգեյ**, Հայ երաժիշտներից առաջինը. Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը ելույթ է ունենալու Փարիզի Աստվածամոր տաճարում, «Ազգ», 8 փետրվարի, 2001:

³⁶ **Լիլոյան Տիգրան**, Բացառիկ համերգ Փարիզի Աստվածամոր տաճարում, «Ազգ», 15 փետրվարի, 2001:

Մեկուկես ժամ տևողության համերգն ունեցավ ցնցող տպավորություն. «Успех был просто оглушительным»³⁷:

Իսկ ֆրանսահայ մամուլը նկատեց. «... կը փափաքէի ընդգծել, օրինակ ամէնուս քաջ ծանօթ Եկմալեանի «Ո՛վ, Հայոց Աշխարհ»ի, «Սուրբ-Սուրբ»ի, Կոմիտասի «Տէր Ողորմեա»ի, «Ել-Ել»ի աննկարագրելի գեղեցկութիւնը եւ հայու ոգին, որ դրոշմուած է բծախնդրօրէն մշակուած իւրաքանչիւր հնչիւնի խօրքին մէջ»³⁸:

2001 թվականին, Հայաստանում քրիստոնեության, որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակի կապակցությամբ Կանադայում թողարկվեց Մ.Եկմալյանի «Պատարագի» խտասալիկը՝ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի կատարմամբ՝ Հ.Չեքիջյանի մեկնաբանությամբ: Սկավառակն արագորեն տարածվեց աշխարհով մեկ: «Եվ ես շատ ուրախ կլինեի, որ ամեն հայ այն ունենար իր տանը, որովհետու «Պատարագի» ողջ երգեցողությունը կատարվել է պրոֆեսիոնալ երգչախմբի կողմից», - նկատել է Մաեստրոն³⁹:

Իսկ 2006թ. նոյեմբերի 25-ին Եկմալյանի «Պատարագը» Մաեստրոյի ղեկավարությամբ հնչեց Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում՝ կոմպոզիտորի ծննդյան 150-ամյա հոբելյանի կապակցությամբ:

Այսպիսով, շնորհիվ Հ.Չեքիջյանի՝ արդեն տասնամյակներ շարունակ իրենց համերգային կյանքն են շարունակում եկմալյանական խմբերգերը, որոնցից «Ո՛վ, հայոց աշխարհ» և «Պլպուլն Ավարայրի» խմբերգերն ու «Պատարագից» հատվածները Մաեստրոյի և կապելլայի այցեքարտերն են:

³⁷ **Айдинян Валерий**. Праздник и будни, "Новое время", 11 февраля, 2001.

³⁸ **Ղաուազեան Կարինե**, Հայ Երգի Ղօղանջը Փարիզի Աստուածամոր Տաճարի Կամարներուն տակ, «Ասպարէզ», 1 մարտի, 2001:

³⁹ **Գալոյան Սերգեյ**, Հովհաննես Չեքիջյանը մեկ անգամ ևս հիացրեց. Բացահիկ համերգ Փարիզի Աստվածամոր տաճարում, «Ազգ», 247 փետրվարի, 2001:

2. Հովհաննես Չեքիջյանը և հայ ժամանակակից երաժշտությունը

Նշանակալի է Հ.Չեքիջյանի ներդրումը հայ ժամանակակից կոմպոզիտորների սիմֆոնիկ և վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարման և հանրահռչակման գործում: Հ.Չեքիջյանի գործունեությունը զգալիորեն նպաստել է հայ կոմպոզիտորական արվեստի առաջընթացին: Բազմաթիվ ստեղծագործություններ են գրվել հենց նրա կատարման համար:

Հ.Չեքիջյանը մի դեպքում՝ հայ ժամանակակից կոմպոզիտորների վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններից շատերի առաջին մեկնաբանն է, իսկ մյուս դեպքում՝ ապահովում է այդ ստեղծագործություններից շատերի համերգային տևական կյանքը (այդ թվում՝ Արամ Խաչատրյան՝ «Ձոն ցնծության», Էդգար Հովհաննիսյան՝ «Սարդարապատ» և «Էրեբունի-Երևան», Գրիգոր Հախինյան՝ «Սայաթ-Նովա» կանտատ և այլն):

Հայ ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների պրոպագանդանը Հ.Չեքիջյանը ձեռնամուխ եղավ Հայաստանում հաստատվելուց ընդամենը մեկ տարի անց՝ 1962 թվականին, երբ սկիզբ առավ համագործակցությունը Հայաստանի կոմպոզիտորների միության հետ, որն անցնելով տարիների ու տասնամյակների միջով՝ դարձավ ավելի ու ավելի բեղմնավոր ու արդյունավետ: Այսպես՝ Մաեստրոյի ղեկավարությամբ Կապելլան ակտիվորեն մասնակցում է Հայաստանի կոմպոզիտորների միության հինգերորդ համագումարի աշխատանքներին: Համագումարի՝ 1962թ. փետրվարի 16-ին տեղի ունեցած սիմֆոնիկ համերգը, որը դարձավ «կոմպոզիտորների համաժողովի ամենավառ իրադարձություններից մեկը»⁴⁰, սկսվեց Վաղարշակ Կոտոյանի «Երկիր Նաիրի» օրատորիայի կատարմամբ: Ե.Չարենցի համանուն ստեղծագործության

⁴⁰ Ժողովրդի հետ խոսակցությունը շարունակվում է (Հայաստանի կոմպոզիտորների միության հինգերորդ համագումարը), «Սովետական Հայաստան», 18 փետրվարի, 1962:

հիման վրա գրված 6-մասանի ստեղծագործությունը կատարեցին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը և երգչախումբը, մեներգիչներ Գոհար Գալաչյանը և Վահան Միրաքյանը, ասմունքով՝ Բաբկեն Ներսիսյան: ««Երկիր Նաիրի»-ի մեծ հաջողությունը արժանի կերպով բաժանեց դիրիժոր, Հայաստանի պետական երգչախմբի գեղարվեստական ղեկավար Հովհաննես Չեքիջյանը: Դա հիվճը երկար ժամանակ ծափահարում էր տաղանդավոր վարպետին, որը գեղարվեստական բարձր մակարդակով, տեմպերամենտով և զգացմունքով ղեկավարեց օրատորիայի կատարումը»⁴¹:

Իսկ Հայաստանի կոմպոզիտորների միության հինգերորդ համագումարի փետրվարի 18-ի համերգին Հ.Չեքիջյանը հանդես է գալիս որպես կոմպոզիտոր՝ հնչում է նրա «Մեկիկ մեկիկ» երգը, որը հաջորդում է Վ.Կոտոյանի՝ Սիլվա Կապուտիկյանի խոսքերով գրված «Իմ Երևան» երգին:

1984 թվականի հունվարի 28-ին շահագործման հանձնվեց Հայաստանի կոմպոզիտորների միության «Դիլիջան» ստեղծագործական տան Բեթհովենի անվան համերգային դահլիճը, որը «նպատակ ուներ նպաստելու հանրապետության երաժշտական կյանքի հետագա վերելքին»⁴²: Բացման օրն այստեղ էին հավաքվել հանրապետության կուսակցական և սովետական ղեկավարության ներկայացուցիչները: Արարողությունը բացում է Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Է.Միրզոյանը, այնուհետև ելույթ է ունենում ԽՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության նախագահ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Տիխոն Խրեննիկովը, որը Երևան էր ժամանել Արամ Խաչատրյանի ծննդյան 80-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին, այդ թվում՝ աշխարհահռչակ կոմպոզիտորի տուն-թանգարանի բացման արարողությանը մասնակցելու նպատակով: Տոնական համերգն սկսվում է Բեթհովենի Իններորդ սիմֆոնիայի ֆինալով՝ Հայաս-

⁴¹ Նույն տեղում:

⁴² **Ասատրյան Աննա**, Հայաստանի կոմպոզիտորների միություն – 85, Երևան, 2017, էջ 54:

տանի պետական ակադեմիական երգչախմբի և Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի նվագախմբի, մենակատարներ Գ.Գասպարյանի, Օ.Գաբայանի, Վ.Հարությունյանի կատարմամբ, Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Այնուհետև հնչում են Դ.Շոստակովիչի Հինգերորդ սիմֆոնիան, Տ.Խրեննիկովի Դաշնամուրային Երրորդ կոնցերտը՝ հեղինակի մեկնաբանությամբ, և հատվածներ Ա.Խաչատրյանի «Սպարտակ» բալետից. սիմֆոնիկ նվագախումբը ղեկավարում է Վ.Գերգիևը⁴³:

Մասնորոյի և հայ կոմպոզիտորների ստեղծագործական բեղմնավոր համագործակցությունից ընտրեցինք երկու էջ, որոնք առնչվում են Արամ Խաչատրյանին և Ալեքսանդր Հարությունյանին:

2.1. Հովհաննես Չեքիջյանը և Արամ Խաչատրյանը⁴⁴

«Մենք ունենք միջազգային ճանաչում գտած կատարողներ: Պիտի ասեմ, որ շատ բարձր եմ գնահատում Հովհաննես Չեքիջյանի կատարած աշխատանքը: Չեքիջյանը համաշխարհային ընդգրկման դիրիժոր է. երգչախմբային արվեստը կարողանում է հասցնել համամարդկային հնչեղության»⁴⁵.

Արամ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ.Չեքիջյանի և Արամ Խաչատրյանի միջև ստեղծագործական համագործակցությունն ու անձնական շփումները տևեցին 17 տարի

⁴³ «Вестник», 1984, N 1, январь-июнь, стр. 8.

⁴⁴ «Արամ Խաչատրյան և Օգանես Չեկիճյան: Գործերի և կոմպոզիցիաների զգեստավորումը» զեկուցումով հեռակա մասնակցել ենք 2019թ. փետրվարի 15-ին Մոսկվայում Ելենա Գնեսինայի մեմորիալ թանգարան-բնակարանի կազմակերպած «Գնեսինայի ընթերցումներ» XXIV կոնֆերանսին, որը նվիրված էր Գնեսինների անվան կրթօջախների հիմնադրման 124-րդ տարեդարձին և Գնեսինայի Մեմորիալ թանգարան-բնակարանի հիմնադրման 50-ամյակին: «Արամ Խաչատրյան և Օգանես Չեկիճյան: Գործերի և կոմպոզիցիաների զգեստավորումը» վերնագրով մեր հոդվածն ուղարկվել է Մոսկվա և տպագրվելու է կոնֆերանսի զեկուցումների ժողովածուում:

⁴⁵ Արամ Խաչատրյանի հարցազրույցից, «Հայրենիքի ծայն», Երևան, 1 հունվարի, 1974:

(1961-1978) և ավարտվեցին 1978 թվականին՝ աշխարհահռչակ կոմպոզիտորի մահվան պատճառով:

Երևանում Հ.Չեքիջյանի հաստատվելուց ընդամենը երկու տարի անց՝ 1963-ին լրանում է Արամ Խաչատրյանի ծննդյան 60-ամյա հոբելյանը: Եվ Հ.Չեքիջյանն այդ իրադարձությանն է ձոնում երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար Սիլվա Կապուտիկյանի խոսքերով գրված «Ազատության ղողանջներ» երկմաս վոկալ-սիմֆոնիկ պոեմը: Պոեմի պրեմիերան տեղի ունեցավ 1963թ. նոյեմբերի 17-ին, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, Հայաստանի սիմֆոնիկ նվագախմբի և Հայաստանի պետական երգչախմբի կատարմամբ, կոմպոզիտորի ներկայությամբ, նրա հոբելյանին նվիրված մեծարման երեկույթի երկրորդ բաժնում⁴⁶:

Փաստորեն՝ Չեքիջյան-կոմպոզիտորի ոչ ծավալուն, սակայն արժեքավոր ստեղծագործության մի կարևոր էջը նվիրվեց Արամ Խաչատրյանին:

1964-ի նոյեմբերի 24-28-ը կայացավ երիտասարդ դիրիժորի ղեկավարությամբ Կապելլայի դեբյուտը ԽՍՀՄ մայրաքաղաք Մոսկվայում:

Մոսկվայի Պ.Ի.Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի Մեծ դահլիճում նոյեմբերի 25-ին տեղի է ունենում a cappella համերգը, իսկ նոյեմբերի 27-ին Մոսկվայի սիմֆոնիկ նվագախմբի հետ Կապելլան կատարում է Մոցարտի «Requiem»-ը և Շուբերտի «Միրիամի հաղթերգը» կանտատը, որը Խորհրդային Միությունում հնչում էր առաջին անգամ: Այդ ժամանակ երգչախումբը կազմված էր ընդամենը 54 արտիստներից: Համերգը բախտորոշ էր. հաջողության դեպքում կոլեկտիվի առջև կբացվեին երկրի գլխավոր համերգային դահլիճների դռները: Եվ Մոսկվան գնահատե՛ց Չեքիջյանի տաղանդը, իսկ Դ.Շոստակովիչն արձանագրեց. «Նա ազատ կարող է եվրոպական լավագույն դահլիճների զարդը լինել»: Իսկ Ա.Խաչատրյանի արձագանքն ավելի ջերմ էր և պարտավորեցնող:

⁴⁶ Տե՛ս Կոմիտասի և Սպենդիարյանի տրադիցիաների ժառանգորդը, «Սովետական Հայաստան», 19 նոյեմբերի, 1963:

«Այս նոր հանդիպումը Հայաստանի պետական երգչախմբի հետ, նկատեց կոմպոզիտորը, - իմ մեջ ամենալավ զգացմունքներն առաջ բերեց: Չեմ կարող խոսել առանց հիացմունքի: Դա բարձր կուլտուրա ունեցող, փայլուն երգչախումբ է: Շատ հետաքրքիր է նրա բազմազան ռեպերտուարը: Կապելլայի ղեկավարը՝ Հովհ. Չեքիջյանը, հմուտ երաժիշտ է ու կոմպոզիտոր: Ինչ էլ որ անի, զգացվում է նորարարը՝ սկսած ստեղծագործությունների մեկնաբանումից և վերջացրած երգիչների դասավորմամբ: Իսկ սեփական գործերը: Ստեղծագործելու նրա մաները իսկապես շատ թարմ է»⁴⁷:

Միևնույն ժամանակ մեծ կոմպոզիտորն իր ափսոսանքն է հայտնում, որ «երգչախումբը փոքրաթիվ է» և հանդես գալով գործնական առաջարկով՝ հույս է հայտնում, որ «Հայաստանի կուլտուրայի մինիստրությունը կհոգա կազմը համալրելու գործը: Սակայն, իհարկե, փոքրաթվության պարագան չի խանգարում, որ հիմա էլ երգչախումբը համարձակորեն գաստրոլների ճամփես ցանկացածդ երկիրը: Նա հպարտությամբ կտանի սովետական երաժշտական կուլտուրայի դրոշմը»⁴⁸:

Կապելլայի երկացանկում իր հաստատուն տեղն է գրավել Ա.Խաչատրյանի «Ձոն ցնծության» վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունը՝ գրված 1956 թվականին, Մոսկվայում Հայաստանի գրականության և արվեստի երկրորդ տասնօրյակի կապակցությամբ (1-10 հունիսի, 1956): Մեցցո-սոպրանոյի, խառը երգչախմբի, ջութակահարների անսամբլի, 10 տավիղների և նվագախմբի համար Ս.Սմիռնովի խոսքերով գրված ստեղծագործության պրեմիերան՝ Միքայել Թավրիգյանի ղեկավարությամբ (մենակատար՝ Գոհար Գալաչյան) տեղի ունեցավ ԽՍՀՄ Մեծ թատրոնում, 1956թ. հունիսի 13-ին և դարձավ Հայաստանի գրականության և արվեստի երկրորդ տասնօրյակի եզրափակիչ համերգի տոնական ավարտը:

Պրեմիերայից 11 տարի անց՝ Մոսկվայում Հայաստանի մշա-

⁴⁷ Ազդագրերում՝ Հայաստանի երգչախումբը, «Սովետական արվեստ», N 2, 1965, էջ 20:

⁴⁸ Նույն տեղում:

կույթի և արվեստի օրերի շրջանակներում, 1967թ. հունիսի 5-ին Կրեմլի համագումարների պալատում կայացած Հայաստանի արվեստի վարպետների համերգը եզրափակեց Ա.Խաչատրյանի 12 թուփանոց «Ձոն ցնծության» ստեղծագործությունը:

Եվ ահա Հ.Չեքիջյանը դառնում է այս ստեղծագործության լավագույն մեկնաբաններից մեկն ու անխոնջ պրոպագանդիստը: Տասնամյակներ շարունակ «Ձոնն» ուղեկցում է հայկական կապելլային և հայ երգչախմբային արվեստի մարշալին՝ նրա փայլուն կատարմամբ և մեծ հաջողությամբ պարբերաբար հնչելով ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Մասետրոյի և կապելլայի հետ որպես մենակատարներ հանդես են եկել տաղանդավոր երգչուհիներ Գոհար Գալաչյանը (Լենինգրադ, 1971), Նինա Իսակովան (Լենինգրադ, 1977), Իրինա Արխիպովան (Երևան, 1987), Լիդիա Ջախարենկոն (Մոսկվա, 1993), Լիլիթ Գրիգորյանը (Մոսկվա, 2003), Վարդուհի Խաչատրյանը (Երևան, 2007) և ուրիշներ:

Այսօր էլ, Ա.Խաչատրյանի մահից ավելի քան 40 տարի անց, արդիական և խորապես արդարացի են նրա հետևյալ խոսքերը. «Հիացած եմ Հովհաննես Չեքիջյանի տաղանդով ու եռանդով: Անսխալական են հատկապես դասական ստեղծագործությունների նրա մեկնաբանությունները. նրանք ավարտուն են, իրենն են:

Արվեստի կատարյալ տոն հիշեցնող երգչախմբի յուրաքանչյուր ելույթը լսելիս ես հսկայական հրճվանք եմ ապրում, զարմանում չեքիջյանական իմպրովիզացիաներով:

Մոսկվայում ու, նաև ամենուր, կա այն կարծիքը, որ Չեքիջյանի կապելլան Խորհրդային Միության լավագույն խմբերից մեկն է:

Ինձ երջանկացնում է երգային այդ հզոր օրգանիզմի հաղթարշավը աշխարհի ամենահեղինակավոր բեմերում»⁴⁹:

Ա.Խաչատրյանը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի 77-ամյա պատմության մեջ միակ երաժիշտ ակադեմիկոսն է:

⁴⁹ Առաքելյան Սերգեյ, Հովհաննես Չեքիջյան, էջ 12:

Հ.Չեքիջյանը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի 77-ամյա պատմության մեջ միակ երաժիշտ պատվավոր դոկտորն է:

2.2. Հովհաննես Չեքիջյանը և Ալեքսանդր Հարությունյանը

1961 թվականի սեպտեմբերին Հ.Չեքիջյանը ժամանեց Հայաստան: «Երևանյան առաջին լուսաբացին, հյուրանոցի մեր համարում հնչեց հեռախոսը,- հետագայում կիիշի Մաեստրոն,- խոսում էր Ալեքսանդր Հարությունյանը, որն առաջինը շնորհավորեց ինձ հայրենադարձվելու առթիվ և առաջարկեց ուղեկցել կուլտուրայի մի նիստություն: Ես շատ էի լսել այդ կոմպոզիտորի անունը և որոշ գործեր էլ լսել էի Երևանից տրվող հաղորդումներից (որոնք մշտապես խլացվում էին) և չգիտեմ ինչու նրան տարեց էի պատկերացնում, մինչդեռ ինձ հանդիպեց ուղղակի երիտասարդ մի մարդ»⁵⁰:

Այսպես սկիզբ առավ հայ ժամանակակից երաժշտարվեստի սյուներից երկուսի ծանոթությունը, որը հետագայում վերաճեց ստեղծագործական բեղմնավոր համագործակցության: Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ հայկական կապելլայի երկացանկում իր հաստատուն տեղը գրավեց և իր համերգային կյանքն աշխարհի տարբեր բեմերում շարունակեց կոմպոզիտորի՝ մենակատարների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար Աշոտ Գրաշու և Սարմենի խոսքերով գրված հնգամաս «Կանտատ Հայրենիքի մասին» ստեղծագործությունը (1948), որը 29-ամյա հեղինակին բերել էր Ստալինյան մրցանակ:

Մաեստրոյի կատարմամբ Կանտատը հնչել է ինչպես Խորհրդային Միությունում (այդ թվում՝ 8 մայիսի, 1985, Նովոսիբիրսկ), այնպես էլ արտասահմանում (այդ թվում՝ 18 ապրիլի, 1980, Վրոցլավ, Լեհաստան):

Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ 1969 թվականին

⁵⁰ Հովհաննիսյան Անժելա, Հովհաննես Չեքիջյան, Երևան, 1984, էջ 21:

Ալեքսանդր Հարությունյանը պոետի «Հայրենիքիս հետ» բանաստեղծության հիման վրա գրում է «Հայրենիքիս հետ» ծավալուն երգ-կանտատը՝ մենակատարների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար:

«Օպերային թատրոնում կայացած եզրափակիչ համերգին հնչելով՝ այդ երգը,- հետագայում կիիշի կոմպոզիտորը,- կարծես, հանդիսության վերջաբանը դարձավ: Ելույթ ունեցան հանրահայտ երգիչներ Լուսինե Զաքարյանը և Հենրիկ Ալավերդյանը, Ակադեմիական կապելլան և օպերային թատրոնի նվագախումբը: Կատարումը հրաշալի ղեկավարեց Հովհաննես Չեքիջյանը: Դահլիճում ներկա էին բազմաթիվ հյուրեր միութենական հանրապետություններից և արտասահմանյան երկրներից»⁵¹:

1986թ. սեպտեմբերի 29-ին «Հայրենիքիս հետ» կանտատը հնչեց Փարիզում՝ հընթացս Կապելլայի ֆրանսիական հյուրախաղերի:

Նկատենք նաև, որ 2019թ. մարտի 2-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի համերգը՝ նվիրված Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին: Համերգը, ինչպես և հիսուն տարի առաջ, եզրափակեց Ալ.Հարությունյանի «Հայրենիքիս հետ» երգ-կանտատը՝ հայկական փառապանծ կապելլայի անզուգական կատարմամբ, մեծանուն Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի անկրկնելի ղեկավարությամբ:

3. Հովհաննես Չեքիջյանը՝ սիմֆոնիկ դիրիժոր

Տասնամյակներ շարունակ՝ փայլուն խմբավարի գործունեությանը Հ.Չեքիջյանը հաջողությամբ զուգակցում է սիմֆոնիկ դիրիժորի գործունեության հետ: Դրա մեկնարկը տրվեց հայրենիքում առաջին համերգի ժամանակ: Երևանում առաջին բեմելին Մաեստրոն ներկայացավ թե՛ որպես խմբավար, թե՛ որպես սիմֆոնիկ դի-

⁵¹ Ալեքսանդր Հարությունյան, Հուշեր, Երևան, 2000, էջ 70-71:

րիժոր. Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը նրա ղեկավարությամբ կատարեց Բեթհովենի Յոթերորդ սիմֆոնիան:

«Համերգի երկրորդ բաժնում Հ.Չեքիջյանն իրեն դրսևորեց որպես նվագախմբի հետ աշխատելու, այն իր կամքին ենթարկելու և հրաշալի հնչողություն ստանալու ունակ լավ սիմֆոնիկ դիրիժոր: Համերգն ունեցավ հսկայական հաջողություն, բյուրավոր ունկնդիրները ողջունեցին երիտասարդ տաղանդավոր դիրիժորին»⁵²:

Նշենք, որ մինչև Հայաստան գալը նա սիմֆոնիկ նվագախմբեր է ղեկավարել 1947-ից, այդ թվում՝ Ստամբուլում և Փարիզում, իսկ հայրենիք վերադառնալուց ի վեր՝ Հայաստանի բոլոր սիմֆոնիկ նվագախմբերը, ԽՍՀՄ առաջնակարգ նվագախմբերը՝ ԽՍՀՄ պետական ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբը, Սանկտ Պետերբուրգի ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբը, միութենական և արտասահմանյան՝ ընդհանուր առմամբ 69 սիմֆոնիկ նվագախմբեր⁵³:

Հընթացս հայրենիքում անդրանիկ համերգի՝ Մաեստրոն մատուցում է իր առաջին անակնկալը. Խորհրդային Միության մեջ առաջին անգամ հնչում է Բեդրժիխ Սմետանայի «Չեխական երգ» Կանտատը, հնչում չեխերեն՝ սկիզբ դնելով ստեղծագործությունները միայն բնագրով կատարելու ավանդույթին. այսօր Կապելլան երգում է աշխարհի 27 լեզուներով:

Այդ օրվանից մինչ օրս՝ վոկալ-սիմֆոնիկ խոշոր կտավի ստեղծագործությունների համերգային կատարումները Հ.Չեքիջյանի և Կապելլայի գործունեության կարևոր բնագավառներից են:

Հովհաննես Չեքիջյանի ջանքերով ոչ միայն Հայաստանում, այլև Խորհրդային Միությունում առաջին անգամ հնչել են վոկալ-սիմֆոնիկ այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք են Հ.Բեռլիոզի «Requiem»-ը (1967, Երևան, Մոսկվա), «Ռոմեո և Ջուլիետ» դրամատիկ սիմֆոնիան (1983, Մոսկվա) և «Te Deum»-ը (1977, Լե-

⁵² **Тэрьян М.**, Дебют талантливого дирижера, “Коммунист”, 30 ноября, 1961.

⁵³ Հ.Չեքիջյանի ղեկավարած նվագախմբերի ցանկը տես *Հավելված 1*-ում (գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ):

նինգրադ), Գ.Ֆորեի «Requiem»-ը (1971, Երևան, Մոսկվա), Շ.Գունոյի «Մահ և կյանք» օրատորիան (1971, Մոսկվա), Զ.Վերդիի «Ագգերի հիմնը» (1982, Լենինգրադ), Կ.Լամբերտի «Ռիո Գրանդե»-ն (1982, Լենինգրադ) ևն:

Հ.Չեքիջյանը համաշխարհային դիրիժորական պրակտիկայում միակ դիրիժորն է, ով Հ.Բեռլիոզի «Requiem»-ը կատարել է 37 անգամ՝ Երևանում, Մոսկվայում, Լենինգրադում, Մինսկում, Թբիլիսիում, Վիլնյուսում, Կիևում, Քիշնևում, Կաունասում, Ուլյանովսկում, Տիրասպոլում, Խարկովում, Դնեպրոպետրովսկում, Սվերդլովսկում, Լվովում, Օդեսայում, Նովոսիբիրսկում, Օմսկում, Տոմսկում՝ սահմանելով յուրահատուկ համաշխարհային ռեկորդ:

Հ.Չեքիջյանի ջանքերով 1967-ի փետրվարի 1-ին և 2-ին տեղի ունեցավ Բեռլիոզի «Requiem»-ի երևանյան պրեմիերան: Շաբաթներ անց՝ փետրվարի 26-ին, «Requiem»-ը հնչեց Մոսկվայում՝ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ, ԽՍՀՄ պետական սիմֆոնիկ նվագախմբի և Հայաստանի պետական երգչախմբի կատարմամբ: Իսկ մարտի 2-ին և 3-ին ստեղծագործությունը Մաեստրոյի ղեկավարությամբ հնչեց Լենինգրադում՝ Հայաստանի պետական երգչախմբի և Լենֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ:

Ստորև՝ ներկայացնում ենք Բեռլիոզի «Requiem»-ի՝ Հ.Չեքիջյանի կատարումների ցանկը, որը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ՝

1. Երևան, 1 փետրվարի, 1967 – Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, «Երևան» փողային նվագախումբ
2. Երևան, 2 փետրվարի, 1967 – Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, «Երևան» փողային նվագախումբ
3. Մոսկվա, 26 փետրվարի, 1967 – ԽՍՀՄ պետական սիմֆոնիկ նվագախումբ, Պ.Ի.Չայկովսկու անվան համերգային դահլիճ

4. Մոսկվա, 27 փետրվարի, 1967 – ԽՍՀՄ պետական սիմֆոնիկ նվագախումբ, Կոնսերվատորիայի մեծ դահլիճ
5. Լենինգրադ, 2 մարտի, 1967 – Լենինգրադի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ, Լենինգրադի ֆիլհարմոնիայի Դ.Դ.Շոստակովիչի անվան Մեծ համերգասրահ
6. Լենինգրադ, 3 մարտի, 1967 – Լենինգրադի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ, Լենինգրադի ֆիլհարմոնիայի Դ.Դ.Շոստակովիչի անվան Մեծ համերգասրահ
7. Մինսկ, 3 դեկտեմբերի, 1967 – Բելոռուսական ՍՍՀ պետական սիմֆոնիկ նվագախումբ
8. Թբիլիսի, 25 նոյեմբերի, 1968 – Վրաստանի պետական նվագախումբ
9. Թբիլիսի, 27 նոյեմբերի, 1968 – Վրաստանի պետական նվագախումբ
10. Լենինգրադ, 5 մարտի, 1969 – Լենինգրադի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ, Լենինգրադի ֆիլհարմոնիայի Դ.Դ.Շոստակովիչի անվան Մեծ համերգասրահ (ներաձական խոսքը՝ Յուլիան Վայնկոպի)
11. Լենինգրադ, 6 մարտի, 1969 (Ի.Սոլերտինսկու հիշատակին) – Լենինգրադի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ, Լենինգրադի ֆիլհարմոնիայի Դ.Դ.Շոստակովիչի անվան Մեծ համերգասրահ (ներաձական խոսքը՝ Յուլիան Վայնկոպի)
12. Վիլնյուս, 15 մարտի, 1969 – Լիտվայի պետական նվագախումբ
13. Կաունաս, 16 մարտի, 1969 – Լիտվայի պետական նվագախումբ
14. Օմսկ, 28 մարտի, 1970 – Օմսկի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ
15. Օմսկ, 29 մարտի, 1970 – Օմսկի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ
16. Լենինգրադ, 18 հոկտեմբերի, 1974 – Լենինգրադի ֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբ,

- Լենինգրադի ֆիլհարմոնիայի Դ.Դ.Շոստակովիչի անվան Մեծ համերգասրահ
17. Լենինգրադ, 19 հոկտեմբերի, 1974 – Լենինգրադի ֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբ, Լենինգրադի ֆիլհարմոնիայի Դ.Դ.Շոստակովիչի անվան Մեծ համերգասրահ
 18. Երևան, 28 դեկտեմբերի, 1974 – Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Հայֆիլհարմոնիայի Մեծ դահլիճ
 19. Ուլանոսկ, 24 ապրիլի, 1975 – Ուլանոսկի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Լենինյան հուշահամալիրի մեծ դահլիճ
 20. Քիշինև, 7 մարտի, 1976 – Մոլդավիայի պետական նվագախումբ, Մոլդավիայի պետական ֆիլհարմոնիայի Մեծ դահլիճ
 21. Տիրասպոլ, 9 մարտի, 1976 – Մոլդավիայի պետական նվագախումբ
 22. Կիև, 13 մարտի, 1976 – Ուկրաինայի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Լիսենկոյի անվան սյունազարդ դահլիճ
 23. Կիև, 14 մարտի, 1976 – Ուկրաինայի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Լիսենկոյի անվան սյունազարդ դահլիճ
 24. Խարկով, 17 մարտի, 1976 – Խարկովի սիմֆոնիկ նվագախումբ, Խարկովի մարզային ֆիլհարմոնիայի համերգասրահ
 25. Խարկով, 19 մարտի, 1976 – Խարկովի սիմֆոնիկ նվագախումբ, Խարկովի մարզային ֆիլհարմոնիայի համերգասրահ
 26. Դնեպրոպետրովսկ, 24 մարտի, 1976 – Դնեպրոպետրովսկի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ, Տեխնիկայի տուն (ներածական խոսք՝ Իյա Գուրյանովա)

27. Սվերդլովսկ, 26 մարտի, 1977 – Սվերդլովսկի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ֆիլհարմոնիայի համերգասրահ
28. Սվերդլովսկ, 27 մարտի, 1977 – Սվերդլովսկի պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ֆիլհարմոնիայի համերգասրահ
29. Օդեսա, 16 մայիսի, 1978 – Օդեսայի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ
30. Լվով, 21 մայիսի, 1978 – Լվովի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ
31. Լվով, 22 մայիսի, 1978 – Լվովի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ
32. Կիև, 27 մայիսի, 1978 – Ուկրաինայի պետական վաստակավոր ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբ
33. Լենինգրադ, 20 հոկտեմբերի, 1978 – Լենինգրադի ֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբ, Լենինգրադի ֆիլհարմոնիայի Դ.Դ.Շոստակովիչի անվան Մեծ համերգասրահ
34. Լենինգրադ, 21 հոկտեմբերի, 1978 – Լենինգրադի ֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբ, Լենինգրադի ֆիլհարմոնիայի Դ.Դ.Շոստակովիչի անվան Մեծ համերգասրահ
35. Ռիգա, 13 նոյեմբերի, 1980 – Լատվիական ԽՍՀ պետական սիմֆոնիկ նվագախումբ, Ֆիլհարմոնիայի համերգասրահ
36. Կաունաս, 18 նոյեմբերի, 1980 – Լիտվական ԽՍՀ պետական սիմֆոնիկ նվագախումբ
37. Վիլնյուս, 19 նոյեմբերի, 1980 – Լիտվական ԽՍՀ պետական սիմֆոնիկ նվագախումբ

Հ.Չեքիջյան-սիմֆոնիկ դիրիժորի հարուստ ու բազմազան նվագացանկն ընդգրկում է տարբեր դարաշրջանների և տարբեր ոճերի վոկալ-սիմֆոնիկ և սիմֆոնիկ երաժշտության բազմաթիվ նմուշներ՝ Բեռլինգի «Ռեքվիեմից» ու «Te Deum»-ից՝ մինչև Արամ

Խաչատրյանի «Ձոն ցնծության», Բեթհովենի Իններորդ սիմֆոնիայից ու «Ֆանտազիայից»՝ մինչև Էդգար Հովհաննիսյանի «Սարդարապատ» ու «Էրեբունի-Երևան», Վերդիի «Ազգերի հիմնից» ու «Ռեքվիեմից»՝ մինչև Կառլ Ջենկինսի «Սիմֆոնիկ Ադիեմոս»:

Հավարտ շարադրանքի՝ ևս մեկ անգամ շնորհավորելով մեր թանկագին Մաեստրոյին փառապանծ հոբելյանի կապակցությամբ՝ մաղթենք արևշատությամբ, երջանկությամբ ու ստեղծագործական նորանոր նվաճումներով լեցուն կյանքի բազում տարիներ՝ հանուն հայ դիրիժորական արվեստի հետագա զարգացման, հանուն հայ և համաշխարհային վոկալ-սիմֆոնիկ ու խմբերգային երաժշտության հանրահռչակման:

Շնորհավո՛ր հոբելյանդ՝ Ամենայն հայոց մաեստրո:

Օրհնվի ծնունդդ՝ երգչախմբային արվեստի մարշալ:

Անահիտ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս,
արվեստագիտության թեկնածու, դոցենտ

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԵՍՏՐՈ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Հոգևոր երաժշտությունը՝ հայ և օտարազգի, իր կայուն, խիստ կարևոր և ծանրակշիռ տեղն ու դերն ունի Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի կատարողական երկարամյա և բազմաբեղուն գործունեության մեջ, և ոչ պատահականորեն: Արևմտահայ, պոլսեցի աստվածասեր և բարեպաշտ գերդաստանի զավակն ըստ ընտանեկան ավանդույթի, մշտապես հաճախել է եկեղեցի¹, մասնակցել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տարբեր արարողակարգերի, հասակ առել քրիստոնեական շնչով, գաղափարներով և զգացմունքներով լուսավորված միջավայրում: Միաժամանակ Չեքիջյանները Պոլսում հայտնի էին երաժշտական ծիրքով և հակումներով՝ կլարնետահար պապիկը, դաշնամուրին տիրապետող մայրը, Կոմիտաս վարդապետի պոլսական երգչախմբի նվիրյալ անդամ, երգիչ, նաև՝ ջութակահար հայրը:

«12-13 տարեկանում արդեն նա (Չեքիջյանը՝ Ա.Բ.) երգում էր եկեղեցու երգչախմբում, Ստամբուլում՝ լինելով խմբի անդամներից ամենակրտսերը»²: Իսկ 14 տարեկանից և այնուհետև, որպես ուսում առած պրոֆեսիոնալ խմբավար, դիրիժոր³ ղեկավարել է Կ.Պոլսի

¹ Մեր գրույցի ընթացքում Մաեստրոն հիշեց իր մանկական տարիների շաբաթական «պարտադիր» այցելությունները պոլսական հայ եկեղեցիներ, տատիկի հորդորով և ուղեկցությամբ:

² **Ասատրյան Ա.**, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 24:

³ 1944-1951 թթ. Չեքիջյանը սովորել է Ստամբուլի կոնսերվատորիայի դիրիժորական բաժնում, 1951-1953 թթ.՝ Փարիզի «Ecole normale de Musique» կոնսերվատորիայում: Աշակերտել է Ժան Ֆուրնեին: Տե՛ս **Ասատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 26: Հետաքրքրական է, որ նույն տարիներին Փարիզում Մաեստրոն

հայկական եկեղեցիների երգչախմբերը, այդ թվում «Դուրյան» և Սուրբ Աստվածածին Մայր Եկեղեցուն կից դպրաց դասի երգչախումբը: Վերջինս տարբեր տարիների ղեկավարել են պոլսահայ նշանավոր երաժիշտներ, Կ.Պոլսի ԺԹ.-Ի. դդ. երաժշտական գրեթե ողջ ընտրանին, այդ թվում ձայնագրագետ, երաժիշտ-տեսաբան, մանկավարժ, երգահան, Կ.Պոլսում հայտնի դպրապետ, հայկական նոտագրության ստեղծող Համբարձում Լիմոնճյանը (1768-1839), այնուհետև լիմոնճյանական համբավավոր դպրոցի հաջորդ ներկայացուցիչներ Արիստակես Հովհաննիսյանը (1812-1878), Նիկողայոս Թաշճյանը (1841-1885)⁴, Գրիգոր Մեխերյանը (1866-1937)⁵: Մի առ ժամանակ երգչախումբը ղեկավարել են Էդգար Մանասը (1875-1964)⁶, ինչպես նաև Կոմիտաս վարդապետը⁷ և

մասնագիտացել է նաև որպես ինժեներ-քիմիկոս, տե՛ս նույն տեղում, էջ 120:

⁴ Թաշճյանի ղեկավարությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում 1870-ականներին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցու նախաձեռնությամբ, հրամանով, հովանավորությամբ, նաև՝ երգեցողությամբ, խազերի կորստից հետո, հայկական նոտագրությամբ ձայնագրվեցին և ապա լույս տեսան Հայ Առաքելական սուրբ Եկեղեցու երեք հիմնական ձայնագրյալ ժողովածուները՝ «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» (թաշճյանական Պատարագը, Վաղարշապատ, 1874, երկրորդ հրատարակությունը՝ 1878), «Շարական հոգետոր երգոց» (թաշճյանական Շարակնոցը, Վաղարշապատ, 1875) և «Երգք ձայնագրեալք ի Ժամագրոց» (թաշճյանական Ժամագիրքը, Վաղարշապատ, 1877), որ մեծագույն իրադարձություն էր հայ եկեղեցական երաժշտության, և ընդհանուր առմամբ, ազգային մշակութային պատմության մեջ:

⁵ Գ.Մեխերյանի մասին պահպանված տեղեկությունները սակավաթիվ են: Հայտնի է, որ աշակերտել է Ն.Թաշճյանին, վարել է Կ.Պոլսի Մայր Եկեղեցու երաժշտապետի պաշտոնը, դասավանդել է հայ ձայնագրություն և շարականներ, հեղինակել է դպրոցական և հոգևոր երգեր, տե՛ս **Թէոդիկ**, Ամէնուն Տարեցոյցը, ԺԷ. տարի, Կ.Պոլիս, տպագրութիւն՝ Մ.Յովակիմեան, 1923, էջ 257: Միաժամանակ «առաջին բազմաձայն եկեղեցական երգեցողությունն ու երգեհոնի գործածությունը Մայր Եկեղեցում տեղի է ունեցել 1906-ին՝ Գ.Մեխերյանի ղեկավարությամբ», «Քրիստոնյա Հայաստան», հանրագիտարան, Երևան, 2002, էջ 506:

⁶ Է.Մանաս՝ պոլսահայ կոմպոզիտոր, խմբավար, դիրիժոր, մանկավարժ,

ուրիշներ: Կ.Պոլսում երիտասարդ Չեքիջյանը ղեկավարել է նաև «Կոմիտաս», «Մխիթար», «Գողթան», «Նարեկացի», «Սկիստարի միացեալ», «Չեքիջյան» երգչախմբերը, որ գործում էին, ձգտելով հայ հոգևոր երգը փրկել օրհասից, և Մաեստրոյի հոգևոր հայրենիքն էին օտարության մեջ⁸:

Ահա այսպիսին էր Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի կյանքում հոգևոր երաժշտության մեկնարկը, որն այնքան արգասավոր շարունակություն ունեցավ, երբ երիտասարդ երաժիշտը դարձի եկավ հայրենիք՝ Խորհրդային Հայաստան: 1960-ական թվականներն էին, Խորհրդային Միության պատմության հայտնի, այսպես կոչված «խրուշչովյան ձնհալի» տարիները, երբ տասնամյակների պարտադրված, արհեստական արգելքները, այդ թվում և հոգևոր երաժշտության նկատմամբ նույնպես, փոքր-ինչ տեղի էին տվել մեղմացել, թուլացել: Հոգևոր երաժշտության, հատկապես վերջինիս կատարողականության զարթոնք էր սկսվել մեզանում⁹, ընդ որում թե՛ վոկալ, թե՛ նվագարանային, թե՛ վոկալ-նվագարանային, որի եռանդուն կերտողներից դարձավ Մաեստրո Հովհաննես Չեքիջյանը: Ավելացնենք, որ Մաեստրոյի գալուստն այդ տարիներին նպաստեց, ընդհանրապես, հայաստանյան մշակութային կյանքի աշխուժացմանը և վերելքին (Վ.Սվազյան)¹⁰:

Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի՝ կապելլայի չեքիջյանական 58-ամյա շրջանի բազում համերգների ծրա-

երաժշտական-հասարակական գործիչ: Կրթությունը ստացել է Իտալիայում, դասավանդել է Կ.Պոլսի կոնսերվատորիայում: Տե՛ս **Մուրադյան Մ.**, Ուրվագիծ արևմտահայ երաժշտության պատմության, Երևան, 1989, էջ 278:

⁷ «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 506:

⁸ **Ասատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 27:

⁹ Այս առիթով բավական է հիշել երգիչներ Լուսինե Զաքարյանի, Խորեն Պալյանի, երգիչ-կոմպոզիտոր Արզաս Ոսկանյանի, երգեհոնահար Վահագն Ստամբուլյանի, Զարեհ Սահակյանի և մյուսների կատարողական գործունեությունն այս շրջանում:

¹⁰ Տե՛ս **Առաքելյան Ա.**, Հովհաննես Չեքիջյան, Ալբոմ-ժողովածու, Երևան, 2014, էջ 88:

գրերում (նաև ծրագրերից դուրս) թե՛ Հայաստանում, թե՛ այլուր¹¹, մշտապես ընդգրկվել է հոգևոր երաժշտությունը (հայ և օտարազգի), որ կարծում ենք, Մաեստրոյի կատարողական արվեստի կարևոր և անխախտ սկզբունքներից է: Եղել են և հոգևոր երաժշտությանը նվիրված ամբողջական համերգներ նույնպես:

Հարկ է նշել, որ Մաեստրոն սովորաբար նախընտրում է մեծ կտավի, բազմամաս, կանտատային-օրատորիալ ժանրի հոգևոր ստեղծագործություններ¹²: Կապելլայի երկացանկում ներկայացված են վերջինիս գրեթե բոլոր տեսակները: Դրանք են Ռեքվիեմը (լատ. *requies` հանգիստ*)՝ Հոգեհանգստյան, սգո Մեսսան¹³, *Stabat Mater* (“*Stabat Mater dolorosa*”, լատ.՝ «Մայրը ողբացող կանգնած»)՝ եվրո-

¹¹ Կապելլան ունեցել է 868 համերգ (տեղեկությունը՝ Ա.Ասատրյանից), Խորհրդային Միության նախկին գրեթե բոլոր հանրապետություններում, արևելյան և եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում և այլն:

¹² Չեքիջյանական կապելլայի երկացանկում կանտատային-օրատորիալ ժանրի թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ երկերի առկայության և կարևոր նշանակության մասին տե՛ս **Պետրոսյան Ա.**, Վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունները Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ, Հովհաննես Չեքիջյան-85, Գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 2014, էջ 124-132:

¹³ Ինչպես հայտնի է, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու արարողակարգում բացակայում է սգո Մեսսան կամ Պատարագը՝ Ռեքվիեմը: Սակայն վերջինիս համապատասխան, նույն գործառնությամբ առկա է հայ եկեղեցու Հոգեհանգստյան կարգերի մի ամբողջ շարք «Կարգ ննջեցելոց» ընդհանուր անվանումով: Դրանք են. աշխարհաթաղ, կանոն (կարգ՝ *Ա.Բ.*) Մեծի Այգուց («Այգալաց՝ կրոնական արարողութիւն, որ կատարվում է ննջեցեալի գերեզմանի վրայ թաղման յաջորդ օրը», Հայերէն բացատրական բառարան, կազմեց Ստ.Մալխասեանց, Երևան, 1944, էջ 74), Կանոն Մեծի Եօթնաւոր կատարելոյ և այլն, յուրաքանչյուրն իր բովանդակությամբ, ենթամասերով, աղոթքներով, քարոզներով, մաղթանքներով, երաժշտական բազմապիսի, հարուստ բաղադրիչով (սաղմոս, երգ, շարական), տե՛ս «Մաշտոց» Հայ Եկեղեցու ծիսարանը: Ռեքվիեմի, որպես հոգևոր երաժշտության համերգային ժանրի, տարբեր առիթներով անդրադարձել են հայ կոմպոզիտորներ Ա.Հարությունյանը, Ա.Աճեմյանը, Վ.Բաբայանը, Տ.Մանսուրյանը, տե՛ս Հայ երաժշտության հանրագիտարան, Երևան, 2019, էջ 564:

պական միջնադարյան սեկվենցիան, որի հիմքով կոմպոզիտորական արվեստում ստեղծվեցին բազմաձայն երկեր և որը, ըստ բովանդակության, համեմատելի է հայ միջնադարյան անանուն «Տիրամայրն հանդէպ Որդւոյն ի խաչին կայր տրտմագին» Խաչի հոգեզմայլ տաղի հետ: Կապելլայի երկացանկի հոգևոր ստեղծագործություններից են նաև *Te Deum* (“*Te Deum laudamus*”, լատ.՝ «Օրինում ենք Քեզ, Տէր») փառաբանական օրհներգը, *Magnificat* (“*Magnificat anima mea Dominum*”, լատ.՝ «Մեծացուցէ անձն իմ զՏէր»), ըստ Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնի բացականչության¹⁴), որը նույնպես զուգահեռներ ունի հայ միջնադարյան երաժշտության հետ, մասնավորապես, «Մեծացուցէ» տիպի շարականների, որոնք վերագրվում են Ս. Մովսես Խորենացուն (Ե. դ.): Հաջորդը՝ Պատարագն է, Հայ Եկեղեցու ամենախորհրդավոր, հանդիսավոր և ծավալուն նույնանուն արարողակարգին ուղեկցող բազմամաս և բազմաբովանդակ երաժշտաբանաստեղծական շարքը, որը Մ.Եկմայրանի, Կոմիտաս Վարդապետի և այլ կոմպոզիտորների (հայ, նաև այլ ազգի՝ Քր.Կարա-Մուրզա, Այտընյան-Բյում, Է.Մանաս, Ա.Պարթևյան, Պ.Բիանկինի, Կրապիվնիցկի և ուր.) «ձեռամբ» վերածվեց հոգևոր կանտատի:

Հատկանշական է, որ համերգային կյանքում հայտնի հոգևոր ստեղծագործությունների հետ մեկտեղ, ինչպես օրինակ կապելլայի երկացանկում ընդգրկված են Մոցարտի և Վերդիի Ռեքվիեմները, հատվածներ Բախի *h-moll* Մեսսայից, Վիվալդիի Գլորիան, Մաեստրոն մեծ մասամբ անդրադառնում է սակավ հնչող երկերի: Դրանցից է Մաեստրոյի համար, իր իսկ բնորոշմամբ՝ «պաշտելի» Հեկտոր Բեռլիոզի մեծածավալ «Ռեքվիեմը», որի պրեմիերաները Խորհրդային Միությունում կայացան Երևանում (1967թ.), ապա Մոսկվայում, Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ), Մինսկում, Թբիլիսիում, Վիլնյուսում, Ռիգայում, մասնավորապես վերջինիս հայտնի Դոմյան տաճարում, ամենուրեք արժանանալով բարձր գնահատականի: Ուշագրավ է այս առիթով Ի. դարի նշանավոր դիրիժոր, Լենին-

¹⁴ Տե՛ս Ավետարան ըստ Ղուկասի, Ա. 46:

գրադի ֆիլիարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի բազմամյա գեղարվեստական ղեկավար, Շոստակովիչի սիմֆոնիաների առաջին և լավագույն կատարող Եվգենի Մրավինսկու կարծիքը. «Ես բախվեցի մի այնպիսի մեկնաբանի, որը ստիպեց ինձ մոռանալ պարտիտուրը և իմ պրոֆեսիոնալ վերաբերմունքը երաժշտության հանդեպ: Ես ականա դարձա սովորական, հիացած ունկնդիր և երջանիկ էի, որ այդպիսի ուրախություն վայելեցի»¹⁵:

Մաեստրոն առաջինը Խորհրդային Միությունում կատարել է նաև Գաբրիել Ֆորեի «Ռեքվիեմը», ընդ որում ի թիվս այլ համերգասրահների, ԽՍՀՄ Գլխավոր դահլիճում՝ Մոսկվայի Կրեմլի համագումարների պալատում:

«Անբասիր կատարում» (Ի.Կոզլովսկի)¹⁶, «իսկական մշակութային և երաժշտական իրադարձություն, ոչ միայն Լենինգրադի, այլև մեր երկրի (ԽՍՀՄ-ի՝ Ա.Բ.) ողջ երաժշտական կյանքի համար»¹⁷, այսպիսին էին Բեռլինի 1001 մասնակիցների՝ մի քանի տարբեր երգչախմբերի, սիմֆոնիկ նվագախմբի, երգեհոնի համար նախատեսված «Te Deum» օրատորիայի առաջին կատարման արձագանքները:

Մաեստրոյի երկացանկի պրեմիերաներից է եվրոպական երաժշտության պատմության տարբեր շրջանների և երաժշտական ոճերի վերաբերող Stabat Mater երեք կանտատները, որոնք հեղինակել են Ջոակինո Ռոսինին (1832թ.), Կարոլ Շիմանովսկին (1926թ.), վերջինիս երկը կատարվել է հեղինակի հայրենիքում՝ Լեհաստանում, և մեկ այլ ևս լեհ ժամանակակից աշխարհահռչակ կոմպոզիտոր Կշիշտոֆ Պենդերեցկին (1965թ.), որն իր միկրոխրոմատիկ (ոչ տեմպերացված) հնչյուններով հագեցած, երբեմն 38-ի հասնող ձայների պոլիֆոնիկ բարդ կերտվածքով, խոր հուզականությամբ համակված երկի երևանյան պրեմիերայի մասին

¹⁵ Առաքելյան Ս., նշվ. աշխ., էջ 235:

¹⁶ Նույն տեղում, էջ 159:

¹⁷ Фомин В. И мастерство и вдохновение, "Коммунист", 2 февраля 1977: Բերված է՝ Հարությունյան Ա., Հովհաննես Չեքիջյանը և Ֆրանսիան հոդվածից, Հովհաննես Չեքիջյան-85, էջ 149:

ասել է. «Չէի պատկերացնում, որ երկս՝ "Stabat Mater"-ը կ'ներկայացվի այսքան խորաթափանց, այսքան վարպետորեն և գեղարվեստորեն: Զարմանում եմ, որ երգչախումբը երգեց անգիր¹⁸: Երջանիկ եմ, որ արժանացա ստեղծագործությանս այսօրինակ հիանալի կատարման»¹⁹: Կապելլայի պրեմիերային գործերից է Ֆրանց Շոբերտի «Միրիամի հաղթական երգը» Աստվածաշնչյան Հին Կտակարանային սյուժեով գրված կանտատը, որն առաջին անգամ ԽՍՀՄ-ում կատարվել է Մոսկվայում 1964-ին, երգչախմբի գործունեության սկզբնական շրջանում:

Մաեստրոն առաջիններից անդրադարձավ սփյուռքահայ կոմպոզիտորների վոկալ-սիմֆոնիկ հոգևոր ստեղծագործություններին: Դա բազմաձայն Պատարագների շարք է: Մասնավորապես, Վիեննայի Մխիթարյան Միաբանության աբբահայր, եկեղեցական երաժշտության հմուտ գիտակ, ծայնագրագետ, երգիչ, նաև լեզվաբան, գրականագետ Հայր Արսեն արք. Այտընյանի «Երգեցողութինք Սրբոյ Պատարագի» երկսեռ երգչախմբի, մենակատարների, սիմֆոնիկ նվագախմբի և երգեհոնի համար, որ ավելի հայտնի է որպես Այտընյան-Բյոմ Պատարագ, և առաջիններից է որպես բազմաձայն Պատարագ հայ իրականության մեջ (Պատարագի նախնական՝ քառաձայն խմբերգային տարբերակը լույս է տեսել 1877թ.)²⁰: Մաեստրոն կատարել է նաև Էդգար Մանասի բազմա-

¹⁸ Հարկ է նշել, որ անգիր երգեցողությունը չեքիջանական կապելլայի կատարողական սկզբունքներից է:

¹⁹ Բերված է՝ **Аветисян Н.** Эстетические взгляды Оганеса Чекиджяна, Հոլհաննես Չեքիջյան-85, էջ 79:

²⁰ Առաջին անգամ Հ.Այտընյանի Պատարագն ամբողջությամբ լույս է տեսել Վիեննայում, 1950թ.: Այս բազմաձայն Պատարագի մասին տե՛ս **Մուրադյան Մ.**, Հայկական Պատարագը և նրա մշակումները, Հայկական արվեստ, Հոդվածների ժողովածու, գիրք 2, Երևան, 1984, էջ 154; **Ռէխեսան Ժ.**, Ս.Պատարագը և Հայկական Պատարագի զարգացումն ու բազմաձայն տարբերակները, Բերիոյ հայոց թեմ, Տաթև հայագիտական տարեգիրք 1, Հալէպ, 2008, էջ 428; **Բաղդասարեան Ա.**, Այտընեան-Բեոմ, Երգեցողութինք Սրբոյ Պատարագի, Հանդէս ամսօրեայ, հայագիտական ուսումնաթերթ, Վիեննա-Երեւան, 2012, էջ 335:

ծայն Պատարագը երկսեռ երգչախմբի, մենակատարների և երգեհոնի համար²¹: Է.Մանասի աշակերտ Ա.Պարթևյանի Պատարագը երկսեռ երգչախմբի և նվագախմբի համար (Messa Oratorio en Fa mineur), նվիրված Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին²²:

Մաեստրոն անդրադարձել է նաև ամերիկահայ նշանավոր կոմպոզիտոր Ալան Հովհաննեսի ստեղծագործությանը՝ աշխարհի տարբեր համերգասրահներում հնչեցնելով նրա «Մագնիֆիկատ»-ի եզրափակիչ «Գլորիա» մասը²³:

Վերջապես, Մաեստրոյի կատարողական արվեստի հիմքն ու միաժամանակ գագաթներն են հայ հոգևոր երաժշտության զույգ կոթողները՝ եկմայանական և կոմիտասյան բազմաձայն Պատարագները: Հիշենք նաև, որ կոմիտասյան Պատարագը, ինչպես և Կոմիտաս վարդապետի կոմպոզիտորական ամբողջ ժառանգությունը, նաև ոգին ու շունչը Մաեստրո Հ.Չեքիջյանի գիտակցական ողջ կյանքի մշտական և անբաժանելի ուղեկիցներն են:

Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի կատարողական բարձր արվեստը, բազմամյա արգասավոր, աննախադեպ լայն ընդգրկմամբ, նվիրյալ գործունեությունը, որ, ինչպես հայտնի է, վաղուց արդեն թևակոխել են ազգային սահմանները և վերածվել միջազգային նշանակության երևույթի, նկատվել, գիտակցվել և բազմիցս գնահատվել են՝ բանավոր և գրավոր՝ ելույթներ, կարծիքներ, ուղերձներ, շնորհավորանքներ, գրքեր, հոդվածներ և այլն: Միա-

²¹ Հրատարակված պարտիտուրը պահպանվում է Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (ԶԱԳԱԹ), Է.Մանասի ֆոնդ, անմշակ:

²² Ա.Պարթևյան (1903-1986), ծնվել է Կ.Պոլսում, սովորել է Փարիզի երաժշտանոցում, ապա «Սքոլա Քանթորում» երաժշտական հաստատությունում, պրոֆ. Վենսան Դ'Էնդիի ղեկավարությամբ: Հեղինակի ղեկավարությամբ Պատարագը կատարվել է 1979թ. Փարիզի Ս. Երրորդություն (Sainte Trinité) եկեղեցում, տե՛ս **Ռեխեսան Ժ.**, Ս. Պատարագը եւ հայկական Պատարագի զարգացումն ու բազմաձայն տարբերակները, էջ 458:


²³ Տե՛ս **Երնջակյան Լ.**, Հովհաննես Չեքիջյանը և Սփյուռքի երաժշտարվեստը, Հովհաննես Չեքիջյան-85, էջ 62:

Ժամանակ Մաեստրոն արժանացել է բազում և բազմապիսի պարգևների: Դրանցից, նկատի ունենալով մեր խոսքի բովանդակությունը, առանձնացրել ենք, մասնավորապես, Հայ Եկեղեցու ամենաբարձր պարգևները, որոնք շնորհվել են Մաեստրոյին մեր եկեղեցու հայրերի կողմից:

Դրանք են.



Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոս
Գարեգին Բ-ի Ս. Մեսրոպ Մաշտոցի
շքանշանը:



Ամենայն հայոց կաթողիկոս
Գարեգին Ա-ի Ս. Սահակ
Ս. Մեսրոպ շքանշանը:




Մխիթարյան Միաբանության
հիմնադիր Մխիթար
Աբբահոր շքանշանը:



Մեծի տանն Կիլիկիոյ Արամ
Ա կաթողիկոսի Ասպետի
կարգի շքանշանը:



Պոլսի պատրիարքական Աթոռի Մաղաքիա պատրիարք Օրմանյանի անվան Ոսկեայ շքանշանը Մաեստրոյի 90-ամյակի առթիվ:



Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի Գիր հայրապետական օրհնութեան՝ Մաեստրոյի 80-ամյակի առթիվ:

ԾԱՅՐԱԳԻՏՆ ԳԱՏՐԻԱՐԺ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ՝ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱՇԷՆ



SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 1739

23 դեկտեմբերի, 2018 թ.

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ
ԱՆՎԱՆԻ ԵՐԱԺԻՇՏ ԵՎ ԽՄԲԱՎԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԵՔԻՁՅԱՆԻ
ՇՆՆԱՅԻՆ 90-ՐԴ ՀՈՐԵԼՅԱՆԻ ԱՌԻՑՈՎ

Մենք զոհարարում ենք Հովհաննես Զեքիյան,
Հայրապետական սիրով և օրհնությամբ Մեր սրտաբուխ շնորհավորանքներն ու
բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ ձննդյան 90-ամյա հոբելյանի նշանակալի առիթով: Հոգու
ջերմ գրգռումներով կիսում ենք Ձեր և երաժշտասեր Մեր զավակների ուրախությունը:
Տասնամյակներ առաջ Դուք հաստատվեցիք Մայր Հայրենիքում և անհուն նվիրումով
երաժշտական Ձեր փորձառությունն ու տաղանդը ծառայեցիք հայրենի երկրում
երգարվեստի զարգացմանը՝ մնայուն ավանդ բերելով մեր մշակույթի առաջընթացին: Հայ
մշակույթին նոր ճանաչում և բարի համբավ է հավելել Ձեր արդյունագար գործունեությունը,
ինչպես նաև Ձեր հմուտ ու բարձրարժեք ողբերգությունը՝ Հայաստանի պետական
ակադեմիական երգչախմբի առաքելությունը, որը դասվում է աշխարհի լավագույն
երգչախմբերի շարքում: Երգչախմբի հարուստ երգացանկում Դուք մշտապես կարևորել եք
հայ և համաշխարհային դասական երգարվեստի արժեքավոր ստեղծագործությունների,
ինչպես նաև՝ հայ հոգևոր երգի ներկայացումը, որը սիրով ու հիացմունքով է ընդունվել
արվեստասեր լայն շրջանակներում: Դուք առաջնորդվել եք այն վեհ գաղափարով, որ
երաժշտությունը կրթում և ազնվացնում է մարդկային հոգիները, և ամեն ջանք պետք է ի գործ
դնել հայկական մեր երգն ու երաժշտությունն անաղարտ պահելու համար, որպեսզի
շարունակի արտահայտել իր վաղնջական բույրը, անկեղծ գրգռումը, մեր ժողովրդի՝ հույսով
լուսավոր հոգին և արդար ու խաղաղ կյանքի ձգտումները: Երաժշտական բացառիկ
շնորհներով, որպես հմուտ ու բարձրաճաշակ խմբավար, Դուք մեծապես գնահատված ու
սիրված եք և լայնորեն ճանաչված աշխարհի տարբեր երկրներում:
Սիրելի մանտրո, այս տոնական առիթով գնահատանքով ենք անդրադառնում, որ
մեր մշակույթի անդատանում մեծ վաստակի և հայ երգարվեստի զարգացմանն ի նպաստ
անխնայ և բազմաթիվ ջանքերի համար Մենք մեր Սուրբ Եկեղեցու հավատավոր զավակիդ,
մեծ երաժշտիդ ու արվեստագետիդ շնորհիվ ենք Հայ Եկեղեցու պատվո բարձր պարգևը՝
Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ շրանշանը: Դուք արդարորեն գնահատվել եք մեր հայրենի
պետության կողմից՝ արժանանալով Հայաստանի ազգային հերոսի բարձրագույն կոչմանը:
Տոնական այս առիթով ի խորոց սրտի աղոթք ենք բարձրացնում, որ Տերը
բացառողություն, ամենայն բարիք պարգևի Ձեզ՝ շարունակելու համար նորանոր
հաջողություններով ծառայել մեր երկրին, ժողովրդին ու մշակույթին:
Տիրոջ սերը, շնորհն ու օրհնությունները թող անպակաս լինեն Ձեր օրհնյալ կյանքից,
ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Եվ, վերջապես, նույն առիթով Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի
շնորհավորական ուղերձը:

Маргарита РУХКЯН
ведущий научный сотрудник Института искусств НАН РА,
заслуженный деятель искусства РА,
доктор искусствоведения

РАЗВИТИЕ КУЛЬТУРНЫХ ТРАДИЦИЙ – ОПЛОТ НАЦИОНАЛЬНОГО САМОСОЗНАНИЯ

Значение и роль искусства возрастают с его развитием. Я хочу обратить внимание именно на этот момент – на развитие культурных традиций, в процессе чего и раскрываются их глубинные смыслы, расшифровываются древние символы, открывается панорама исторического пути, осознается мессианская роль культуры и особенности национального художественного характера. Это касается всего: и общего направления культуры, развитие которой обычно происходит в разных направлениях, и конкретно развития отдельных сфер искусства – театра, музыки, поэзии, кино, и, что особенно показательно, установку культуры на определенные жанры творчества.

Для каждого народа путь развития искусства, и в частности музыкального, специфичен и определяется, по существу, теми подспудными процессами, которые задействованы в пользу сохранения народа, его территории, его языка и традиций.

Таким решающим моментом в радикальном обновлении традиций армянской народной и древней профессиональной музыки, обогащения ее конструктивных свойств стало активное внедрение в жизнь армянского народа хорового искусства. О том, насколько этот процесс был для армянского народа революционным и в народной массе трудно исполнимым, есть сотни признаний и рассказов как самих сподвижников хорового искусства, так и свидетелей их деятельности и работы.

Насаждение в монодической культуре многоголосия, искусства хора требовало героических усилий. Мы знаем по воспоминаниям Кара-Мурзы, как армянских крестьян долго уговаривали

встать плечом к плечу, и вместе одновременно петь, да еще в новой гармонической системе, согласованной с европейской мажорно-минорной. Эта работа требовала и огромных усилий, и больших знаний, и наличия того музыкального слуха, который искал и находил путь к выявлению самобытности национального музыкального языка уже в русле европейских традиций.

О том как достигал этой цели Комитас, он рассказал в своих многочисленных статьях, лекциях, записках. Процесс приобщения армянского населения к многоголосию легче происходил в городах, в больших культурных центрах. И уже в начале XX века европейский, да и армянский слушатель открыл для себя новую музыкальную культуру, представшую в хорах Комитаса. Произошла, фактически, культурная революция, которую возглавили лучшие из лучших музыкантов Армении – Комитас, Христофор Кара-Мурза, Мака́р Екмалян, Спиридон Меликян и иже с ними.

О том, насколько она была успешной, можно судить опять же по документам, рассказывающим об огромном успехе выступлений хора, руководимого Комитасом, как в Тифлисе, Александрополе, так и в Европе – в Берлине и Париже.

Органичное продвижение в армянский быт и армянское музыкальное искусство многоголосия безусловно свидетельствует о глубинных пересечениях армянской культуры с культурой Европы. Истоки этих пересечений лежат в самой истории Армении, одной из первых стран, избравшей путь христианской идеологии.

Но есть еще и социальная мотивировка, которая всегда провоцирует новаторские сдвиги в развитии искусства. В приобщении армянского народа к искусству хора лежала неизмеримо более высокая идея, чем методический переход от монодии к многоголосию. Эта мотивировка была одухотворена назревшей необходимостью сопротивления враждебному по отношению к армянскому народу поведению стран, в среде которых давно уже шло автономное развитие армянской культуры. Армянское нагорье, объединяющее армян, оказалось разделенным на части. Византия, в ко-

торой армяне время от времени оказывались и на императорском троне, пала под натиском завоевателей, пришедших с Востока. Прекратило свое существование Киликийское царство, Ани разрушен. Вся остальная история армянского народа была освящена борьбой за свою самобытность, за сохранение языка, своей книжной, архитектурной и музыкальной культур, своей духовности.

Хоровая практика под руководством армянских первопроходцев стала прекрасной прелюдией вхождения Армении в европейский мир. Армения этим самым укоренила свои истоки, доказала миру свое христианское первосвященство.

Такого рода переформирования художественных направлений, смена приоритетов, рождение новых конструктивных идей происходят как подтверждения духовной силы народа. Они провоцируются народом и им же признаются. Спонтанно и сообразно с цивилизационным развитием стала подниматься и развиваться национальная культура Армении в XX веке. Музыкальное искусство Армении предстало на широком фронте таких фундаментальных музыкальных жанров как опера, симфония, вокально-симфоническая традиция, камерно-ансамблевое творчество. Во всем своем великолепии родился музыкальный национальный театр, истоки которого берут начало из середины XIX века, из творчества Т.Чухаджяна.

И мы понимаем, что такая фундаментальная перестройка музыкальной системы от монодии к многоголосию, от замкнутой обрядово-ритуальной сферы творчества к широкому, артистическому, концертному представлению своих музыкальных традиций было не только естественным стремлением приобщиться к ценностям европейской музыки, к ее традициям, но и резонансным отголоском предельного напряжения геополитических проблем, своеобразным ответом армянского народа на нарушение международных соглашений об отношении к армянам в пределах Османской империи, поставившей перед собой цель уничтожить этот народ.

Открытое приобщение к европейским традициям, слияние с ними в сфере образования и созидания дало блистательные результаты во всех сферах искусства – в музыке, в живописи, в театре, и что существенно, в разных странах и городах, где расцветал армянский гений.

В сложное и критическое для армянского народа время – в последней четверти XIX века и в начале XX – эти художественные результаты творчества армян, работающих в разных городах и странах, сигнализировали миру об опасности нависшей над народом. Искусство для армянского художника было дорогой к спасению народа.

Именно так, открыто проявляла себя новая хоровая культура Армении.

Да, в Армении хоровое искусство больше чем музыка. Это сила, консолидирующая народ. Это искусство, которое стало для Армении своеобразной панацеей и помогло обрести армянскому народу прочную основу дальнейшего культурного развития.

Интересно, что хор как искусство со временем все более возвышается в своей роли и раскрывает свое исключительное значение в армянской музыкальной культуре. Сегодня хоровое искусство предстает фундаментальной основой в формообразовании армянской современной музыки.

Еще не были написаны первые армянские сонаты и симфонии, но драматургическая концепция симфонизма уже прозвучала в хорах Комитаса. Его хоровые произведения, в частности, "Гутани ерг", стали вровень с драматическими хоровыми произведениями европейских мастеров. Динамичное развитие мелодического материала, гармоническая напряженность, передающая в хоровых аккордах невероятную степень скорби, мощные кульминации, торжественный и утверждающий духовную силу финал резонировали со звучанием Реквиемов Верди и Моцарта... Этот код симфонического и драматического содержания хоров Комитаса гениально раскрыл в своей концертной деятельности главный

дирижер Государственной хоровой капеллы Армении Арам Тер-Ованнесян.

И характерно, что именно этот масштаб драматизма, этот стиль исполнения, выражающий героический дух народа, оставил огромное впечатление на молодого Оганеса Чекиджяна. Он услышал концерт Государственной капеллы Армении в Москве, и, как рассказывает, задался вопросом: "Что эта за страна такая, которая имеет такой мощный хор?" И, отказавшись от приглашения работать в Москве, он приехал в Армению. Это было в 1961 году.

В этом решении проявился и его характер, и его понимание общественно значимой роли хорового искусства в Армении. Проявилось и его лидерское стремление возглавить эту духовнообразующую систему армянского современного искусства.

Можно сказать, что подспудно, судьбоносные эволюционные процессы работали на пользу армянскому искусству. На смену одному полководцу, создавшему оборонительную систему защиты национальных духовных ценностей, пришел другой. Оганес Чекиджян поддержал этот гарибальдийский тон армянского хорового искусства и умножил его звучание фантастическим масштабом концертной деятельности Государственной капеллы Армении, которую он возглавляет уже почти 60 лет.

Армянская капелла добилась мировой славы, стала непревзойденной по географическим параметрам своей концертной практики – тысячи концертов по всему миру; обширный репертуар – вся европейская классика вокально-симфонической литературы: Реквиемы, Оратории, Мессы, современные большие вокально-симфонические произведения... И над всем этим, проникая в сердце каждого слушателя, слышна драматическая нота комитасовского хора.

Для каждой аудитории концерты Капеллы Армении были и познавательными в плане открытия страны, которую она представляла, и утверждающими самые высокие критерии мирового хорового искусства.

Занимаясь армянским симфонизмом и, в частности, жанром симфонии, я давно уже задаюсь вопросом: что держит жанр симфонии в Армении в такой интенсивной творческой форме? Уже давно в Европе не пишутся симфонии. Этот многофактурный жанр постепенно уходит из сфер современного композиторского творчества; он требует огромных финансовых средств и на содержание оркестров, и на финансовую поддержку композиторов, пишущих симфонии.... Почему же он так укоренен в Армении?

Здесь работает прецедент оборонительной позиции народного менталитета. Когда духовной обороной становится само искусство, в частности, искусство хора.

И в том, что симфония является главным и самым почетным жанром в Армении, мне видится огромная роль армянского хорового искусства, передавшего, заложенную в хорах Комитаса квинт-эссенцию романного исторического содержания, так мощно раскрытого в исполнении выдающегося дирижера своего времени, первого руководителя Государственной капеллы Армении с 1955 по 1960 годы Арама Тер-Ованесяна, и дальше, по наши дни, в интерпретации дирижера мировой славы Оганеса Чекиджяна.

Армянской симфонии есть на что опираться. Эпический дух хоровой армянской культуры продолжает вдохновлять композиторское искусство Армении.

Լուսինե ՍԱՀԱԿՅԱՆ
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի
երաժշտության պատմության ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի դոկտորանտ,
արվեստագիտության թեկնածու, դոցենտ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՄԲԵՐԳԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Հայ կատարողական արվեստի պատմության մեջ երգչա-
խմբային մշակույթն առանձնահատուկ է: Բնագավառ, որն անմի-
ջականորեն կապվում է ազգային երգամտածողություն, ավան-
դույթ, կոմպոզիտորական ստեղծագործություն հասկացությունների
հետ:

Ինչպես կոմպոզիտորական, այնպես էլ խմբերգային արվես-
տի դասական հիմքերը, չափանիշներն ու սկզբունքները ձևավորեց
Կոմիտասը:

Եվ եթե հետկոմիտասյան կոմպոզիտորական դպրոցն այսօր
ներկայանում է իր հսկաներով, ապա Կոմիտասի խմբավարական
արվեստը ևս ունեցավ շարունակություն: Մեծ դասականի խմբա-
վարական ավանդույթների շարունակողն ու կրողն է Հայաստանի
ազգային ակադեմիական երգչախմբի անփոխարինելի ղեկավար
Հովհաննես Չեքիջյանը:

Այսօր՝ Կոմիտաս Վարդապետի 150-ամյա հոբելյանին ընդա-
ռաջ, մենք նշում ենք նաև հայ երգչախմբային արվեստի պատ-
մության մեջ կոմիտասագետ խմբավար Հովհաննես Չեքիջյանի
հոբելյանը: Երջանիկ հնարավորություն ունենք անձամբ մեր խո-
նարհումն ու գնահատանքը փոխանցելու իր գործունեությամբ կեն-
դանի լեգենդ դարձած արվեստագետին, Կոմիտաս խմբավարի ար-
ժանի հետևորդին:

Կոմիտաս-Չեքիջյան կապը բավական խորն է, այն ներկա-
յանում է Ավագի ու Կրտսերի, Ուսուցչի ու Աշակերտի՝ խոնարհումի
արժանի դրսևորումներով:

Ասում են՝ Չեքիջյանի կրծքում կոմիտասյան շունչ կա: Կոմիտասը Չեքիջյանի մեծագույն սերն է. «Կոմիտասն ինձ համար եղավ այն մնայուն հիմքը, որի վրա հետագայում կառուցվեց երաժշտի իմ աշխարհը... Կոմիտասը մեր երգի էպոսն է, այն սրբազան տաճարը, որին պետք է մոտենալ միմիայն երկյուղածությամբ», – խոստովանում է Մաեստրոն:

Չեքիջյանն իր ծնունդով, կոչմամբ, մասամբ էլ՝ ճակատագրով Կոմիտաս Վարդապետի արժանի զավակն է: Կոմիտասապաշտությունը նրան փոխանցվել է ժառանգաբար և հիմնովին:

Չեքիջյանի հայրը՝ Հարություն Չեքիջյանը (Չեքիջը) երգել է Կոմիտաս Վարդապետի՝ Կ.Պոլսում հիմնած «Գուսան» 300-հոգանոց երկսեռ երգչախմբում: Նա նաև ջութակ էր նվագում: Հրաշալի դաշնամուր էր նվագում նաև Չեքիջյանի մայրը՝ տիկին Պերճուհին:

Հարություն և Պերճուհի Չեքիջյանների՝ Շիշլիի թաղամասում (ի դեպ, նույն թաղամասում 1910-15թթ. ապրել է նաև Կոմիտաս Վարդապետը) գտնվող հյուրընկալ տանը հաճախ էին հավաքվում «Գուսան» երգչախմբի անդամները, ովքեր խոսում էին Կոմիտաս Վարդապետի մասին ու երգում նրա բազմաձայնած խմբերգերը: Երաժշտական բացառիկ ընդունակություններով օժտված երեխան լսում էր խմբերգային այն բազմաձայնությունը, որը սովորեցրել էր նրանց Կոմիտաս Վարդապետը: Փոքրիկ Հովհաննեսին ոգևորում էին երգչախմբի երգիչների պատմություններն իրենց Ուսուցչի մասին:

Հովհաննեսը լուրջ էր ու լսում. այդ խոսուն լռությունը հետագայում կդառնա Չեքիջյանի կերպարի բնորոշ կողմերից մեկը: Հինգ տարեկան երեխայի համար սա առաջին ծանոթությունն էր հայ երաժշտության հսկայի արվեստին: Նրա համար դեռ վաղ մանկությունից երաժշտության ծայները հյուսվում էին Կոմիտասի կախարդական հնչյունների միջոցով: Ապագա երաժշտի լսողական փորձն ու ճաշակը ձևավորվում էին Կոմիտասի հղկած մեղեդիների աշխարհում:

Կոմիտասի մասին խոսելիս Չեքիջյանը վերհիշում է հոր պատմությունն այն մասին, որ Վարդապետը նույնիսկ 15 օր հյուրընկալվել է իրենց տանը¹:

Ինչպես Կոմիտասը, Չեքիջյանը կյանքի առաջին կեսին նույնպես եղավ օսմանահպատակ: Երիտասարդի լայնահայաց գիտելիքները ձևավորվեցին մշակութային հարուստ ու բազմազգ մթնոլորտում, որտեղ Չեքիջյանը ստացավ երաժշտական և բնագիտական բազմակողմանի և հիմնավոր կրթություն՝ ուսանելով Ստամբուլի կոնսերվատորիայում, թերևս, այն կոնսերվատորիայում, որ ժամանակին այնպես երագում էր հայ տաղանդավոր երաժիշտների համար բացել Կոմիտաս Վարդապետը:

Բայց ինչպես Կոմիտասը, Չեքիջյանը ևս ուներ առաքելություն. աշխարհում հնչեցնել հայ բնատոհմիկ երգը՝ բացահայտելով ազգային մասնագիտական երաժշտության ինքնուրույն նկարագիրը:

Միևնույն ժամանակ աշխարհի հետ խոսել հավասարի լեզվով, արվեստագետի հպարտ կեցվածքով՝ ներկայացնելով հնադարյան իր ժողովրդի բարձր քաղաքակրթությունը:

Դժվար էր Թուրքիայից գալ Հայաստան ու հաստատվել Երևանում: Թողնելով երբեմնի «սուլթանների մայրաքաղաքը», շրջանցելով խոչընդոտները՝ 1961 թվականից Հովհաննես Չեքիջյանը հաստատվում է Մայր Հայրենիքում, որտեղ կերտում է իր պատմությունը՝ ստանձնելով Հայաստանի պետական երգչախմբի գլխավոր դիրիժորի բարդ ու միաժամանակ պարտավորեցնող կոչումը:

Չմանրամասնելով Հովհաննես Չեքիջյանի հազեցած ու փառահեղ ստեղծագործական ուղին², բազմաքանակ հիացական կարծիքներն ու գրախոսությունները՝ կանգ կառնեմ մի քանի փաստի և,

¹ Անձնական զրույցից, տե՛ս նաև **Առաքելյան Էմմա**, Հովհաննես Չեքիջյանը՝ Կոմիտասի խմբերգերի մեկնաբան, Հովհաննես Չեքիջյան-85, Գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 2014, էջ 157-162:

² Տե՛ս **Ասատրյան Ա.**, Հովհաննես Չեքիջյանը. խմբերգային արվեստի մարշալը, Հովհաննես Չեքիջյան-85, Գիտական նստաշրջանի նյութեր, էջ 26-39:

իհարկե, կոմիտասյան խմբերգերի չեքիջանական մեկնաբանությունների վրա:

Եվրոպայի, ԱՄՆ-ի և նախկին ԽՍՀՄ-ի գրեթե բոլոր հեղինակավոր համերգասրահներում Կապելլան հանդես է եկել շուրջ 900 համերգներով, 70-ի հասնող համբավավոր սիմֆոնիկ նվագախմբերի հետ՝ ավելի քան 27 օտար լեզուներով կատարելով վոկալ-խմբերգային արվեստի կոթողային ու բարդագույն երկերը՝ Մոցարտ՝ Ռեքվիեմ, Բեռլիոզ, Վերդի, Ֆորե՝ Ռեքվիեմներ, Բեթհովեն՝ 9-րդ սիմֆոնիա...

Այս կատարողական-լուսավորական գործունեության մեջ առանցքային է եղել կոմիտասյան երկերի կատարումը: Կոմիտասի խմբերգերը մշտապես կապելլայի երկացանկում են՝ «Գութաներգ», «Կալի երգ», «Անձրևն էկավ», «Առնեմ էրթամ իմ յարը»...

Եվրոպական հսկաների կողքին Կոմիտասը հնչում է առավել համոզիչ, այդ ելևէջների մեջ հառնում է Հայաստան-դրախտավայրը:

Խորհրդային հսկա կայսրության մեջ Չեքիջյանի կապելլան առանձնանում էր, անտարակույս, առաջին հերթին հմուտ ղեկավարի շնորհիվ, Կոմիտաս ճանաչող երաժշտի շնորհիվ: Խորհրդային շրջանում կապելլան դարձել էր Հայրենիք-Սփյուռք կապի խորհրդանիշ, շնորհիվ խմբավարի, ով Հայրենիք էր սիրել ու ճանաչել մեկ այլ մշակութային միջավայրում:

Չեքիջյանն աշխատում է երաժշտության ամենահին ավանդույթներ ունեցող երաժշտական կոլեկտիվի հետ:

Ծիսական արարողակարգից մինչև հին հունական թատրոն ու Վերածննդի փթթուն բազմաձայնություն երգչախմբային արվեստը բացառիկ էր. երգչախումբն առանձին մշակույթ է: Մարդկային ձայների անզուգական գեղեցկության, բնական արտահայտչականության ու գեղարվեստական ներգործության շնորհիվ երգչախումբը դարեր շարունակ ընկալել են որպես աղոթք երգելու միջոց:

Երգչախումբն օժտված է նաև մարդկանց միավորելու, ազգային ինքնագիտակցություն ու արժեքներ պահպանելու բացառիկ հնարավորություններով:

Պատահական չէր, որ Կոմիտաս Վարդապետը հայաշատ վայրերում կազմակերպում էր երգչախմբեր, որոնցից ամենատպալվորիչը Պոլսի, ես կրկնում եմ, Կ. Պոլսի «Գուսան» երգչախումբն էր³... Նույն առաքելությամբ է առ այսօր հանդես գալիս Չեքիջյանի կապելլան:

1961 թվականի նոյեմբերի 27-ի երևանյան համերգին Հովհաննես Չեքիջյանը ներկայացրեց Կոմիտասյան խմբերգերը՝ դառնալով դրանց անզուգական մեկնաբանը:

1969-ին՝ Կոմիտասի 100-ամյակին, Մաեստրոն պատրաստեց երեք տասնյակից ավելի խմբերգեր, որոնք հնչեցին Մոսկվայի Մեծ թատրոնում կազմակերպված արարողությունից հետո: Այդուհետ կապելլան Կոմիտաս երգող երգչախումբ էր: Նույն 1969 թվին կապելլան դառնում է Ակադեմիական:

Կոմիտասի խմբերգերը նրա ինքնատիպ մտածողության ու կոմպոզիտորական վարպետության բարձրակետն են:

Չեքիջյանին մշտապես հաջողվում է գտնել ազգային այն ոճն ու եղանակը, որով, իրավամբ, պիտի հնչեն Կոմիտասյան խմբերգերը: Մաեստրոն բարձրագույն կատարելությամբ է մեկնաբանում Կոմիտասյան ա կապելլա խմբերգերի ձևակազմական բոլոր առանձնահատկությունները՝ բազմաձայն հյուսվածքի ամենանրբին անցումները, բանաստեղծական-երաժշտական կերպարի բազմազանությունն ու արտահայտչական հարուստ երանգավորումը: Լինելով նաև կոմպոզիտոր՝ Չեքիջյանին հաջողվում է խորանալ և վեր հանել Կոմիտասի կոմպոզիտորական հնարանքների ողջ շտեմարանը:

Կոմիտաս ղեկավարելիս Չեքիջյանը երբևէ փայտիկ չի օգտագործում: Մաեստրոն փայտիկ օգտագործում է միայն սիմֆոնիկ նվագախմբի հետ՝ ասես գործիքների համար ընտրելով դիրիժորի մեկ այլ կեցվածք:

Կոմիտասի ստեղծագործությունը մեկնաբանելիս Չեքիջյանը հուզական ներգործության կարող է հասնել անգամ զուսպ դիմա-

³ Սիրունի Հ., Կոմիտասի հետ, «Էջմիածին», 1966, N 5, էջ 33:

խաղով, ձեռքի կախարդական ու զուսպ շարժումներով:

Մարդկային ծայների միջոցով Չեքիջյանը կարողանում է շնչավորել երաժշտական ստեղծագործության խորը շերտերը, յուրովի ընթերցել պարտիտուրը՝ բացահայտելով կոմիտասյան «Լոռվա հոռովելի» սիմֆոնիզացված դրամատուրգիան, «Գարուն»-ի յուրաքանչյուր ելևէջի ողբերգական ընթացքը, «Առավոտուն բարի լուս»-ի շքեղ ծիսականությունը: Խմբերգային պոլիֆոնիայի այդպիսի հմուտ մեկնաբանում, հնչյունային հյուսվածքի այդպիսի հղկվածություն քիչ խմբավարների են հասու:

Իր ղեկավարած խմբերգի հետ Չեքիջյանն իրեն բնորոշ խորությամբ, մտքի աշխատանքի լարվածությամբ, հայացքով երգչախումբն առաջնորդելու կարողությամբ, յուրաքանչյուր երգչի թրթիռը զգալով, մտնում է նույն տրամադրության, ասել է, թե նույն լարվածքի մեջ, ա կապելլա ծայների ամբողջությունը մեկնաբանելով իբրև մի հսկա սիմֆոնիկ նվագախումբ, կատարողի և ունկնդրի մեջ արթնացնելով միայն իրեն լսելի, իր մանկությունից եկած կոմիտասյան հնչյունների առեղծվածը:

Կոմիտասի՝ Վարանդայի «Գութաներգում» Չեքիջյանի երգչախումբը հասնում է կատարման այնպիսի միասնության և կատարելության, որ լսելի են դառնում ենթաձայների ամենաբարձր ու մեղմ արձագանքները, կոմիտասյան յուրաքանչյուր նոտայի բաբախյունը: Ունկնդրի առջև հառնում է բնության հետ կոհիվ տվող հայ մաճկալի աննկուն կերպարը:

Չեքիջյանի կապելլան, երբ շարվում է, թվում է, թե վերականգնվում է փառահեղ տեսարանը. ասես Կ.Պոլսի Պըտի Շանի ձմեռային թատրոնի սրահում կրկին շարվում է Կոմիտաս Վարդապետի 300 հոգուց կազմված «Գուսան» երգչախումբը, և օդը լցվում է անզուգական ծայների ներդաշնակ միասնությամբ:

2009-ին Հայաստանի պետական ակադեմիական կապելլան Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ ձայնագրեց Կոմիտասի Պատարագը՝ առանձին հիացմունքի և ուսումնասիրության նյութ:

Արվեստի մեջ գոյություն ունի ֆենոմեն հասկացությունը:

Մեծ դասականի խմբերգերի անզուգական մեկնաբան, Հայաստանի Հանրապետության Ազգային հերոս, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշանն արժանիորեն կրող Հովհաննես Զեքիջյանը 2019-ին՝ Կոմիտաս Վարդապետի 150-ամյակին, նրա երկերի կողքին ղեկավարելու է Զուգեպպե Վերդիի «Օթելլո» օպերայի համերգային կատարումը՝ դիրիժոր-ֆենոմենի հանճարեղ մեկնաբանությամբ շնչավորելով ևս մեկ գլուխգործոց:

Նազենիկ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող,
արվեստագիտության դոկտոր

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ
ԱԼ.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ**

Անշուշտ, Հովհաննես Չեքիջյանի գործունեությունը բազմիցս լուսաբանվել և ապագայում կլուսաբանվի բազում տեսանկյուններով: Սույն հաղորդման նպատակն է ընդգծել Ալ.Սպենդիարյանի անվան թատրոնում տնօրինության ժամանակամիջոցում Չեքիջյանի ներդրումը թատրոնի բալետային խաղացանկի հարստացման գործում, որի հետևանքով հայ և արտասահմանյան բալետմայստերների մի շարք բեմադրությունների նորարարական պարային բեմադրությունները ներկայացվեցին հայ հանդիսատեսին:

Սկսեմ հակիրճ նախաբանով: Հիշում եմ՝ տարիներ առաջ, երբ հերթական անգամ օպերայում բեմադրվեց Զ. Ռոսինիի «Սևիլյան սափրիչ» օպերան, ես ներկա էի պրեմիերային: Ինչպես քաջ հայտնի է, այս օպերայի առաջին գործողությունն ավարտվում է վոկալ անսամբլով նվագախմբի ուղեկցությամբ: Խոստովանեմ, որ այդ անսամբլը կատարվեց չափազանց անհաջող: Այն չկապակցվեց, վոկալ ձայները խառնվեցին իրար. . .

Պարզվեց, որ այդ ներկայացմանը ներկա էր նաև Մաեստրո Չեքիջյանը:

Իսկ մի քանի օր անց ներկա եղա Կապելլայի համերգին, որտեղ հսկայական երգչախումբը Չեքիջյանի ղեկավարությամբ կատարեց նույն անսամբլը a cappella. Ի՞նչ ասեմ. փայլուն, անթերի, հստակ կատարում էր, որը ապշեցրեց հանդիսատեսին: Այդպես Մաեստրոն «դաս» տվեց օպերային թատրոնին:

Հովհաննես Չեքիջյանը ղեկավարել է Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը 1982-1987 թթ.: Այդ տարիները ընդգրկվում են մեր օպերայի և բալետի այն 30-ամյա ժամանակա-

շրջանի մեջ, որը սովորաբար անվանում են Սպենդիարյանի թատրոնի «Ոսկե դար» (60-ից 80-ականների վերջը):

Ինչո՞ւ է առանձնանում այդ ժամանակահատվածը:

1960-80-ական թվականներին հայ օպերայի և բալետի թատրոնն ապրեց իր ծաղկունքի շրջանը, որը պայմանավորված էր, առաջին հերթին, հարուստ խաղացանկով, որն ընդգրկում էր թե՛ հայ և եվրոպական, թե՛ ռուսական դասական օպերաները և բալետները: Այնուհետև տարբեր ստեղծագործական միտումներ և ձեռագիր ունեցող ռեժիսորների և բալետմայստրների գործունեությամբ, նաև մասնագիտական հնարքներին վարժ տիրապետող և դերասանի վարպետությամբ օժտված մեծաթիվ մենակատարների առկայությամբ թե՛ օպերայի և թե՛ բալետի խմբերում: Արտերկրյա խմբերի և կատարողների հաճախակի հյուրախաղերով և մեր օպերայի և բալետի հյուրախաղերի հաճախականությամբ:

Չեքիջյանը տնօրինեց թատրոնն այդ փայլուն 30-ամյակի համարյա թե վերջին տարիները, որովհետև 80-ականների վերջում, ինչպես մեզ քաջ հայտնի է, տարբեր քաղաքական իրադարձությունների հետևանքով (որոնց ևս ավելորդ եմ համարում անդրադառնալ), թատրոնը սկսեց անկում ապրել, խաղացանկից մեկը մյուսի հետևից դուրս էին մղվում և այլևս չէին վերականգնվում ներկայացումներ, դերասանները, ռեժիսորները, բալետմայստրները հեռանում էին երկրից, պրեմիերաները հազվագյուտ էին, իսկ ներկայացումները՝ հազվադեպ Թատրոնը կորցնում էր իր հանդիսատեսին:

Սակայն վերադառնանք Հովհաննես Չեքիջյանի տնօրինության տարիներին: Դրան նախորդող շրջանում օպերային թատրոնում մի քանի տարի վերանորոգման աշխատանքներ էին կատարվում, ուստի ներկայացումները ցուցադրվում էին Երևանյան այլ թատրոնների բեմահարթակներում:

Թատրոնում վերանորոգումն ավարտվեց 1982-ին, և նույն տարվանից սկսվեց Մաեստրոյի տնօրինության ժամանակաշրջանը: Ուստի Չեքիջյանը մի շարք խնդիրների առաջ էր կանգնած:

Առաջինը խաղացանկի վերականգնման հարցն էր: Երկրորդ

հարցը խաղացանկի լրացումն էր նոր բեմադրություններով:

Այդ տարիների բեմադրված օպերաներից նշեմ Տ.Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» և Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերաները: Երկուսն էլ՝ Տիգրան Լևոնյանի բեմադրությամբ:

Մեծ իրադարձություն էր Ն.Ռիմսկի-Կորսակովի «Ոսկե աքաղաղ» օպերան, որը բեմադրեց հրավիրված ռեժիսոր Ռոման Տիխոմիրովը: Նշված օպերան չափազանց հազվադեպ է կատարվում: Գուցե այն պատճառով, որ վոկալ պարտիաները բարդ են, կամ էլ այն պատճառով, որ այդ օպերան, ըստ էության, սուր քաղաքական երգիծանք է, իսկ նմանատիպ երգիծանքը և՛ այժմեական է, և՛ անցանկալի բոլոր ժամանակների համար, ներառյալ մեր օրերը:

Ընդգծենք, որ Հովհաննես Չեքիջյանի տնօրինության շրջանում մեր բալետային խաղացանկը համալրվեց անչափ հետաքրքիր ներկայացումներով:

Նախ՝ նշենք խորեոգրաֆ Աշոտ Ասատուրյանի բեմադրած երեք բալետները:

Դեռ 1970-ականներից նախապատրաստվող, բայց միայն 1982 թ. ներկայացված Գրիգոր Եղիազարյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ» բալետը, որը մեկնաբանված էր մեր հեթանոսական պանթեոնի մեռնող և հարություն առնող աստծո միստերիայի ձևով:

1983 թ. վախճանվեց հանճարեղ Ջորջ Բալանչինը: Այդ առիթով և ինչպես նշված է ծրագրում, «Բալանչինի պատվին» Ասատուրյանը ցույց տվեց «Թեմա վարիացիաներով»՝ Չայկովսկու III նվագախմբային սյուիտի ֆինալի երաժշտությամբ նեոկլասիկ բալետը: 1985 թ. կայացավ Ասատուրյանի «Հերոսական բալլադ» Առնո Բաբաջանյանի համանուն երկի երաժշտությամբ բալետի պրեմիերան: Թեման կապված էր Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ, և՛ բեմադրությունը, և՛ ձևավորումը (որն իրականացրել էր Ավետիս Բարսեղյանը) հենվում էին լեհ նկարիչ Բրանիսլավ Վոյցեխ Լինկեյի «Քարերը ճշում են» ակվարելային սերիայի և թանաքային գրաֆիկայի նմուշների վրա: Դրանց հատուկ էքսպրեսիոնիստական և սյուրռեալիստական ոճն արտահայտվեց նաև բեմադրության մեջ:

Տնօրինության տարիներին Հովհաննես Չեքիջյանը մեծ տեղ էր տալիս հրավիրված խորեոգրաֆների գործունեությանը հայ բեմում: Սա, անշուշտ, հագեցնում էր խաղացանկը և միաժամանակ նպաստում բալետի խմբի թե՛ կատարողական որակի բարձրացմանը և թե՛ նորարարական տարբեր պարային ոճերի յուրացմանը:

Նման բեմադրությունների շարքում առաջին հերթին պետք է հիշատակենք 1982-ին Ա.Խաչատրյան - Էդ.Հովհաննիսյանի «Դիմակահանդես» բալետի բեմադրությունը, որն իրականացրել էին Նատալյա Ռիժենկոն և Վիկտոր Սմիրնով-Գոլովանովը: Սա լրացնում էր մեր խաղացանկը Արամ Խաչատրյանի փաստորեն նոր բալետով: Դրա հիմնական առավելությունների թվին էին պատկանում խորը դրամատիզմը: «Դիմակահանդեսում» արժարժվում էր «կյանքը որպես խաղ, որպես պարահանդես, որպես դիմակահանդես» լուրջ փիլիսոփայական թեման:

1982 թ. վերականգնվեց լենինգրադյան ականավոր բալետ-մայստեր Օլեգ Վինոգրադովի՝ Ս.Պրոկոֆևի «Ռումեո և Ջուլիետ» բեմադրությունը (որն առաջին անգամ բեմադրվել էր Երևանում 1970 թ.): Պրոկոֆևի երաժշտական ոճի համարժեք պարային մարմնավորումը դյուրին գործ չէ, և «Ռումեո և Ջուլիետ» բալետի բազում բեմադրությունները բացարձակապես չեն արտահայտում Պրոկոֆևի երաժշտական լեզվի յուրայնությունը: Մեր խորին համոզմամբ Օլեգ Վինոգրադովի բեմադրությունը լավագույնների թվին է պատկանում: Այն առանձնանում է Վերաձննդի ժամանակաշրջանի պարային-պարահանդեսային և ժամանակակից բարդ դասական պարի համակարգերի տարրերի ինքնատիպ միահյուսմամբ:

Իսկ 1986-ին ներկայացվեց նոր բալետ՝ Օ. Վինոգրադովի բեմադրությամբ՝ Լուի Գերոլդի «Լիզա և Կոլենը» (այլ անվանումը՝ «Իզուր նախագգուշացում»): Ինչպես նշում էր ինքը՝ Վինոգրադովը, այդ բալետի խորեոգրաֆիկ լուծումը նախառոմանտիկ և ռոմանտիկ շրջանի բալետի ոճավորում է, համապատասխան ձև-կառուցվածքով, կատակերգական իրադրություններով, վառ՝ հիմնականում

կոմիկական կերպարներով և նշված շրջանի պարային հնարքների հեղինակային մեկնաբանմամբ:

1984 թ. հանդիսատեսին անակնկալ մատուցվեց: Հայաստանում առաջին անգամ բեմադրվեց լիտվական բալետ: Դա Վյաչեսլավ Գանելինի «Սատանայի ջրաղաց» ջազ-բալետն էր՝ Վիտաուտաս Բրազդիլիսի բեմադրությամբ, որը հայ թատրոնի բեմահարթակը հարստացրեց արտակարգ նորարարական, յուրօրինակ պարային լեզվով և ոճով:

1985 թ. խաղացանկը համալրվեց դասական բալետով: Դա Պ. Չայկովսկու «Մարդուկ Ջարդուկ»-ն էր՝ ականավոր բալետմայստեր Վասիլի Վայնոնենի բեմադրությամբ, որը փոխադրեց մեր բեմահարթակ հանրահայտ պարուսույց, բալետմայստեր-փորձավար Լյուդմիլա Սախարովան:

Վերջապես մեծ իրադարձություն էր 1982-ին Հեկտոր Բեռլիոզի «Ռումեո և Ջուլիետ» դրամատիկ սիմֆոնիայի կատարումը Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի բեմում, որն իրականացրեց ինքը՝ Հովհաննես Չեքիջյանը: Անհրաժեշտ է ընդգծել, որ դա Բեռլիոզի նշված երկի նաև առաջին կատարումն էր Սովետական Միության տարածքում:

Ինքը՝ Բեռլիոզը, որակավորել է իր երկը որպես «դրամատիկ սիմֆոնիա»՝ ցանկանալով ընդգծել նրա ձևի թատերականությունը: Իրոք, այստեղ, բացի նվագախմբից, մասնակցում են երգչախումբը և մենակատարները: Ընդ որում երգչախումբը և մենակատարները մեկնաբանվում էին որպես գործող անձեր: Երգչախումբը Մոնտեքյուն և Կապուլետին են, երբեմն էլ «որպես խոսք հեղինակի կողմից», մենակատարները՝ Մերկուրիոն և հայր Լորենցոն:

Սիմֆոնիան չի ընդգրկում «Ռումեո և Ջուլիետ» ողբերգության ողջ բովանդակությունը և բոլոր իրադարձությունները: Նա սահմանափակվում է միայն ողբերգության առաջին և վերջին գործողության դրվագներով: Դրանք են Մոնտեքյուի և Կապուլետի ցեղերի թշնամությունը և Ռումեոյի ու Ջուլիետի հանդիպումը, նրանց միջև հանկարծակի ծագած սերը (առաջին գործողություն), կեղծ մահա-

ցած Ջուլիետի թաղումը, Ռոմեոյի և Ջուլիետի մահը, թշնամի կողմերի հաշտեցումը (վերջին գործողություն):

Ես մանրամասն չեմ ներկայացնում սիմֆոնիայի բոլոր դրվագները, բացի մեկից: Ինչպես վերը նշեցինք, երկը չի պարունակում ողբերգության բոլոր դրվագները: Սակայն երկրորդ մասի N 2-ում Ռոմեոյի և Ջուլիետի սիրո և մահվան ողջ պատմությունը շարադրվել է խորեոգրաֆիկ լեզվով: Եթե այլ դրվագներում բեմում չկար ակտիվ գործողություն, ապա այդ մասում, համաձայն Մանետրոյի մտահղացման, ներկայացվեց արտառոց՝ ըստ իր տևողության, Ռոմեոյի և Ջուլիետի 17-րոպեանոց խորեոգրաֆիկ զուգապարը: Չեքիջյանի մտահղացումը մարմնավորեց, այսինքն՝ բեմադրեց, Վիլեն Գալստյանը: Ինչպես նշեց ինքը՝ Գալստյանը, սկզբում կասկածանքի մեջ էր ընկել, թե արդյո՞ք այդ մտահղացումը հնարավոր կլինի իրականացնել («Պատկերացրեք, – ասել է նա ինձ մի քանի տարի առաջ, – համարյա քսան րոպե տևող զուգապար: Բայց ես ձեռնամուխ եղա, և ստացվեց»): Նշված զուգապարը պարունակում է հետևյալ դրվագները՝ «Ջուլիետի երազանքները», «Հանդիպում Ռոմեոյի հետ», «Խոստովանություն» (սիրո խոստովանություն): «Նման կրքերի վերջը լինում է ահավոր», «Պսակ» (այսինքն՝ այն դրվագը, երբ Լորենցոն օրհնեց հերոսների ամուսնությունը), «Վեճ» (ինչը կապված է ճակատագրական միջադեպի հետ, երբ Ռոմեոն սպանեց Տիբալդին), «Սիրո գովերգ» (որտեղ Ռոմեոն ողբում է կեղծ մահացած Ջուլիետի մահը), «Ռոմեոյի երդումը», «Ռոմեոյի մահը», «Ջուլիետի զարթոնքը»: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ, ըստ Բեռլիոզի, Ջուլիետը զարթոնում է այն պահին, երբ Ռոմեոն արդեն ընդունել է թույնը, բայց դեռ չի մահացել, և ուստի զուգապարը շարունակվում է: Վերջին դրվագներն են՝ Ռոմեոյի մահը, Ջուլիետի ողբը և Ջուլիետի մահը:

Իրոք, դժվար է պատկերացնել, թե ինչպես էր հնարավոր ներկայացնել այս ողջ բովանդակությունը զուտ երկու կատարողի ուժերով: Սակայն հաջողվեց:

Անշուշտ, դա և՛ Վիլեն Գալստյանի, և՛ դերակատարներ Էլվիրա Մնացականյանի ու Սերգեյ Բարանովի վաստակն էր:

Էլվիրա Մնացականյանը մեր առաջատար պրիմա-բալերինան էր, որն անչափ խորն է զգում և արտահայտում իր պարում երաժշտական յուրաքանչյուր ելևէջ: Սերգեյ Բարանովը՝ այդ շրջանում մեր առաջատար, լավագույն պարողներից մեկն էր, թե՛ որպես բալետային տեխնիկայի բարդ հնարքներին տիրապետող և թե՛ դրամատիկ խորը կերպարներ ստեղծող դերասան:

Վիլեն Գալստյանի բեմադրությունը՝ չափազանց հազեցած զուգապարային ամենաբարդ հնարքներով, զանազան զգացմունքներ, ապրումներ և իրադրություններ արտահայտող ելևէջներով լի պարային մենախոսությունները և երկխոսությունները, երաժշտականորեն ճիշտ շեշտվածությամբ խորեոգրաֆիկ մեկնաբանությունը անշուշտ նպաստում էին այդ դրվագի տպավորիչ ընկալմանը:

Նշենք նաև, որ կատարմանը օպերայի և բալետի թատրոնի բեմում մասնակցում էին Կապելլան, Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների կոմիտեի կամերային երգչախումբը, Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի մանկական երգչախումբը (խմբավար՝ Արթուր Վերանյան), նաև հատուկ հրավիրված հանրահայտ երգիչներ Նինա Իսակովան, Կառլ Զարինը, Միհրան Երկաթը, Վալերի Հարությունովը:

Անշուշտ, ողջ սիմֆոնիայի կատարումն առաջին հերթին Մաեստրոյի վարպետության շնորհիվ ընկալվեց որպես ոչ թե համերգային, այլ խորը ողբերգական դրամատիզմով լի թատերական ներկայացում:

Խաղացանկի հարստացումը նոր և բազմաոճ ներկայացումներով մեծապես նպաստեց 1980-ականների հայ բալետի մենակատարների փայլուն կազմի կատարողական՝ տեխնիկական և դերասանական վարպետության աճին և նոր հնարավորությունների և տաղանդի երանգների բացահայտմանը: Այդ մենակատարների թվում էին Հայաստանի ժողովրդական արտիստներ Վիլեն Գալստյանը, Էլվիրա Մնացականյանը, Ռուդոլֆ Խառատյանը, Հովհաննես Դիվանյանը, Հովհաննես Խաչիկյանը, Հայաստանի վաստակավոր արտիստներ Նադեժդա Դավթյանը, Աննա Մարիկյանը, Սերգեյ Պետրոսյանը, Ռաֆայել Ավնիկյանը, Թամարա Ադնյանը,

Սամվել Աբրահամյանը, Սերգեյ Բարանովը, նաև մենակատարներ Նադեժդա Խառատյանը, Ելենա Պավլիդին. Գայանե Շաքարյանը, Մարինա Գյուրջյանը, Արմեն Գրիգորյանը, Գալինա Գալստյանը. . .

Անհրաժեշտ է ընդգծել, որ Հովհաննես Չեքիջյանի գործունեությանը մեծապես սատարել է այդ ժամանակահատվածում թատրոնի գլխավոր բալետմայստեր, Հայաստանի ժողովրդական արտիստ Նորայր Մեհրաբյանը: Այս երկու արվեստագետների տանդեմը անչափ բեղմնավոր էր և օգտակար բալետային խմբի համար, թեկուզ այն պատճառով, որ երկուսն էլ օժտված են «երկաթե ձեռքով» բազմամարդ համույթները ղեկավարելու ձիրքով՝ պահպանելով դրանց միասնականությունը, կարգապահությունը և աշխատանքի ընթացքում՝ փորձերի, ներկայացման կամ համերգի ժամանակ, լիակատար ներգրավվածությունը:

Սրա ապացույցն է այն իրողությունը, որ «մութ» 1990-ականներին Հովհաննես Չեքիջյանի «Կապելլան» և Նորայր Մեհրաբյանի (1987-ին հիմնադրված և մինչև օրս փայլուն ելույթներով հանդես եկող) «Բարեկամություն» պարային համույթը պահպանեցին իրենց բարձր կատարողական մակարդակը, երբ օպերային թատրոնը համարյա թե փլուզվում էր:



Մարիաննա ՏԻԳՐԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս,
արվեստագիտության թեկնածու

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ. ՄՈՍԿՈՎՅԱՆ ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐ

«Դիրիժոր պետք է ծնվել: Դա կարելի է ասել
Չեքիջյանի երաժշտական ճակատագրի մասին. նա
ծնվել է դիրիժոր»:

Գենադի ՌՈԺԴԵՍՏՎԵՆՍԿԻ

Իր բեղուն ստեղծագործական կյանքում ի՞նչ հաղթանակների, պատվոգրերի, շքանշանների և տիտղոսների ասես, որ չի արժանացել մեծ երաժիշտ և տաղանդավոր դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը, սակայն Մաեստրոյի բոլոր կոչումներից առավել պատվավորը «Հայաստանի Ազգային հերոս» կոչումն է: Հայրենիքի շքանշանի այդ բարձրագույն պատվին Հ.Չեքիջյանն արժանացել է Հայաստանն աշխարհին ներկայացնելու ազգանվեր գործում դրսևորած անմնացորդ նվիրումի, մշակույթի բնագավառում ներդրած անձնական մեծ ավանդի, ինչպես նաև հայ ժողովրդին մատուցած բացառիկ ծառայությունների համար¹:

Հովհաննես Չեքիջյանն իր բազմամյա անձնվեր գործունեությամբ հայ և խորհրդային խմբավարական արվեստը կատարողական նոր մակարդակի բարձրացրեց՝ հաճախ դառնալով կատարվող ստեղծագործության առաջին և անգերազանցելի մեկնաբանը:

¹ Այդ կոչումը Հ.Չեքիջյանին շնորհեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը (31 դեկտեմբերի, 2017), և Մաեստրոն դարձավ թվով տասնյոթերորդ «Ազգային հերոս»-ը: Այդ կոչմանն արժանացել են Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն, Վիկտոր Համբարձումյանը, Կարեն Դեմիրճյանը, Վազգեն Սարգսյանը, Մոնթե Մելքոնյանը, Շառլ Ազնավուրը և փառահեղ կյանքի ճանապարհ անցած ուրիշ հայորդիներ:

Հայաստանի ազգային ակադեմիական² երգչախումբը Հովհաննես Չեքիջյանի գլխավորությամբ աշխարհի լավագույն բեմերում կայացած բազում համերգների ընթացքում հնչեցրել է հայ և օտարազգի կոմպոզիտորների հարյուրավոր ստեղծագործություններ: Կապելլայի համերգային շրջագայությունները իրադարձություն էին և միշտ ուղեկցվում էին ջերմ արձագանքներով: Մաեստրոյի երաժշտական նուրբ քիմքն ու մասնագիտական բարձր ճաշակը երգչախմբի յուրաքանչյուր ելույթ դարձնում էին անմոռանալի: Թերթելով մամուլի դեղնած էջերը՝ այսօր կարելի է արձանագրել հարյուրավոր (շուրջ 1300) համերգային գրախոսականներ, հիացական կարծիքներ և վերլուծական հոդվածներ, որոնք լուսաբանել և արժանի գնահատական են տվել Մաեստրոյի և կապելլայի գործունեությանը:

Հ.Չեքիջյանի և երգչախմբի երկարամյա ստեղծագործական կյանքում առանձնահատուկ նշանակություն ունեն մոսկովյան հյուրախաղերը: Խորհրդային Միության մայրաքաղաքում Հայաստանի պետական կապելլան Հ.Չեքիջյանի գլխավորությամբ ունեցել է շուրջ 80 համերգ³, որից շուրջ 30-ը՝ Մոսկվայի Պ.Ի.Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի Մեծ դահլիճում:

Առաջին անգամ խումբը մեկնեց Մոսկվա 1964 թվին (նոյեմբերի 24-28): Անդրանիկ համերգին (25.11.1964 – Concert A cappella) Կոմիտասի խմբերգերի մաքրամաքուր հնչյունները լցրին Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի Մեծ դահլիճը և գերեցին բոլորի սրտերը: Համերգին ներկա էր Արամ Խաչատրյանը. նա ջերմագին ողջունեց իր տաղանդավոր հայրենակցին. «Դա բարձրագույն կուլտուրայով փայլուն երգչախումբ է, որի գլխին կանգնած է մեծ երաժիշտ և կոմպոզիտոր: Այն ամենը, ինչ նա

² Ակադեմիական կոչումը երգչախումբը ստացել է 1969 թ., 1975-ից՝ Հանրապետության վաստակավոր կոլեկտիվ, իսկ 2012 թ. նոյեմբերի 15-ին ՀՀ կառավարության որոշմամբ շնորհվել է «ազգային» կարգավիճակ:

³ Մոսկվայում կայացած հյուրախաղերի ցանկը կազմել և սիրով մեզ է տրամադրել ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի փոխտնօրեն Աննա Ասատրյանը, որի համար խորին շնորհակալություն ենք հայտնում (տե՛ս վերջում):

անում է, նորարարական է... Հայաստանի պետական կապելլան կարելի է ուղարկել ցանկացած երկիր: Նա հպարտ կծածանի Խորհրդային Միության դրոշմը»⁴: Նոյեմբերի 27-ի համերգային ծրագրում էր՝ Մոցարտ – «Ռեքվիեմ» և Շուբերտ – «Միրիամի հաղթական երգը» կանտատը⁵: Շուբերտի այս ստեղծագործությունը Խորհրդային Միությունում հնչում էր առաջին անգամ:

Այնքան էլ հեշտ բան չէր մայրաքաղաքում գովեստի արժանանալը, քանզի մոսկովյան ունկնդիրը փորձված և խստապահանջ էր: Սակայն մեկ ելույթն էլ բավական էր, որ հանդիսատեսը գերվեր կապելլայի բարձրաճաշակ կատարման կախարդական ու թովիչ ծայնով: Ահա թե ինչպես է հետագայում նկարագրել Մաեստրոյի հետ իր առաջին հանդիպումը շախմատի աշխարհի կրկնակի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը. «Հովհաննես Չեքիջյանի հռչակավոր երգչախումբը լսել ու Մաեստրոյի հետ ծանոթացել եմ 1964-ին Մոսկվայում իմ լավ բարեկամ, աշխարհի լավագույն բարիտոններից մեկի՝ Պավել Լիսիցյանի շնորհիվ: Մոսկվայի երաժշտասերներին հեռակա ծանոթ Հովհաննես Չեքիջյանի անունը Չայկովսկու անվան համերգասրահ էր բերել ռուսական երաժշտության գիգանտներին, ինչը մեծ ուրախություն և հպարտություն էր հայերիս համար: Ճեմասրահում Արամ Խաչատրյանին շրջապատել էին Եվգենի Մրավինսկին, Նիկոլայ Տիխոնովը, Դմիտրի Կաբալևսկին, Իվան Կոզլովսկին, Սերգեյ Լեմեշևը, Նաթան Ռախլինը, Մարիետա Շահինյանը, Վլադիմիր Ֆեդոսենը, Լենինգրադից հատուկ ժամանած Բորիս Պիոտրովսկին, իսկ քիչ անց եկավ Դմիտրի Շոստակովիչը»⁶:

Մամուլն իսկույն արձագանքեց, և Հայաստանի երգչախմբի

⁴ **Асатрян А.**, Арам Хачатурян и Оганес Чекиджян. Творческие контакты выдающихся музыкантов.

⁵ Նվագակցում էր Մոսկվայի համերգային սիմֆոնիկ նվագախումբը (Московский симфонический оркестр Всероссийского гастрольно-концертного объединения).

⁶ **Առաքելյան Ս.**, Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2014, էջ 30, 31:

ելույթը շատ բարձր գնահատվեց⁷: Դեռևս 1964-ին երգչախմբի երկացանկում հայ, ռուս, արևմտաեվրոպական դասական և ժամանակակից կոմպոզիտորների շուրջ 60 ստեղծագործություն արդեն իսկ կար⁸:

Երկրորդ այցը Մոսկվա կայացավ մեկ տարի անց՝ 1965 թ. դեկտեմբերին, «Ռուսական ծմեռ» փառատոնի շրջանակներում⁹: Արվեստի տոն դարձած «Ռուսական ծմեռ» փառատոնը մեծ հետաքրքրություն էր վայելում Մոսկվայի երաժշտասեր հասարակության մեջ: Չայկովսկու անվան համերգային մեծ դահլիճի լեփ-լեցուն սրահում Հայաստանի պետական կապելլան փայլուն ելույթ ունեցավ: Ծրագրում՝

27 դեկտեմբերի, 1965 թ.

Մ. Գլինկա՝ Խմբերգ «Ռուսական և Լյուդմիլա» օպերայից

Ա. Տիգրանյան՝ Խմբերգ «Անուշ» օպերայից

Ջ. Ռոսինի՝ “Stabat Mater”

28 դեկտեմբերի, 1965 թ.

Գ. Հախինյան՝ «Սայաթ-Նովա» կանտատ

Բերիովեն՝ «Ֆանտազիա» դաշնամուրի, երգչախմբի և նվագախմբի համար

Ջ. Ռոսինի՝ “Stabat Mater”

Ծրագրի «մեխը» Ռոսինիի «Ազադուլ մայր»-ն էր, որը Խորհրդային Միությունում կատարվում էր առաջին անգամ¹⁰: Մենակատարներն էին Միհրան Երկաթը, Գոհար Գալաչյանը, Իզաբելլա

⁷ Հայ արտիստների համերգները Մոսկվայում, «Սովետական Հայաստան», 1 դեկտեմբերի, 1964:

⁸ Պատմում է Հովհաննես Չեքիջյանը, «Երեկոյան Երևան», 24 դեկտեմբերի, 1964:

⁹ Տե՛ս **Թորմաջյան Լ.**, «Ռուսական ծմեռ», «Երեկոյան Երևան», 4 հունիսի, 1966:

¹⁰ Դեռևս Երևանյան առաջնախաղ ներկայացմանը «Ստաբատ Մատեր»-ը բարձր գնահատականների արժանացավ (տե՛ս Արաքսյա Սարյանի (Հարությունյան) հոդվածը՝ «Ստաբատ Մատեր»-ը առաջին անգամ Երևանում, «Երեկոյան Երևան», 19 նոյեմբերի, 1965):

Այդինյանը և Լենինգրադի պետական ակադեմիական օպերայի թատրոնի մեներգիչ Միխայիլ Դովենմանը¹¹: Հաջողությամբ անցավ նաև Գրիգոր Հախինյանի «Սայաթ-Նովա» կանտատը (մենակատար՝ Էվլիրա Ուզունյան), որը նույնպես առաջին անգամ էր կատարվում: Եվ ինչպես միշտ՝ «բիս» և «բրավո» կանչերի ներքո, ծրագրից դուրս հնչեցին Կոմիտասի «Ձիգ տո՛ւր, քաշի» և Եկմալյանի «Ո՛վ, հայոց աշխարհ» խմբերգերը:

Երկու տարի անց՝ 1967 թ. փետրվարի 24-ին, այդ նույն դահլիճում կրկին հնչեց Ռոսինիի «Stabat Mater»-ը: Այս անգամ աշխարհահռչակ բաս Եվգենի Նեստերենկոյի և Մոսկվայի պետական ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի մասնակցությամբ: Երկրորդ բաժնում հնչեց Գր.Հախինյանի «Թոնդրակեցիներ» օրատորիան¹², իսկ համերգի առանցքը Բեռլիոզի «Ռեքվիեմ» էր¹³:

Հաջողությունն աննախադեպ էր. «... հանդիսասրահը ծափահարում է հոտնկայս: Հ.Չեքիջյանը բեմ է հրավիրվում արդեն ութերորդ անգամ. համերգն ավարտելու նպատակով տնօրինությունը մարում է բեմի ու հանդիսասրահի ջահերը: Խավարի մեջ՝ սրահում, շարունակվում է տեղալ ծափողջույնների հեղեղը: Սիմֆոնիկ նվագախումբը հեռանում է բեմից, բայց հանդիսատեսը քարացած է տեղում: Վառվում են լույսերը և՛ Կոմիտաս «Գութաներգ», հետո՝ էլի Կոմիտաս»¹⁴:

Նույն 1967 թ. ամռանը խումբը կրկին մեկնեց Մոսկվա: Երեխաների պաշտպանության միջազգային օրը՝ հունիսի 1-ին, մեկնարկեց փառատոնը, որի եզրափակիչ համերգը կայացավ Կրեմ-

¹¹ Ռոսինիի «Stabat Mater»-ը Մոսկվայի կամերային երգչախմբի կատարմամբ միայն 15 տարի հետո կհնչի՝ 1979 թ. դեկտեմբերի 27-ին:

¹² Տե՛ս Երգչախումբը մեկնեց շրջագայության, «Երեկոյան Երևան», 15 փետրվարի, 1967:

¹³ Նվագակցում էր ԽՍՀՄ Պետական սիմֆոնիկ նվագախումբը: Տե՛ս նաև Ծափերի որոտով, «Հայրենիքի ձայն», 5 մարտի: 1967, N 10, էջ 4:

¹⁴ Հովհաննիսյան Ա., Հովհաննես Չեքիջյան, Երևան, 1984, էջ 76:

լում¹⁵։ Մանստրոյի և կապելլայի հերթական հաջողությունը։ Ծափահարություններ, ծաղիկներ, ողջագուրանքներ¹⁶։

Հեքիջյանի գլխավորությամբ Հայաստանի կապելլան դարձավ Խորհրդային Միության լավագույն երգչախմբերից մեկը։ 1969թ. պետական երգչախմբին շնորհվեց «Ակադեմիական» պատվավոր կոչումը։

Մանստրոյի և երգչախմբի առջև դրված առաջնային խնդիրներից մեկն էր՝ տարին դիմավորել նոր ստեղծագործություններով։ Առաջին անգամ Հայաստանում պետք է հնչեր ֆրանսիացի հեղինակ Գաբրիել Ֆորեի «Ռեքվիեմը»¹⁷։ Խոշոր կտավի այս ստեղծագործությունը ժամանակակիցների կողմից այնքան էլ բարձր գնահատականի չէր արժանացել, քանզի իր յուրահատուկ ոճաբանական մեկնաբանությամբ տարբերվում էր հոգևոր երաժշտության ավանդական ժանրից։ 1971 թ. Մոսկվայում կայանալիք փետրվարյան հյուրախաղերին (փետրվարի 2-ից 5-ը), բացի Գ. Ֆորեի «Ռեքվիեմ»-ից, առաջին անգամ հնչեց նաև Շառլ Գունոյի «Mors et Vita» հոգևոր օրատորիա-եռապատումը¹⁸։ Այս ստեղծագործության չեքիջյանական մեկնաբանումը՝ որպես կատարողական չափանիշ, երկար տարիներ մնաց անգերազանցելի¹⁹։

1971 թ. մարտի 30-ին Մոսկվայում մեկնարկեց ԽՍՀՄ XXIV համագումարը, որին մասնակցեց շուրջ 5000 պատվիրակ։ Համա-

¹⁵ Տե՛ս Հայաստանի արվեստի վարպետների եզրափակիչ համերգը Կրեմլում, «Սովետական Հայաստան», 7 հունիսի, 1967։

¹⁶ Տե՛ս **Поляновский Г.**, Слушая армянскую капеллу, “Музыкальная жизнь”, 1965, N 4.

¹⁷ Ֆորեի «Ռեքվիեմ»-ը առաջին անգամ, «Սովետական Հայաստան», 3 փետրվարի, 1971։

¹⁸ 1880-ականներին գրված այս տրիլոգիան (Mors /Մահ/ – Judicium /Ահեղ դատաստան/ – Vita /Կյանք/) գրվել է երգչախմբի, մենակատարների և նվագախմբի համար։

¹⁹ «Մելոդիա» (Мелодия) ստուդիան 1973 թ. ձայնագրեց սկավառակ՝ «Ш.Гуно. Смерть и Жизнь (Фрагменты из Оратории), Государственная академическая капелла Армении, Симфонический оркестр Московской государственной филармонии, дирижер Оганес Чекиджян».

գումարը եզրափակվեց շքեղ համերգով, որին մասնակցեց նաև Հայաստանի Ակադեմիական կապելլան՝ Հ.Չեքիջյանի գլխավորությամբ (8 ապրիլի)²⁰:

1970 թ. Հ.Չեքիջյանին շնորհվում է Հայկական ԽՍՀ պետական մրցանակ²¹, իսկ Սովետական Միության Գերագույն Խորհրդի՝ 1971թ. հուլիսի 14-ի հրամանագրով Մաեստրոն պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով²²: Այս առիթով նրան ջերմագին շնորհավորում է Արամ Խաչատրյանը²³: «Дорогой Оганес. Сердечно поздравляю Вас с награждением Орденом Трудового Красного знамени. Желаю еще большего расцвета Вашего сверкающего таланта. С любовью. Арам Хачатурян»²⁴.

Հովհաննես Չեքիջյանի անձնական արխիվում է նաև Ա.Խաչատրյանի երկրորդ՝ ցավոք վերջին նամակը, որը կարճ և ընդգրկուն բնութագրում է նաև Չեքիջյանի գործունեությունը.

«Սիրելի Հովանես! Только что по телевизору смотрел передачу о тебе и твоём хоре. Я снова был в восторге от твоего мастерства. Были прекрасны Россини и Комитас. Я помню в Большом зале Московской консерватории Гуно и что-то ещё очень трудное и красивое. Это письмо я пишу из больницы. Я давно собирался тебе сказать или написать, что я думаю о тебе. Но московская суэта и шумные ереванские встречи не позволяли мне сказать тебе то, что я скажу тебе сейчас. Меня удивляет, что за очень короткое время ты сумел создать такой хоровой коллектив, который занял не только всесоюзное положение, но и стал известен за границей. Ведь если собрать 100 прекрасных певцов, то это ещё не хор, не

²⁰ Տե՛ս Վեքսլեր Ի., Կլիմենկո Վ., Հանդիսավոր համերգ Կրեմլի համագումարների պալատում, «Սովետական Հայաստան», 8 ապրիլի, 1971:

²¹ О присуждении Государственной премии Армянской ССР в области литературы, искусства, архитектуры и градостроительства 1970 года, «Коммунист», 8 апреля, 1971.

²² Почетный диплом – Государственной капелле, «Коммунист», 23 мая, 1971.

²³ Տե՛ս Հ.Չեքիջյանի անձնական արխիվ:

²⁴ **Արամ Խաչատրյան**, Письма, Ереван, 1983, стр. 138.

творческий коллектив, т.е. я хочу сказать, что для того, чтобы создать художественный коллектив, нужны годы. Ты очень большой музыкант и обладатель огромного таланта. Государственный хор Армении – один из самых лучших хоров в Советском Союзе. Беспощадно требуй высокого художественного уровня и смело избавляйся от посредственностей. Пиши и в Москве, и в Ереване, и за границей. Ты прекрасно умеешь и инструментировать. У тебя такая большая амплитуда красок и нюансов, что поражаешься. Ты и твоя деятельность – яркое доказательство формулы – «интернациональное и национальное». Ты сумел свое национальное обработать в интернациональное и сделать свое искусство общечеловеческим. В больнице у меня много времени, поэтому я имею возможность писать тебе это письмо. Желаю тебе здоровья и новых успехов.

Арам Хачатурян.

12 декабря, 1977»²⁵.

1972 թ. հունիսի 16-ին երգչախումբը մեկօրյա այցով Մոսկվայում էր. Մոսկվայի Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի Մեծ դահլիճում հնչեցին Բախի, Հենդելի, Վերդիի, Բեռլիոզի, Գլինկայի, Բեթհովենի, Հախինյանի ստեղծագործությունները²⁶, իսկ մեկ ամիս անց այս անգամ արդեն հյուրախաղերով Մաեստրոյի գլխավորությամբ խումբը կրկին մայրաքաղաքում էր (հուլիսի 23-28):

Հ.Չեքիջյանի շնորհիվ Հայաստանի երաժշտական կյանքը մեծ վերելք ապրեց: Իր գործունեությամբ Մաեստրոն դարձավ մի շարք նոր ստեղծագործությունների առաջին և անգերազանցելի մեկնաբանը: Կապելլայի երկացանկն օրեցօր աճում էր. հնչում էին ամենատարբեր ժանրերի և ոճերի ստեղծագործություններ աշխարհի տարբեր լեզուներով: Մաեստրոն իր առաջ դրել էր մի կարևոր

²⁵ Չորս ամիս անց մեծ կոմպոզիտորը հեռացավ կյանքից՝ մարդկությանը թողնելով իր համամարդկային երաժշտական ժառանգությունը:

²⁶ Еще одна встреча с капеллой, «Коммунист», 2 июля, 1972.

խնդիր՝ աշխարհին ներկայացնել հայի երաժշտությունը. հայկական դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունները հնչում էին ամբողջ Խորհրդային Միությունով մեկ, ինչպես նաև արտասահմանում: Դժվար էր պատկերացնել մի համերգ, որտեղ չհնչեին Կոմիտասի խմբերգերը. եթե անգամ ծրագրում չկան, ապա «բի՛ս»-ի կանչերի ներքո անպայման պետք է հնչեր «Ձիգ տո՛ւր, քաշի»-ն, «Գարուն ա»-ն, «Ալազյազ»-ը...

Մաեստրոն առաջնորդվում էր «նոտաները պետք է լինեն գլխում, այլ ոչ թե ձեռքերում» առաջաբանով, այդ իսկ պատճառով կատարողների ձեռքին երբեք նոտաներ չեն եղել՝ անկախ ստեղծագործության ծավալից և բարդությունից: Անվերապահորեն և անձնվեր ծառայելով երաժշտությանը՝ Մաեստրոն նույնը պահանջում էր իր երգչախմբից:

1974 թ. ապրիլի 11-ից 18-ը երգչախումբը հերթական անգամ հյուրախաղերով մեկնում է Մոսկվա: Նոր ծրագրում՝ Ալեքսանդր Հարությունյան, Առնո Բաբաջանյան, Արմեն Տիգրանյան, Եկմալյան, Կոմիտաս, Բախ, Հենդել, Վերդի, Մասկանի, Շուման, Բիզե, Գունտ, Ռոսինի, Գերշվին, Տիխոն Խրեննիկով: Երգչախմբին նվագակցում էին երկու հեղինակավոր նվագախմբեր՝ Մոսկվայի պետական ֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբը և Խորհրդային Միության պետական ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբը: Արձագանքները շատ ջերմ էին, իսկ տպավորությունները՝ հուզական և անմոռանալի²⁷:

Նույն թվականի հոկտեմբերի 15-ին, Անդրկովկասի երաժշտության փառատոնի շրջանակներում, Չայկովսկու անվան դահլիճում երգչախումբը ևս մեկ համերգ ունեցավ՝ միայն A cappella կատարումով, որի մասին հիացական խոսքեր գրեցին անվանի երաժշտագետ Պավել Խուչուման²⁸ և «Музыкальная жизнь» հեղինա-

²⁷ Տե՛ս Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի մոսկովյան համերգները, «Սովետական Հայաստան», 17 ապրիլի, 1974:

²⁸ Տե՛ս **Хуча П.**, Торжество музыки, талантов и дружбы, “Заря Востока”, 13 октября, 1974. **Хуча П.**, Сила Звучания, “Заря Востока”, 14 ноября, 1974.

կավոր ամսագիրը²⁹: Իր հարցազրույցներից մեկում Արամ Խաչատրյանը նշել է. «...շատ բարձր եմ գնահատում Հովհաննես Չեքիջյանի կատարած աշխատանքը: Չեքիջյանը համաշխարհային ընդգրկման դիրիժոր է. երգչախմբային արվեստը կարողանում է հասցնել համամարդկային հնչողության»³⁰:

1975թ. երգչախումբը ստանում է Հանրապետության վաստակավոր կոլեկտիվի կարգավիճակ: Մասնորոն շարունակում է անտրտունջ աշխատել. անդադար փորձեր, նոր ստեղծագործություններ, շրջագայություններ, հյուրախաղեր, վերադարձ տուն և կրկին փորձեր: Ահա թե ինչպես է գնահատել Հ.Չեքիջյանի արվեստը անվանի գրականագետ և թատերագետ Լևոն Հախվերդյանը. «Հայտնի է, որ խոսքի բարձրագույն կիրառումը հատուկ է բանաստեղծական արվեստին: Խոսքը՝ «աստվածային բանը», ամենից իմաստավորված ու բյուրեղացած հնչում է բանաստեղծության մեջ՝ ի հայտ բերելով անսպասելի, անիմանալի խորքեր: Պոեզիան խոսքի օգտագործման բարձրագույն ձևն է: Բայց կա առավել կատարյալը, երբ խոսքը զուգորդվում, բնավորվում է երաժշտությամբ: Այս դեպքում խոսքը ձեռք է բերում մի առանձին խորհուրդ՝ դառնում ժողովրդական հոգեբանություն: Նույնիսկ պարզ մտաբերումով մեզ համար «ծիրանի ծառ», «անձրևն եկավ», «կուժն առա», «սև մութ ամպեր» և ուրիշ-ուրիշ սովորական խոսքեր ձեռք են բերում անսովոր խորք և հուզական հարստություն հենց այն պատճառով, որ կան դրանցով ստեղծված հրաշալի երգեր: Իսկ երգերի կատարման մեջ, իհարկե, բարձրարվեստ կատարման, ինչպես Հովհաննես Չեքիջյանի երգչախումբն է, խոսքը հնչում է ներգործության արտասովոր ուժով»³¹:

Հ.Չեքիջյանի հերթական մեծ նվաճումը եղավ Բեռլինի «Ռոմեո և Ջուլիետ» մեծակտավ ստեղծագործությունը. սիմֆոնիկ նվա-

²⁹ Поэт академическая капелла Армении, “Музыкальная жизнь”, 1974, N 10.

³⁰ Տե՛ս Արամ Խաչատրյանի հետ հարցազրույցից, «Հայրենիքի ծայն», 1 հունվարի, 1974:

³¹ **Հախվերդյան Լ.**, Խոսքի երաժշտականը, «Գրական թերթ», 12 դեկտեմբերի, 1975, էջ 4:

գախմբի, երեք երգչախմբերի և երեք մենակատարների համար գրված հսկայական ծավալի պարտիտուրով իր այս գործը Բեռլինում նվիրել էր Պազանինին: Խորհրդային Միությունում այն հնչելու էր առաջին անգամ. առաջնախաղը տեղի ունեցավ Մոսկվայում 1978 թ. հունվարի 18-ին: Տպավորությունները ցնցող էին... Նույն 1978-ին Սովետական Միության Գերագույն խորհրդի հրամանով Մաեստրոյին շնորհվեց ԽՍՀՄ Ժողովրդական արտիստի պատվավոր կոչումը³²:

Առջևում նոր ստեղծագործություններ էին և նոր երաժշտական բարձունքներ: Հերթական այցելությունը Մոսկվա տեղի ունեցավ 1979 թ. հունվարին. եռօրյա հյուրախաղերով (հունվարի 9, 11, 12) երգչախումբը մեկնեց մայրաքաղաք: Արդեն հարազատ դարձած Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի Մեծ դահլիճը բացել էր իր հյուրընկալ դռները: Ծրագրում՝ Բեթհովեն – 9-րդ սիմֆոնիա, Բախ – *Messa A-Dur*, Բեռլինոզ – «*Te Deum*». Նվագակցում էր Մոսկվայի պետական ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ ակադեմիական նվագախումբը: Համերգն ունեցավ շլացուցիչ հաջողություն: Ինչպես շատ ստեղծագործություններ, այնպես էլ Հեկտոր Բեռլինոզի «*Te Deum*» (Առ Քեզ, Աստված) հոգևոր մեսսան Խորհրդային Միությունում առաջին անգամ կատարեց Մաեստրոն:

1980 թվականն աննախադեպ էր. Մոսկվայում կայանալու էին ամառային XXII օլիմպիական խաղերը (հուլիսի 19 – օգոստոսի 3): Բացառիկ կարևորությամբ այս միջոցառմանը Սովետները պատշաճ նախապատրաստվել էին. շքեղ էր ինչպես բացման, այնպես էլ հետագայում փակման արարողությունը: Մոսկովյան օլիմպիական խաղերին փայլուն մասնակցեցին նաև հայ մարզիկները... սահմանվեցին աշխարհի նոր ռեկորդներ, և նվաճվեցին մեդալներ: Առավել հիշարժան էր Յուրի Վարդանյանի ելույթը, որը սահմանեց աշխարհի նոր ռեկորդ և նվաճեց ոսկե մեդալ: Մեծ վաստակ ունեցավ

³² Указ Президиума Верховного Совета СССР О присвоении почетного звания народного артиста СССР тов. Чекиджяну О. А., «Советская культура», 24 ноября, 1978.

նաև Մաեստրո Չեքիջյանը. 1980 թ. հուլիսի 27-ին Հայաստանի ակադեմիական երգչախումբը Մոսկվայում էր: Չայկովսկու անվան պետական կոնսերվատորիայի Մեծ դահլիճում օլիմպիական խաղերի մշակութային միջոցառումների շրջանակում Խորհրդային Միության բոլոր անվանի խմբերի մրցակցության արդյունքում Հայաստանի Պետական երգչախմբի կատարմամբ հնչեցված Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան ճանաչվեց լավագույնը, և դիրիժոր Հովհաննես Չեքիջյանն արժանացավ «Ժողովուրդների բարեկամություն» շքանշանին:

Ինչպես ասել էր Մաեստրոն իր հարցազրույցներից մեկում. «Արվեստագետներ են բոլոր նրանք, ովքեր շատացնում են կյանքի գեղեցիկը»³³: Շատ դիպուկ էր ասված... Հ. Չեքիջյանը շարունակում էր մարդկանց կյանքը գեղեցկացնել: Առաջիկայում նոր ստեղծագործություններ էին և ծրագրում անգլիացի կոմպոզիտոր Կոնստանտ Լամբերտի «Rio Grande» աշխարհիկ կանտատն էր: Խառը ալտի, երգչախմբի, դաշնամուրի, փողային և լարային գործիքների համար գրված այս ստեղծագործությունը գերշվինական ոճի սիմֆոնիա-ջազի վառ օրինակ էր, որը 1930-ականներին մեծ հաջողություն էր վայելում Եվրոպայում: «Rio Grande» վերնագիրը Ս.Սիթվելի (Sacheverell Sitwell) համանուն բանաստեղծությունն էր (գետ Բրազիլիայում), որն էլ հիմք էր ծառայել Կ.Լամբերտի այդ ստեղծագործության համար: Երևանյան ունկնդիրն այն շատ սիրեց³⁴:

Երգչախմբի երկացանկում ամուր հաստատվեց Մաեստրոյի հեղինակած «Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմը՝ երկու մենակատարների, երգչախմբի և նվագախմբի համար: Հ. Չեքիջյանի սիրելի բանաստեղծներից էր Վահան Տերյանը, որի բանաստեղծությունն էլ հիմք էր ծառայել այդ ստեղծագործության համար: «Գարնանային անուրջներ»-ը ստեղծվել է 1975թ.: 1977թ. հունվարի 11-ին Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) կայացած

³³ Դավթյան Ս., Հովհաննես Չեքիջյան. Արվեստագետն ու քաղաքացին, Երևան, 2000:

³⁴ Տե՛ս «Ռիո-Գրանդե». առաջին կատարում, «Երեկոյան Երևան», 17 հունվարի, 1983:

առաջնախաղի վերաբերյալ հետևյալ գրախոսականը եղավ. ««Գարնանային անուրջներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմը ծոն է սիրուն, զարթոնքին, մարդկային ուրախություններին: Կոմպոզիտորի ապրումներն ու հոգեկան խռովքը հնչում էին երգչախմբի, սիմֆոնիկ նվագախմբի և մենակատարների միաձույլ ձայնով՝ ամբողջանալով կենսահաստատ ու ցնծագին վերջերգում»³⁵: Իր հարցազրույցներից մեկում Մաեստրոն նշել է. «Ես համարում եմ, որ այս ստեղծագործությունն իմ ամենահաջողվածներից է, որովհետև այն գրված է ուրիշ զգացմունքներով, սիրո վերաբերյալ է: Ընդհանրապես, Վահան Տերյանի պոեզիան թողել է ինձ վրա խոշոր ազդեցություն: Կարծում եմ, նրա խոսքերի վրա գրված երաժշտությամբ ինձ հաջողվել է արտացոլել նրա ոգին»³⁶:

Հերթական մոսկովյան հյուրախաղերի (1983 թ., հունիսի 18, 23, 25) համերգային ծրագրում էր՝ Բեռլիոզ – «Ռումբո և Ջուլիետ», Ռոսինի – «Stabat Mater», Ֆորե – «Ռեքվիեմ»:

Կատարվելու էին նաև Կ.Լամբերտի «Rio Grande» կանտատն ու Հ.Չեքիջյանի «Գարնանային անուրջներ» պոեմը. երկու ստեղծագործությունն էլ մայրաքաղաքում հնչելու էին առաջին անգամ: Մոսկովյան հյուրախաղերի փայլուն հաջողությունների մասին գրեց մամուլը³⁷:

Այսուհետ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի այցելությունը Մոսկվա գնալով նվազեց: Խորհրդային Միությունում բազմաթիվ գործոնների, այդ թվում և սոցիալական, տնտեսական անլուծելի խնդիրների պատճառով խմորումներ էին տեղի ունենում, նախապատրաստվում էր լուրջ քաղաքական գործընթաց, որն այդ հզոր պետությունը տանելու էր դեպի անկում:

³⁵ Վարդանյան Ռ., Պրեմիերաներ՝ Լենինգրադում, «Սովետական Հայաստան», 1 փետրվարի, 1977:

³⁶ Մանուկյան Հ., Յովհաննես Չեքիջյանը՝ կոմպոզիտոր, Հովհաննես Չեքիջյան-85, գիտական նստաշրջանի նյութեր, Երևան, 2014, էջ 95:

³⁷ Տե՛ս Համերգներ, «Սովետական Հայաստան», 25 հունվարի, 1983: Նաև՝ Գասպարյան Ա., Խմբերգային համերգներ Մոսկվայում, «Սովետական Հայաստան», 9 փետրվարի, 1983:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության մայրաքաղաք Մոսկվայում կապելլայի վերջին համերգը կայացավ 1987թ. հունվարի 4-ին, երբ խումբը վերջին անգամ մասնակցեց արդեն երկար տարիներ բարի ավանդույթ դարձած «Ռուսական ծմեռ» փառատոնին: Ծրագրում Վերդիի անմահ «Նաբուկկո» օպերայից հատվածներ էին. հատկապես ցնցող էր հանրահռչակ «Գեղիների խմբերգը»³⁸:

1991թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը դուրս եկավ Խորհրդային Միության կազմից և դարձավ անկախ պետություն, իսկ դեկտեմբերին աշխարհի գերտերություն ԽՍՀՄ-ը դադարեց իր գոյությունը: Քաղաքական այս իրադարձությունները չէին կարող անհետ անցնել և իրենց ազդեցությունը չունենալ արվեստի և մշակույթի զարգացման ոլորտում: Հայաստանի Հանրապետությանը սպասում էին ծանր փորձություններ...

Ինչպես երկրի բազմաթիվ կոլեկտիվներ, կապելլան նույնպես զրկվում է պետական օժանդակությունից: Դադարում են հյուրախաղերը, համերգները. անգամ Հայաստանում ելույթները դառնում են եզակի:

1993-ին երաժշտական աշխարհը տոնում էր Արամ Խաչատրյանի ծննդյան 90-ամյա տարեդարձը: Այդ իրադարձությունը նշանավորվեց գեղեցիկ համերգներով, որտեղ հնչեցին մեծ կոմպոզիտորի ստեղծագործությունները: Մոսկվայի Չայկովսկու անվան կոնսերվատորիայի Մեծ դահլիճում կատարվեց Խաչատրյանի III սիմֆոնիան, որն իր ստեղծման օրից (1947թ.) ընդամենը չորս անգամ էր հնչել: Հրավիրված էր նաև Մաեստրո Չեքիջյանը: Այդ օրը՝ ապրիլի 20-ին, Չեքիջյանի գլխավորությամբ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը կատարեց Արամ Խաչատրյանի «Ձոն ցնծության» մեծակտավ ստեղծագործությունը, որի երկրորդ անվանումն է «Ստալինգրադի ճակատամարտ»³⁹: Հայ-

³⁸ Տե՛ս **Չեքոտարևսկայա Կ.**, «Ռուսական ծմեռ» տաք օրերը, «Երեկոյան Երևան», 14 հունվարի, 1987:

³⁹ Այն գրվել էր Մոսկվայում Հայաստանի գրականության և արվեստի երկրորդ տասնօրյակի կապակցությամբ (1-10 հունիսի, 1956թ.):

րենական մեծ պատերազմի հաղթանակին նվիրված այս ստեղծագործությունը կոմպոզիտորը գրել էր 1956 թ. անվանի բանաստեղծ Սերգեյ Սմիրնովի⁴⁰ պոետիկ շարքի հիման վրա (բաղկացած է 8 մասից): «Ձոն ցնծության» վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունը գրված է մեցցո-սոպրանոյի, լարային խմբի, 10 տավիղների, երգչախմբի և նվագախմբի համար: Հանդիսատեսը մեծ կարոտով և խանդավառությամբ ընդունեց կապելլային և նրա անխոնջ ղեկավար Մաեստրո Չեքիջյանին:

Ուղիղ տասը տարի անց՝ 2003-ին (5 հունիսի), այս անգամ Ա.Խաչատրյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյին, նույն դահլիճում կապելլայի կատարմամբ կրկին հնչեց «Ձոն ուրախության» պոեմ-կանտատը:

2006 թ. մարտի 1-ը կապելլայի հերթական հաղթական օրերից էր. Մոսկվայի Քրիստոս Փրկիչ տաճարի եկեղեցական ժողովների համերգային դահլիճում Հովհաննես Չեքիջյանի գլխավորությամբ ելույթ ունեցավ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը: Ծրագրում՝ Հենդել, Ջորջ Գերշվին, Կարլ Օրֆ, Առնո Բաբաջանյան, Էդգար Հովհաննիսյան, Հովհաննես Չեքիջյան (խմբավարներ՝ Կառլեն Ալեքսանյան, Հարություն Օդաբաշյան, դաշնակահար՝ Արամ Թուրաբյան): Մամուլի արձագանքը հետևյալն էր. «Концерт Государственного академического хора Армении, состоявшийся 1 марта в храме Христа Спасителя в Москве в связи с Годом Армении в России, потряс требовательную российскую публику. В насыщенной полуторачасовой программе концерта прозвучала классическая музыка и духовная музыка армянских композиторов. Хот завершил свое выступление в Москве песней «Эребуни-Ереван»»⁴¹. Աշխարհահռչակ երգչուհի Իրինա Արխիպովան, ով որպես մենակատար կապելլայի հետ համատեղ բազմաթիվ երաժշտական նախագծեր է իրականացրել, շատ բարձր

⁴⁰ Ս. Սմիրնովի մահվան տարեթիվը համընկավ Ա.Խաչատրյանի 90-ամյակի հետ՝ 1993թ.:

⁴¹ Маэстро Чекиджян потряс московскую публику, “Голос Армении”, 4 марта, 2006.

գնահատական տվեց Մաեստրոյի գործունեությանը, իսկ անվանի երաժշտագետ Սվյատոսլավ Բելզան, ով վարում էր համերգը, ավարտից հետո մոտենալով Չեքիջյանին, բացականչեց. «Этот концерт – бомба»⁴².

2010թ. հոկտեմբերի 17-ին Մոսկվայում՝ Չայկովսկու անվան դահլիճում, կայացավ կապելլայի նախավերջին ելույթը... Կրկին հնչեց Ա.Խաչատրյանի «Ձոն ցնծության» ստեղծագործությունը:

Կապելլայի հերթական համերգը Ռուսաստանի մայրաքաղաքում տեղի ունեցավ 2012թ. սեպտեմբերի 11-ին Չայկովսկու անվան Մեծ դահլիճում: Համերգը նվիրված էր մեծ քաղաքական գործիչ, Խորհրդային Միության և Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Կամո Ուդումյանի⁴³ 85-ամյա հոբելյանին: ԽՍՀՄ-ում դիվանագիտական բարձունքների հասած հայորդին մեծ ավանդ է ունեցել Հայաստանի մշակույթի և արվեստի զարգացման, պատմական հուշարձանների պահպանման գործում: Համերգային ծրագրում՝ Կոմիտաս, Բեթհովեն – «Ֆանտազիա» դաշնամուրի (մենակատար՝ Լիլիթ Ջաքարյան), երգչախմբի և նվագախմբի համար, Շոբերտ – «Կանտան C-Dur» (մենակատար՝ Մագդա Մկրտչյան, սոպրանո), Վերդի – «Ազգերի հիմնը»⁴⁴ (մենակատար՝ Պերճ Քարազյան, տենոր), Օրֆ – «Carmina Burana», նվագակցում

⁴² Хоровая капелла Чекиджяна в храме Христа Спасителя, “Ноев Ковчег”, март (15-31), 2006.

⁴³ Կամո Ուդումյան (1927-2011)՝ պատմական գիտությունների դոկտոր (1967), Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր (1964-1967), Հայկական ԽՍՀ կուլտուրայի մինիստր (1967-1972), արտաքին գործերի մինիստր (1972-1975), Խորհրդային Միության արտակարգ և լիազոր դեսպան Նեպալի Թագավորությունում (1975-1979), արտակարգ և լիազոր դեսպան Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում (1979-1984) և այլն: Հայրենիքին մատուցած ծառայությունների համար բազմաթիվ մրցանակների և կոչումների է արժանացել:

⁴⁴ «Ազգերի հիմնը», որը Վերդին գրել էր 1862 թ. Լոնդոնում կայանալիք Համաշխարհային ցուցահանդեսի փառատոնի բացման կապակցությամբ, ԽՍՀՄ-ում և ԱՊՀ-ի պետություններում, բացի Հոլիանդես Չեքիջյանի կապելլայից, ոչ մի երգչախումբ չի կատարել:

էր Մոսկվայի պետական ակադեմիական սիմֆոնիկ նվագախումբը: Մամուլում գրվեց. «Московское выступление Капеллы было не просто успешным концертом, а роскошным представлением»⁴⁵.

Մոսկվայի երաժշտական հանրությունը մեծ ոգևորությամբ և խանդավառությամբ ընդունեց կապելլայի այդ համերգը: Մարդիկ բառիս բուն իմաստով կարոտ էին... Դահլիճում ներկաներից շատերը կապելլայի հին երկրպագուներն էին, որոնք դեռ հիշում էին այդ հռչակավոր երգչախմբի խորհրդային տարիների փայլուն ելույթները: Նույնիսկ համերգից մեկ ամիս անց զանգահարում էին բարեկամներ, ընկերներ և ծանոթներ, հարցնում, թե երբ է կապելլան նորից գալու Մոսկվա:

Հ. Գ. Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանին՝ անհրաժեշտ նյութեր տրամադրելու համար:

**Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ
Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի՝
Մոսկվայում կայացած համերգները**

	24 նոյեմբերի, 1964		16 հունիսի, 1972		11 հունվարի, 1979
	25 նոյեմբերի, 1964		23 հուլիսի, 1972		12 հունվարի, 1979
	26 նոյեմբերի, 1964		24 հուլիսի, 1972		23 հուլիսի, 1980
	27 նոյեմբերի, 1964		25 հուլիսի, 1972		24 հուլիսի, 1980
	28 նոյեմբերի, 1964		26 հուլիսի, 1972		25 հուլիսի, 1980
	26 դեկտեմբերի, 1965		27 հուլիսի, 1972		18 հունվարի, 1983
	27 դեկտեմբերի,		28 հուլիսի, 1972		23 հունվարի, 1983

⁴⁵ Армяне сегодня, 10 октября, 2012.

	1965				
	28 դեկտեմբերի, 1965		11 ապրիլի, 1974		25 հունվարի, 1983
	29 դեկտեմբերի, 1965		13 ապրիլի, 1974		01 հունվարի, 1987
	24 փետրվարի, 1967		14 ապրիլի, 1974		04 հունվարի, 1987
	25 դեկտեմբերի, 1967		17 ապրիլի, 1974		28 հունիսի, 1987
	26 դեկտեմբերի, 1967		18 ապրիլի, 1974		29 հունիսի, 1987
	27 փետրվարի, 1967		15 հոկտեմբերի, 1974		08 դեկտեմբերի, 1987
	01 հունիսի, 1967		28 ապրիլի, 1975		09 դեկտեմբերի, 1987
	02 հունիսի, 1967		04 մարտի, 1976		21 հուլիսի, 1993
	05 հունիսի, 1967		21 փետրվարի, 1977		22 հուլիսի, 1993
	06 հունիսի, 1967		10 մայիսի, 1978		25 հոկտեմբերի, 1993
	10 հոկտեմբերի, 1969		11 մայիսի, 1978		26 հոկտեմբերի, 1993
	11 հոկտեմբերի, 1969		12 մայիսի, 1978		27 հոկտեմբերի, 1993
	13 հոկտեմբերի, 1969		13 մայիսի, 1978		07 դեկտեմբերի, 1993
	03 դեկտեմբերի, 1969		10 հուլիսի, 1978		22 ապրիլի, 2001
	02 փետրվարի, 1971		11 հուլիսի, 1978		23 ապրիլի, 2001
	03 փետրվարի, 1971		12 հուլիսի, 1978		24 ապրիլի, 2001
	05 փետրվարի, 1971		13 հուլիսի, 1978		01 մարտի, 2006
	08 ապրիլի, 1971		09 հունվարի, 1979		17 նոյեմբերի, 2010
	24 դեկտեմբերի, 1971		10 հունվարի, 1979		11 սեպտեմբերի, 2012

ՑԱՆԿ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՐԳՉԱԽՄԲԻ՝
ՄՈՍԿՎԱՅԻ Պ.Ի. ՉԱՅԿՈՎՍԿՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ՀԱՄԵՐԳՆԵՐԻ^{46/47}

- 25.11.1964** Համերգ *A cappella*
27.11.1964 Մոգարտ' *Requiem*,
 Շուբերտ' «Միլիամի հաղթերգը»
 Московский симфонический оркестр Всероссий-
 ского гастрольно-концертного объединения
27.12.1965 Մ.Գլինկա' Խմբերգ «Ռուսլան և Լյուդմիլա» օպե-
 րայից,
 Ա.Տիգրանյան' Խմբերգ «Անուշ» օպերայից,
 Ռուսինի' «Stabat Mater»,
 Շուբերտ' «Միլիամի հաղթերգը»
 Государственный симфонический оркестр кинемато-
 графии СССР
28.12.1965 Գրիգոր Հախինյան' Կանտատ «Սայաթ-Նովա»,
 Բերթոլդեն' «Ֆանտազիա» դաշնամուրի երգչախմբի
 և նվագախմբի համար,
 Ռուսինի' «Stabat Mater»,
 Государственный симфонический оркестр кинема-
 тографии СССР
24.02.1967 Ռուսինի' «Stabat Mater»,
 Գրիգոր Հախինյան' «Թոնդրակեցիներ»
 Симфонический оркестр Московской государствен-
 ной филармонии

⁴⁶ Շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

- 26.02.1967** *Քեդիոնգ՝ “Requiem”*
Государственный симфонический оркестр Союза ССР
- 03.02.1971** *Համերգ A cappella*
- 05.02.1971** *Գունն՝ “Mors et Vita”,
Ֆորե՝ “Requiem”*
Симфонический оркестр Московской государственной филармонии
- 16.06.1972** *Քախ, Հենդել, Վերդի, Քեդիոնգ, Գլինկա, Բեթհովեն,
Հախինյան*
Симфонический оркестр Московской государственной филармонии
- 11.04.1974** *Գունն՝ “Mors et Vita”, հալավածներ
Ֆորե՝ “Requiem”*
Академический симфонический оркестр Московской государственной филармонии
- 14.04.1974** *Համերգ, Ծրագրում՝ Ալեքսանդր Հարությունյանի,
Առնո Բաբաջանյանի, Տիխոն Խրեննիկովի, Արմեն
Տիգրանյանի, Շումանի, Գերշվինի, Կոմիտասի, Տա-
նենի, Եկմալյանի, Հենդելի, Քախի, Վերդիի, Մաս-
կանիի, Բիզեի, Գունոյի և Ռուսինիի սպեղծագործու-
թյուններից*
- 17.04.1974** *Ռուսինի՝ «Սևիլյան սափրիչ» օպերայի նախեր-
գանքը,
“Stabat Mater”*
Государственный академический симфонический оркестр Союза ССР
- 18.04.1974** *Ռուսինի՝ «Սևիլյան սափրիչ» օպերայի նախեր-
գանքը,
“Stabat Mater”*
Государственный академический симфонический оркестр Союза ССР

- 15.10.1974** Համերգ *A cappella*
- 18.01.1978** Բեռլինոյ՝ «Ռումեն և Ջուլիեն»
Академический симфонический оркестр Московской государственной филармонии
- 09.01.1979** Բեթհովեն՝ Իններորդ սիմֆոնիա
Академический симфонический оркестр московской государственной филармонии
- 11.01.1979** Բախ՝ Մեսսա *A-dur*,
Բեռլինոյ՝ “*Te Deum*”
Академический симфонический оркестр Московской государственной филармонии
- 12.01.1979** Բախ՝ Մեսսա *A-dur*,
Բեռլինոյ՝ “*Te Deum*”
Академический симфонический оркестр Московской государственной филармонии
- 23.07.1980** Բեթհովեն՝ Իններորդ սիմֆոնիա
Մշակութային ծրագիր «Օլիմպիադա - 80»
Большой симфонический оркестр Всесоюзного радио и Центрального телевидения
- 18.01.1983** Բեռլինոյ՝ «Ռումեն և Ջուլիեն»
Академический симфонический оркестр Московской государственной филармонии
- 23.01.1983** Լամբերտ՝ “*Rio Grande*” (Մոսկվայում առաջին կատարում),
Ռուինի՝ “*Stabat Mater*”,
Հ. Չեքիջյան՝ «Գարնանային անուրջներ», վոկալ-սիմֆոնիկ պոեմ մեծ սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի և մենակատարների համար (Մոսկվայում առաջին կատարում),
Академический симфонический оркестр Московской государственной филармонии
- 25.01.1983** Ֆորե՝ “*Requiem*”
Ռուինի՝ “*Stabat Mater*”

- Академический симфонический оркестр Московской
государственной филармонии
04.01.1987 Վերդի՝ «Նաբուկո»
 Академический симфонический оркестр Московской
государственной филармонии
20.04.1993 Արամ Խաչատրյան – «Ձոն ցնծության»
 Московский симфонический оркестр
05.06.2003 Արամ Խաչատրյան – «Ձոն ցնծության»
 Государственный симфонический оркестр «Новая
Россия»
17.10.2010 Արամ Խաչատրյան – «Ձոն ցնծության»
11.09.2012 Կոմիտաս,
 Բեթհովեն՝ «Ֆանտազիա» դաշնամուրի երգչախմբի
 և նվագախմբի համար,
 Շուբերտ՝ «Կանտատ»,
 Վերդի՝ «Ազգերի հիմնը»
 Օրֆ՝ «Carmina Burana»
 Академический симфонический оркестр

Լիլիթ ԱՐՏԵՄՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող,
արվեստագիտության թեկնածու

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԳԵՏՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ
(ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ)**

Հայ կատարողական արվեստի նշանավոր ներկայացուցիչների գործունեության ուսումնասիրությունը հայ երաժշտագիտության կարևորագույն ճյուղերից է: Այդ առումով կարևոր են հայ կատարողական արվեստի նվիրյալների ստեղծագործական գործունեությունն ուսումնասիրելու և արժևորելու վերաբերյալ հայ երաժշտագետների հետազոտությունները:

Ինչպես հայտնի է, հայ կատարողական արվեստն ինտենսիվ զարգացում է ապրել խորհրդային տարիներին: Դեռևս 1960 թվականին Ստամբուլի պետական կապելլայի գեղարվեստական ղեկավարի և գլխավոր դիրիժորի պաշտոնը ստանձնած 32-ամյա երիտասարդ դիրիժորը Թուրքիայից տեղափոխվում է Հայաստան և 1961 թվականից առ այսօր մշտական բնակություն հաստատում իր սիրելի մայրաքաղաքում՝ Երևանում: Հաստատման պահից ի վեր իր կյանքն ու ստեղծագործական գործունեությունը կապում է 1937 թվականին հիմնադրված Հայաստանի պետական երգչախմբի հետ և գրում վերոնշյալ կոլեկտիվի տարեգրության փայլուն էջերը: Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ էր հայկական կապելլան ստեղծելու բազմազան ու հարուստ երկացանկ՝ կատարելով համաշխարհային երաժշտական գրականության ճանաչված, հայ և օտարազգի կոմպոզիտորների ստեղծագործությունները, նաև հատվածներ օպերաներից: Բնագրի լեզվով՝ 27 լեզուներով կատարվելու էին ավելի քան 700, այդ թվում՝ խոշոր կտավի շուրջ 40 ստեղծագործություններ, որոնցից 15-ը ներկայացվելու էին Խորհրդային Միությունում առաջին անգամ:


Եվ այսպես՝ Հայաստանի պետական երգչախմբի և ընդամենը 2 ամիս առաջ երգչախմբի գեղարվեստական ղեկավարի պաշտոնը ստանձնած Հովհաննես Չեքիջյանի համատեղ անդրանիկ համերգը տեղի ունեցավ 1961 թվականի նոյեմբերի 27-ին, Երևանում: Այդ օրից ի վեր և՛ Մաեստրոն, և՛ նրա ղեկավարած երգչախումբը մշտապես երաժշտական քննադատների ուշադրության կենտրոնում են: Լույս են տեսել բազմաքանակ հոդվածներ համաշխարհային հեղինակավոր թերթերում և հանդեսներում, այդ թվում՝ “Figaro”, “New York Times”, “The Boston Globe”, “Le Monde”, “Independent”, “Paris Match”, “Meridional”, “Los Angeles Times”, “Macedonia”, “Le Soir”, “La revue du Liban”, “Правда”, “Известия”, “Советская музыка”, “Музыкальная жизнь”, “Советская культура”, “Вечерний Ленинград” և այլն, հրատարակվել են գիտական հոդվածներ, մենագրություններ:

Մեր զեկուցման նպատակն է ներկայացնել Հովհաննես Չեքիջյանի ու, միաժամանակ, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի վերաբերյալ հայ երաժշտագետների այն անդրադարձները, որոնք տպագրվել են անկախության շրջանում՝ մենագրությունների, գիտական հանդեսներում և նստաշրջանների նյութերի ժողովածուներում հոդվածների տեսքով:

Հ.Չեքիջյանի կատարողական գործունեությունը մշտապես եղել է հայ երաժշտագետների ուշադրության կենտրոնում և նրա մասին գրվել են բազմաթիվ հոդվածներ¹: Այդուամենայնիվ՝ տաղանդավոր դիրիժորի և նրա ղեկավարած կոլեկտիվի մասին երաժշտագիտական առաջին հետազոտությունները գրվել են անկախության շրջանում: Այսպես՝ 2007 թվականին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, պետական պատվերի շրջանակներում լույս է տեսնում նույն ինստիտուտի տնօրենի տեղակալ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտու-

¹ Հովհաննես Չեքիջյանի և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի վերաբերյալ հոդվածների ժամանակագրական ցանկը տե՛ս **Ասատրյան Ա.**, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 162-207:

թյան դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանի «Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ»² մենագրությունը:



Հեղինակը վաստակավոր կոլեկտիվի հիմնադրման 70-ամյակին նվիրված գրքում արխիվային վավերագրերի, համապատասխան գրականության, հայկական, սփյուռքահայ, խորհրդային և արտասահմանյան մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ լուսաբանում է Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի ստեղծման նախադրյալները, կայացումն ու անցած ստեղծագործական 70-ամյա փառապանծ ուղին, բացահայտում Կապելլայի համեր-


գային 70-ամյա գործունեության վառ էջերը, որը շարունակվում է առ այսօր: Բարձր գնահատելով կոլեկտիվի 70-ամյա գործունեությունը Աննա Ասատրյանը նշում է. «Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի Ոսկեդարը, երբ «հայկական կապելլան հասավ ԽՍՀՄ լավագույն ակադեմիական երգչախմբերի մակարդակին որոշ առումներով գերազանցելով նրանց» ու ձեռք բերեց միջազգային ճանաչում և համաշխարհային հռչակ, նշանավորվեց ամենայն հայոց մաեստրո Հովհաննես Չեքիջյանի գործունեությամբ»³: Գրքի շնորհանդեսը կայացել է 2007 թվականի դեկտեմբերի 23-ին, Արամ Խաչատրյանի անվան մեծ համերգա-

² Ասատրյան Ա., Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբ, Երևան, 2007, 136 էջ +1 մամուլ ներդիր նկարներ:

³ Նույն տեղում, էջ 34:

սրահում՝ Հ. Չեքիջյանի ծննդյան օրը և ուղեկցվել Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի համերգով:

Իսկ 2009-ին պետական պատվերով և ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել Աննա Ասատրյանի «Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան» մենագրությունը⁴, որտեղ արխիվային վավերագրերի, համապատասխան գրականության, Հայաստանի, սփյուռքահայ, խորհրդային և արտասահմանյան մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա հայրենական երաժշտագիտության մեջ առաջին անգամ լրջորեն ուսումնասիրվել և լուսաբանվել է Հովհաննես Չեքիջյանի ստեղծագործական ուղին, հանգամանորեն բացահայտվել էջերը դիրիժորի ստեղծագործական 65-ամյա գործունեության, որը շարունակվում է այսօր, շարունակվելու է ապագայում:



Հավելվածում տեղ է գտել Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հյուրախաղերի ցանկը (այբբենական ու ժամանակագրական կարգով, ինչպես նաև լենինգրադյան հյուրախաղերը), որը շրջանառության մեջ է դրվել առաջին անգամ: Հեղինակը գրում է. «Բարձրակարգ պրոֆեսիոնալիզմ, բացառիկ աշխատասիրություն, խստագույն պահանջկոտություն, անմնացորդ նվիրում իր գործին ու հայրենիքին, մարդկային մեծ

հմայք՝ ահավասիկ այն գրավականները, որոնք էլ ապահովեցին

⁴ Ասատրյան Ա., Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, 240 էջ + 2 մամուլ ներդիր:

կապելլայի սրընթաց վերելքը Մաեստրո Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ և այն դարձրեցին հայ խմբերգային երաժշտության չգերազանցված գագաթը, հայ արվեստի պարծանքներից մեկը»⁵։ Մենագրության շնորհանդեսը տեղի ունեցավ 2010թ. Հունիսի 17-ին Արամ Խաչատրյան մեծ համերգասրահում և ուղեկցվեց Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի համերգով՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ։

Հատկանշական է, որ այս շրջանում են կազմակերպվել և՛ Մաեստրոյին, և՛ նրա ղեկավարած կոլեկտիվի գործունեությանը նվիրված գիտաժողովներ։ 2007-ի մայիսի 16-ին, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հիմնադրման 70-ամյակին նվիրված կառավարական հորեյանական հանձնաժողովի կողմից հաստատված հորեյանական միջոցառումների շարքի երկրորդ միջոցառումը՝ Կապելլայի պատմությանը նվիրված անդրանիկ գիտաժողովը, որ կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը։ Գիտաժողովի ընթացքում հանդես եկան երաժշտագետներ Աննա Ասատրյանը՝ «Հայ խմբերգային արվեստը և Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը» և ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՀՀ Արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուֆսյանը՝ «Музыкальный корабль Ованеса Чекиджяна» զեկուցումներով, իսկ Հայաստանի երաժշտական ընկերության նախագահ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Դավիթ Ղազարյանի բանախոսությունը կապելլայի անցած փառապանծ ուղու մասին էր։ Բանախոսները բարձր գնահատեցին հայկական կապելլայի դերն ու նշանակությունը հայ երաժշտության համայնապատկերում։

Ավելին՝ Հ.Չեքիջյանի ծննդյան 85-ամյակի կապակցությամբ ստեղծված կառավարական հորեյանական հանձնաժողովի կողմից հաստատված հորեյանական միջոցառումների շարքում ՀՀ

⁵ Նույն տեղում էջ 11։


ԳԱԱ արվեստի ինստիտուտը ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ 2014թ. սեպտեմբերի 26-27-ին գումարեց է Հեքիջանին նվիրված առաջին գիտական նստաշրջանը, որի նպատակն էր համակողմանիորեն ներկայացնել Մաեստրոյի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը: Նստաշրջանին զեկուցումներով հանդես եկան ինչպես առաջատար, այնպես էլ երիտասարդ երաժշտագետներ և արվեստաբաններ: Լիազումար նիստը տեղի է ունեցել ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, իսկ մյուս երկու նիստերը՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը (Արզական): Նստաշրջանի աշխատանքների մասնակցել են Աննա Ասատրյանը՝ «Հովհաննես Չեքիջյան. խմբերգային արվեստի մարշալը», Մարգարիտա Ռուխկյանը՝ “Оганес Чекиджян как торжество классической хоровой традиции...”, Լիլիթ Երնջակյանը՝ «Հովհաննես Չեքիջյանը և Սփյուռքի երաժշտարվեստը», Աննա Ադամյանը՝ «Հովհաննես Չեքիջյանը և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան», Յուրի Յուզբաշյանը՝ «Խմբերգային կատարողական արվեստի չեքիջյանական մեկնաբանությունների մասին», Նելլի Ավետիսյանը՝ “Эстетические взгляды Оганеса Чекиджяна”, Մարգարիտա Քամալյանը՝ «Հովհաննես Չեքիջյանը և հայ կերպարվեստագետները», Հովհաննես Մանուկյանը՝ «Հովհաննես Չեքիջյանը՝ կոմպոզիտոր», Նաիրա Մադոյանը՝ «Հովհաննես Չեքիջյանը և Արամ Խաչատրյանը», Լիլիթ Արտեմյանը՝ «Հովհաննես Չեքիջյանը և Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնը», Սերգեյ Առաքելյանը՝ «Հովհաննես Չեքիջյանը մեծերի գնահատմամբ», Դավիթ Ղազարյանը՝ «Հովհաննես Չեքիջյան. մեր ազգային հարստություն», Արուսյակ Պետրոսյանը՝ «Վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունները Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ», Վալենտին Թովմասյանը՝ «Դիրիժոր չեն դառնում, ծնվում են», Աննա Հարությունյանը՝ «Հովհաննես Չեքիջյանը և Ֆրանսիան», Էմմա Առաքելյանը՝ «Հովհաննես Չեքիջյանը՝ Կոմիտասի խմբերգերի մեկնաբան», Սոնա Մակարյանը՝ «Հովհաննես Չեքիջյանի երևանյան դերյուտը», Սարգիս Բալբաբյանը՝ «Սերունդների խաչ-

մերուկում. Մաեստրո Հովհաննես Չեքիջյանը և Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը՝ զեկուցումներով: Վաստակաշատ դիրիժորի գործունեության առանձին ճյուղերին նվիրված երաժշտագիտական հոդվածներում համակողմանիորեն ներկայացվում են նրա ստեղծագործական դիմանկարը, վաստակը, կատարողական մեկնաբանությունների առանձնահատկությունները, ինչպես նաև տեղն ու դերը հայ և համաշխարհային երգչախմբային երաժշտության անդաստանում ևն:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ 2014 թ. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է

ընծայել գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուն⁶:

Այս շրջանում ևս տպագրվել են հայ և օտարալեզու հոդվածներ տարբեր հեղինակավոր հանդեսներում և միջազգային գիտական նստաշրջանների նյութերի ժողովածուներում, այդ թվում՝ Մարգարիտա Ռուխկյանի “Варпет”⁷, Աննա Ասատրյանի “Ленинградские гастролы Государственной академической капеллы Армении”⁸, «ՀՀ ԳԱԱ հուշամեդալը՝



⁶ Հովհաննես Չեքիջյան – 85, Գիտական նստաշրջան՝ նվիրված Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 85-ամյակին (26-27 սեպտեմբերի, 2014), Նստաշրջանի նյութեր, Երևան, 2014, 179 էջ:

⁷ Рухкян М. Варпет, “Музыкальная академия”, 2005, стр. 154-155.

⁸ Асартян А. Ленинградские гастролы Государственной академической капеллы Армении, Социально-психологическое обеспечение профессиональной деятельности. Тематический сборник, Санкт-Петербург, 2009, стр. 114-117

Հովհաննես Չեքիջյանին»⁹, “Ohannes Tchekidjian's Contribution to Armenian Music Art”¹⁰, «Ստեղծագործական փայլատակումներով և սխրանքներով լի կյանքի ուղի (Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 90-ամյա հոբելյանի առթիվ)»¹¹, «Երևանը հայ երաժշտության կենտրոն»¹², “Арам Хачатурян и Оганес Чекиджян: творческие контакты выдающихся музыкантов”¹³, Լիլիթ Արտեմյանի «Հովհաննես Չեքիջյանի ներդրումը Երևանի երաժշտական կյանքում (անկախության շրջան)»¹⁴ հոդվածները ևն: Մարգարիտա Ռուֆսկյանի հոդվածում կարդում ենք. “Ованес Чекиджян... Один из тех, кого называют прекрасным и емким словом – Варпет. Профессиональное мастерство – это само собой. Но Варпет – это понятие фундаментальное, включающее и масштаб работы мастера, и резонанс,

⁹ Ասատրյան Ա., ՀՀ ԳԱԱ հուշամեդալը՝ Հովհաննես Չեքիջյանին, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2007, 3(620) էջ 268-271:

¹⁰ Ասատրյան Ա., Ohannes Tchekidjian's Contribution to Armenian Music Art, «Բանբեր հայագիտության», հայագիտական միջազգային հանդես, Երևան, 2018, 3 (18), էջ 153-170:

¹¹ Ասատրյան Ա., Արտեմյան Լ., Ստեղծագործական փայլատակումներով և սխրանքներով լի կյանքի ուղի (Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 90-ամյա հոբելյանի առթիվ), Կանթեղ. Գիտական հոդվածներ, 2018, 4 (77), էջ 290-301:

¹² Ասատրյան Ա., Երևանը հայ երաժշտության կենտրոն, Երևան – 5, գիտական հոդվածների ժողովածու, նվիրվում է Երևանի 2800-ամյակին, Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2018, էջ 293-307:

¹³ Աննա Ասատրյանը “Арам Хачатурян и Оганес Чекиджян: творческие контакты выдающихся музыкантов” զեկուցումով հեռակա մասնակցել է Մոսկվայում 2019թ. փետրվարի 15-ին Ելենա Գնեսինայի մեմորիալ թանգարան-բնակարանի կազմակերպած «Գնեսինյան ընթերցումներ» XXIV կոնֆերանսին՝ նվիրված Գնեսինների անվան կրթօջախների հիմնադրման 124-րդ տարեդարձին և Գնեսինայի մեմորիալ թանգարան-բնակարանի հիմնադրման 50-ամյակին: Շուտով լույս կտեսնի զեկուցումների ժողովածուն:

¹⁴ Արտեմյան Լ., Հովհաննես Չեքիջյանի ներդրումը Երևանի երաժշտական կյանքում (անկախության շրջան), Երևան – 5 , գիտական հոդվածների ժողովածու, նվիրվում է Երևանի 2800-ամյակին, Երևան, Երևան քաղաքի պատմության թանգարան, 2018, էջ 364-371:

который имеет его деятельность. Без огромной сферы вокруг художественного явления варпета не бывает. Его все знают, все уважают, у него есть последователи, – ученики и поклонники, он в какой-то момент становится символом искусства своего народа, и потому Варпет должен быть постоянно в работе, в движении, он должен быть оптимистом, ему не пристало останавливаться и расслабляться. Варпет обречен на успех”¹⁵.

Այսպիսով՝ անուրանալի է Ա.Ասատրյանի մեծ վաստակը Մանեստրոյի և նրա ղեկավարած կոլեկտիվի ստեղծագործական գործունեությանն առնչվող գիտական ուսումնասիրությունների ու նստաշրջանների կազմակերպման գործում, իսկ աշխատությունների անվիճելի արժանիքներից է կարևորագույն փաստերի և նյութերի հագեցած ընդգրկումով պատմական առանցքային փուլերի շարադրանքի կուռ կառուցվածքը: Տպագրության է պատրաստ Ա.Ասատրյանի ևս մեկ՝ “Ohannes Tchekidjian: Life and Career” անգլերեն մենագրությունը, որը, կարծում ենք, իր ուրույն տեղը կգրադեցնի միջազգային երաժշտագիտական ուսումնասիրությունների որմնախորշում և կնպաստի հայ կատարողական արվեստի ձեռքբերումների հանրահռչակմանը:

2019 թվականին լրացան ՀՀ Ազգային հերոս, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ Պետական մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, պրոֆեսոր, դիրիժոր

¹⁵ «Հովհաննես Չեքիջյան... Մեկն այն անհատներից, որոնց անվանում են հրաշալի և տարողունակ մի բառով՝ Վարպետ: Պրոֆեսիոնալ վարպետություն՝ իր հերթին, բայց Վարպետը ֆունդամենտալ հասկացություն է, որն ընդգրկում է և՛ վարպետի աշխատանքի ծավալը, և՛ այն արձագանքը, որ ստանում է նրա գործունեությունը: Վարպետ գեղարվեստական երևույթը առանց իրեն շրջապատող հսկայական մթնոլորտի չի լինում: Բոլորը նրան ճանաչում են, բոլորը հարգում են, նա ունի հետևորդներ-աշակերտներ և երկրպագուներ, նա որոշակի պահին դառնում է իր ազգի մշակույթի խորհրդանիշը, և այդ պատճառով Վարպետը մշտապես պետք է լինի աշխատանքի, շարժման մեջ, նա պետք է լավատես լինի, նրան վայել չէ կանգ առնել և հանգստանալ: Վարպետը դատապարտված է հաջողության» (թարգմանությունը՝ Լիլիթ Արտեմյանի):

Հովհաննես Չեքիջյանի ծննդյան 90-ամյա և կատարողական գործունեության 75-ամյա հոբելյանները: Իր կատարողական և կազմակերպական գործունեությամբ նա սահմանել է կատարելության և պրոֆեսիոնալիզմի բարձր նշան, իսկ իր գործունեությամբ էապես նպաստել խմբերգային և դիրիժորական կատարողական արվեստի զարգացմանը:

Հոբելյանական միջոցառումների շրջանակներում գումարված հերթական՝ երկրորդ գիտական նստաշրջանը փաստում է, որ Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի՝ առ այսօր ծավալվող բազմաբեղուն, արվեստանվեր և հայրենանվեր գործունեությունը շարունակում է մնալ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Սրտանց շնորհավորում ենք Մաեստրոյին, ցանկանալով երկար տարիների քաջառողջ կյանք և ստեղծագործական նորանոր բարձունքներ...

*Աննա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի
Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի դոկտորանտ,
արվեստագիտության թեկնածու, դոցենտ*

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐԸ ԼԵՀԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ համերգներով հանդես է եկել աշխարհի բազմաթիվ երկրներում:

Մեր զեկուցման նպատակն է ներկայացնել Մաեստրոյի արտասահմանյան համերգային շրջագայությունների լեհական էջը:

1980 թվականի ապրիլի 18-ից 27-ը տեղի ունեցան «Սովետական մշակույթի օրերը» Լեհաստանում: Լեհաստանի տարբեր քաղաքներն ընդգրկող «Մշակույթի օրերի» հարուստ ծրագրի նպատակն էր լեհերին ծանոթացնել սովետական արվեստի տարբեր բնագավառների նվաճումներին:

Սովետական մշակույթի օրերի շրջանակում Լեհաստանում տեղի ունեցան Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հյուրախաղերը:

Խորհրդանշական էր, որ Լեհաստանում Խորհրդային Միության մշակույթի օրերը ապրիլի 18-ին մեկնարկեցին մայրաքաղաքում Վարշավայի «Մեծ թատրոնի» բեմում Մոսկվայի «Մեծ թատրոնը» ներկայացրեց Արամ Խաչատրյանի «Սպարտակ» բալետը:

Լեհաստանի հարավ-արևմուտքում՝ Օդրա գետի ափին գտնվող Վրոցլավ քաղաքում, Խորհրդային Միության «Մշակույթի օրերի» բացման պատիվը տրվեց Հայաստանի պետական ակա-

դեմիական երգչախմբին՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ¹:

«Երեկոյան Վրոցլավ» թերթի ապրիլի 18-20-ի համարում տպագրվում է հետևյալ տեղեկատվությունը. «Այսօր ողջ երկրում սկսվում են «Սովետական մշակույթի օրերը», որը կտևի մինչև ապրիլի 27-ը: Այդ կապակցությամբ կազմակերպված միջոցառումների ծրագիրը սովորականից ավելի հարուստ է: Այն ընդգրկում է գեղարվեստական հարուստ միջոցառումներ, հանդիպումներ հետաքրքիր մարդկանց հետ, ցուցահանդեսներ, զեկուցումներ և այլն:

«Սովետական մշակույթի օրերը» այսօր Վրոցլավում հանդիսավոր կբացի Պետական ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ համերգը, որին կմասնակցի ՀԽՍՀ պետական ակադեմիական երգչախումբը՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Այդ համերգի մեներգիչներն են Նինա Իսակովան (մեցցո-սոպրանո), հայ ճանաչված երգչուհի Էլլադա Չախոյանը, ինչպես նաև Միհրան Երկաթը (բաս): ՀԽՍՀ ակադեմիական երգչախմբին և վրոցլավյան ֆիլհարմոնիայի նվագախմբին կլսենք նաև վաղը կայանալիք համերգում, որը կվարի Ստեֆան Մարչիկը: Համերգին կմասնակցեն այնպիսի մենակատարներ, ինչպիսիք են Ստեֆանյա Վոյտովիչը, Ուրշուլա Միտրեզան և Եժի Մեխլինսկին»²:

Այս հակիրճ հաղորդագրությանը հաջորդում է հարցազրույցը Հովհաննես Չեքիջյանի հետ, որը տեղի էր ունեցել առաջին համերգից հետո: Հայ դիրիժորին լեհական մամուլը ներկայացնում է հետևյալ կերպ. «Սովետական մշակույթի օրերին» նվիրված հանդիսավոր համերգում, որը կայացավ Վրոցլավի ֆիլհարմոնիայի դահլիճում, այսօր երեկոյան հանդես եկավ ՀԽՍՀ պետական ակադեմիական հարյուր հոգուց բաղկացած երգչախումբը՝ Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ: Հռչակավոր երաժշտին և կոմպոզիտորին, Սովետական Միության լավագույն երգչախմբերից մեկի

¹ St'u Dzis inauguracja Dni Kultury Radzieckiej w Polsce, "Gazeta Robotnicza", 18-20.IV. 1980:

² Rozmawiamy z Ohannesem Czekidzjanem. Interesuje mnie dobra muzyka... (Wieczory s Polihymniq) "Wieczdr Wroslawia", 18, 19, 20 kwietnia, 1980.

դիրիժորին խնդրեցինք մի կարճ հարցազրույց՝ «Երեկոյան Վրոցլավ» թերթի ընթերցողների համար»³:

Հարցազրույցի ընթացքում Չեքիջյանն ընդհանուր գծերով ներկայացնում է հայկական կապելլայի ստեղծման պատմությունն ու կիսվում Վրոցլավի սիմֆոնիկ նվագախմբի մասին իր տպավորություններով՝ անդրադառնալով նաև իր ու նվագախմբի համագործակցությանը Երևանում:

Բանն այն է, որ դրանից օրեր առաջ Հովհաննես Չեքիջյանի հրավերով Հայաստանում տեղի էին ունեցել Վրոցլավի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի հյուրախաղերը: 1980թ. ապրիլի 5-ին Ա.Խաչատրյանի մեծ համերգասրահում համերգի ընթացքում Վրոցլավի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի և Կապելլայի կատարմամբ՝ Մաեստրո Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ, առաջին բաժնում հնչել էր Վիվալդիի «Գլորիան», իսկ երկրորդ բաժնում՝ Ա.Հարությունյանի Կանտատը հայրենիքի մասին և Շուբերտի Դո մաժոր կանտատը: Մենակատարներն էին ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Միհրան Երկաթը, Հայաստանի վաստակավոր արտիստ Օլգա Գաբայանը, միջազգային մրցույթների դափնեկիր Էլլադա Չախոյանը և կապելլայի մենակատարներ Նորա Մերգելյանն ու Ժաննա Դավթյանը:

«Երևանի երաժշտասեր հասարակայնության մեջ դեռ թարմ էին այն տպավորությունները, որ ստացան Վրոցլավի սիմֆոնիկ նվագախմբի և Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի համատեղ ելույթներից: Եվ ահա կոլեկտիվների ստեղծագործական երկրորդ հանդիպումը կայացավ լեհական հողում, ուր տեղի էին ունենում սովետական մշակույթի օրերը»⁴:

Համերգային ծրագրում հնչեցին Վիվալդիի «Գլորիան», Ալ.Հարությունյանի «Կանտատը հայրենիքի մասին», Շուբերտի Դո մաժոր կանտատը՝ «Միրիամի հաղթական երգը»: «Համերգը, որ

³ Նույն տեղում:

⁴ **Վարդանյան Ռ.**, Ծափահարում է Լեհաստանը (Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հյուրախաղերը), «Սովետական Հայաստան», 20 մայիսի, 1980:

վարում էր Հովհաննես Չեքիջյանը, մեներգիչների (ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Միհրան Երկաթ, ՌՍՖՍՀ ժողովրդական արտիստ Նինա Իսակովա, երգչուհիներ՝ Է.Չախոյան, Ն.Մերգելյան), երգչախմբի և նվագախմբի գերազանց փոխըմբռնման մի կատարյալ օրինակ հանդիսացավ»⁵:

Համերգին արձագանքեց «Լեհական խոսք» թերթը. «Բուռն ծափահարությունների ու բրավոների արժանացած երգչախումբը բիս-երով ավարտեց հայկական ա կապելլա ստեղծագործություններից մեկով, ինչը ունկնդրին հնարավորություն տվեց լիարժեք ծանոթանալու վերոհիշյալ երգչախմբի վարպետությանը»⁶:

«Լեհաստան մեկնելուց առաջ մենք ընդունել էինք Վրոցլավի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբին, - «Հայրենիքի ծայն» շաբաթաթերթին տված հարցազրույցի ժամանակ լեհաստանյան համերգային շրջագայությունից իր տպավորությունները կամփոփի Հ.Չեքիջյանը, - նրա հետ միասին հանդես գալով Հայհամերգի Ա.Խաչատրյանի անվան համերգային մեծ դահլիճում: Ու եթե երևանյան համերգի ժամանակ զգացինք, որ գործ ունենք երաժշտական նուրբ կարողություններով օժտված երաժիշտ-կատարողների հետ, ապա այնտեղ՝ Վրոցլավում, հենց առաջին համերգի ժամանակ զգացինք, որ երաժիշտներից ոչ պակաս նուրբ օժտվածություն ունեն արվեստասերները: Մեր այցը Լեհական ժողովրդական Հանրապետություն սովորական համերգային շրջագայություն չէր: Սովետական Միության արվեստի օրերի առթիվ մենք մեր արվեստն էինք տարել խիստ երաժշտասեր, զգայուն հոգու տեր լեհ ժողովրդին: Արտահայտիչ մի խոսք կա՝ բեմը և դահլիճը փնտրում են իրար, զննում են իրար, գտնում են իրար: Ճիշտ է, վիճակահանությամբ մեզ բաժին էին ընկել երկրի ոչ ամենախոշոր քաղաքները, բնականաբար և համերգասրահները, բայց ամենուր զգում էինք, որ գործ ունենք հենց դահլիճից մեզ քննող արվեստասեր հասարակայնության հետ և շուտ էինք մերձենում: Շրջագա-

⁵ Նույն տեղում:

⁶ Dni Kultury Radzieckiej, "Słowo Polskie", 21.IV.1980.

յության 14 օրերի ընթացքում մենք հանդես եկանք վեց համերգով: Եղանք Վրոցլավում, Վալբժիխում, Կոստյանում, Լեշնոյում, Բիտգոշում, Թորանում: Շտապեմ ասել, որ մեր ելույթների թողած տպավորությունն այնքան մեծ էր, որ մեզ առաջարկեցին մասնակցել 1981-ի հոկտեմբերին կայանալիք խմբերգային երաժշտության փառատոնին»⁷:

«Երգչախմբի հետ էին մենակատարներ, Սովետական Միության ժողովրդական արտիստ Միհրան Երկաթը, ՌՍՖՍՀ ժողովրդական արտիստուհի Նինա Իսակովան, Գլինկայի անվան համաիդիոթենական մրցույթի դափնեկիր Էլլադա Չախոյանը, որոնք առանձին շուք էին հաղորդում մեր համերգներին: Կատարվեցին բազմաթիվ հեղինակների բազմաժանր շատ գործեր: Հիշենք Ալ.Հարությունյանի «Հայրենիքը», Ա.Բաբաջանյանի «Ազգ փառապանծը», Մակար Եկմալյանի «Սուրբ, սուրբ», «Ով, հայոց աշխարհ» և «Լռեց, ամպերը եկան», Կոմիտասի «Հովն անուշ», «Գութանի երգ», «Ձավարածեծ», «Կալի երգ» երկերը, Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի նախերգանքը և Անուշի խելագարության տեսարանը: Ջերմությամբ ընդունվեց իմ հեղինակած միջնադարյան տաղի մեղեդին: Դուք գիտեք, որ մեր երգացանկում տեղ են գտել ինչպես ռուսական, այնպես էլ արևմտաեվրոպական հեղինակների բազմաթիվ ստեղծագործություններ: Կատարվեցին Գերշվինի, Դվորժակի, Հենդելի, Բախի, Վերդիի, Գունդի, Վիվալդիի և այլ հեղինակների ստեղծագործություններից»⁸:

Երկրորդ համերգին՝ ապրիլի 19-ին, Վրոցլավի սիմֆոնիկ նվագախմբի և հայկական կապելլայի կատարմամբ հնչեց լեհ խոշորագույն կոմպոզիտորներից մեկի՝ Ժամանակակից լեհական կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կարոլ Շիմանովսկու (1882-1937) «Stabat mater»-ը (1926): «Լեհ խստապահանջ արվեստասերը համոզվեց, որ ունկնդրում է մի երգչախմբի, որը վաղուց հաղթա-

⁷ Կապելլան տարածում է թևերը, «Հայրենիքի ծայն» շաբաթաթերթ, 21 մայիսի, 1980:

⁸ Նույն տեղում:

հարել է պրոֆեսիոնալիզմի դժվարին բարձունքները: Երգչախմբի և նվագախմբի բարձրարվեստ կատարումը, մենակատարների՝ Ստեֆանյա Վոյտովիչի (սոպրանո) համոզիչ մենաբանումը, Ուրշուլա Միտրեզայի խորը զգացմունքայնությունը, Եժի Մեխլինսկու (բարիտոն) կատարման դրամատիզմը երկի մատուցումը դարձրին ամբողջական, մեծապես համակող»⁹:

Կարոլ Շիմանովսկու «Stabat mater»-ի՝ հայկական կապելլայի վիրտուոզ վարպետությամբ կատարմանն անդրադարձավ Ռիշարդ Բուկովսկին: «Լեհաստանում խորհրդային մշակույթի օրերի շրջանակներում,- Վրոցլավի «Երեկոյան Վրոցլավ» թերթի ապրիլի 23-ի համարում գրում է նա,- Կ.Շիմանովսկու «Stabat mater» օրատորիայի կատարմամբ ելույթ ունեցավ Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը, որը ցուցադրեց տեխնիկական և գեղարվեստական բարձր մակարդակ: Եթե նկատի ունենանք, որ Կարոլ Շիմանովսկու երաժշտությունը Հայաստանի համար իսկական մի էկզոտիկա է, ապա երգչախմբի ձեռք բերած հաջողությունները առավել քան զարմանք պետք է հարուցեն»¹⁰:

Եվ դա այն դեպքում, որ «հայկական երգչախմբի առջև ծառացած ամենամեծ դժվարությունն այն էր, որ մինչև Լեհաստան գալը Շիմանովսկին բոլորովին անծանոթ էր նրանց: Այդ բանն իրեն հատկապես զգալ տվեց փորձերի, բայց ոչ արդեն համերգի ժամանակ: Մի բան, որ վկայում է այդ տաղանդավոր երգչախմբի հաղթանակի մասին: Այդ երգչախումբն, անշուշտ, հիասքանչ է.....»¹¹:

Հայկական կապելլայի այս ելույթը դարձավ երևույթ լեհական երաժշտության պատմության մեջ: «Եթե որևէ մեկը Շիմանովսկու երաժշտության համաշխարհային ընկալման մասին երբևիցե երաժշտագիտական աշխատություն գրի,- նկատեց Եվա Կոֆինը,-

⁹ Վարդանյան Ռ., Ծափահարում է Լեհաստանը (Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հյուրախաղերը), «Սովետական Հայաստան», 20 մայիսի, 1980:

¹⁰ Bukowski R., Ciekawe interpretacje, "Wieczor Wroslawia", 23 kwietnia, 1980.

¹¹ Kofin E., W dwa tygodnie cztery pory roku (Wroclawska Filharmonia na Zakaukaziu (2), "Wieczor Wroslawia", 2 maja, 1980.

ապա այդ մենագրության մեջ անպատճառ պետք է հիշատակի վրոցլավյան ֆիլիարմոնիայի սիմֆոնիկ նվագախմբի և Հովհաննես Չեքիջյանի ղեկավարած ՀԽՍՀ երգչախմբի մասին»¹²:

Համերգից հետո լեհ երգչուհի, սոպրանո Ստեֆանյա Վոյտովիչը խոստովանեց. «Մենք՝ մեներգիչներս, ուղղակի անսահման ներշնչվում ենք, երբ մեր թիկունքում զգում ենք այնպիսի մի կոլեկտիվի շունչը, ինչպիսին հայկական երգչախումբն է»¹³:

Բացառիկ հաջողությամբ անցան երգչախմբի մենահամերգները, «... որոնք տեղի ունեցան մի շարք այլ քաղաքներում (Բիտգոշ, Տորուն, Կոշտյան, Լեշնո, Վալբժիխ): Այստեղ արդեն ունկնդիրը ծանոթացավ երգչախմբի կատարողական ողջ գինանոցին և համոզվեց, որ նա համոզիչ ու հմուտ է մեկնաբանում տարբեր ժողովուրդների և դարաշրջանների կոմպոզիտորների ստեղծագործությունները: Ծրագրի առանցքը կազմող Մակար Եկմալյանի, Կոմիտասի, Առնո Բաբաջանյանի երկերից բացի, կատարվեցին Չայկովսկու, Նովիկովի, Դվորժակի, Վերդիի, Ռուսինիի, Հենդելի, Բախի, Գունյի ստեղծագործություններից, ինչպես նաև նեգրական սպիրիչուելներ (մենակատար՝ Ն.Հակոբյան): Համերգին վարպետորեն նվագակցում էր կոնցերտմայստեր Սեդրակ Երկանյանը»¹⁴:

Այսպես՝ Հայկական կապելլայի ու Մանստրոյի՝ Լեշնոյում կայացած երկու ելույթները գնահատվեցին որպես «Լեշնիցիների համար այս տարվա մշակութային ամենամեծ իրադարձություն»¹⁵: Իսկ հոդվածն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Երգչախմբի հոյակապ նկարագիրը տվել է համաշխարհային ճանաչված կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Արամ Խաչատրյանը: «Այդ հիասքանչ երգչախումբն օժտված է ամենաբարձր կուլտուրայով: Երգչախումբը ղեկավարում է այդ մեծ երաժիշտն ու կոմպոզիտորը:

¹² Նույն տեղում:

¹³ **Վարդանյան Ռ.**, Ծափահարում է Լեհաստանը (Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հյուրախաղերը), «Սովետական Հայաստան», 20 մայիսի, 1980:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Chor z Armenii w Koscianie I Lesznie, "Gazeta Zachodnia", 22.V.1980

Այն ամենում, ինչ նա անում է, զգացվում է նորարարություն... Հայաստանի պետական երգչախմբին կարելի է հյուրախաղերի ուղարկել ցանկացած երկիր: Այն բարձր կպահի սովետական մշակույթի դրոշմը»¹⁶:

Հայկական կապելլան զարմացրեց լեհ երաժշտասերներին: Եվա Կոֆինը նկատեց. «Երգչախումբը ողջ ծրագիրը երգում էր անգիր և այն էլ երեք՝ հայերեն, գերմաներեն և լատիներեն լեզուներով: Ընդհանուր առմամբ երգչախումբը երգում է 24 տարբեր լեզուներով, մինչդեռ համարձակություն չունենալով ելույթ ունենալ լեհերեն լեզվով, Շիմանովսկու ստեղծագործությունը կատարեց լատիներենով»¹⁷:

Լեհաստանից Հայաստանի պետական ակադեմիական երգչախումբը վերադարձավ՝ «գեղագիտական բազում հաճելի պահեր պարգևած լեհ ունկնդիրներին, իր հետ բերելով նրա ծափերն ու բարի ժպիտը»¹⁸:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել հետևյալը.

1. Մասնատրո Հովհաննես Չեքիջյանը լեհ ունկնդրին ներկայացրեց հայկական երգչախմբային կատարողական արվեստի բարձրագույն մակարդակը՝ հանդես գալով Վիվալդիի և Շուբերտի, ինչպես նաև Շիմանովսկու վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունների կատարմամբ: Ցուցաբերվեց հայկական կապելլայի և նրա կատարողական լայն դիապազոնը, որն ընդգրկում է տարբեր դարաշրջանների և տարբեր ժողովուրդների խմբերգային երաժշտությունը:
2. Ներկայացվեց հայ երաժշտությունը, ինչպես դասականների՝ Մակար Եկմալյանի, Կոմիտասի և Արմեն Տիգրանյանի հոգևոր ու աշխարհիկ խմբերգերը, այնպես էլ հայ

¹⁶ Chor z Armenii w Koszanie I Lesznie, "Gazeta Zachodnia", 22.V.1980

¹⁷ Kofin E., W dwa tygodnie cztery pory roku (Wroclawska Filharmonia na Zakaukaziu (2), "Wieczor Wroslawia", 2 maja, 1980.

¹⁸ Վարդանյան Ռ., Ծափահարում է Լեհաստանը (Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի հյուրախաղերը), «Սովետական Հայաստան», 20 մայիսի, 1980:

Ժամանակակից կոմպոզիտորների՝ Առնո Բաբաջանյանի և Ալեքսանդր Հարությունյանի ստեղծագործությունները:

3. Համերգները, բնականաբար, նպաստեցին հայ-լեհական երաժշտական կապերի ամրապնդմանը:
4. Այդ օրերին լեհական մամուլը ողողվեց հայկական կապելլայի և Մաեստրոյի համերգներին նվիրված տպավորություններով ու ռեցենզիաներով, ինչպես նաև Հ.Չեքիջյանի հարցազրույցներով:

Ստորև ներկայացնում ենք Հ.Չեքիջյանի և Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի լեհական հյուրախաղերի վերաբերյալ հայկական ու լեհական մամուլի արձագանքները.

1. Վարդանյան Ռ., Ծափահարում է Լեհաստանը, «Սովետական Հայաստան», 20 մայիսի, 1980
2. Կապելլան տարածում է թևերը, «Հայրենիքի ձայն», 21 մայիսի, 1980
3. Dzis inauguracja Dni Kultury Radzieckiej w Polsce, “Gazeta Robotnicza”, 18-20.IV.1980
4. Rozmawiamy z Ohannesem Czekidzjanem. Interesuje mnie dobra muzyka... (Wieczory s Polihymniq), “Wieczdr Wroslawia”, 18, 19, 20 kwietnia, 1980
5. Wieczory s Polihymniq, “Wieczdr Wroslawia”, 18, 19, 20 kwietnia, 1980
6. Frackiewicz Z., Goscie z Erewania, “Stowo Polskie”, 18-20.IV.1980
7. Filharmonia w Dniach Kultury ZSRR, “Słowo Polskie”, 18-20.IV.1980
8. Kofin E., Gdy wykonawcy wchodzą do historii, Wroclawska Filharmonia na Zakaukaziu (1), “Wieczor Wroslawia”, 21 kwietnia, 1980
9. Lubitj pracowac ludzmi wrażliwymi (Rozmowa z Iolistkq opery w Erewaniu Ellada Czachojan), “Gazeta Robotnicza”, 21 kwietnia, 1980
10. Dni Kultury Radzieckiej, “Słowo Polskie”, 21.IV.1980

11. Chor z Armenii w Koscianie I Lesznie, "Gazeta Zachodnia", 22.IV.1980
12. Bukowski R., Ciekawe interpretacje, "Wieczor Wroslawia", 23 kwietnia, 1980
13. Mencil J., Spiewacy z Erewania, "Gazeta Robotnicza", 28 kwietnia, 1980
14. Kofin E., W dwa tygodnie cztery pory roku, (Wroclawska Filharmonia na Zakaukaziu (2), "Wieczor Wroslawia", 2 maja, 1980
15. Kofin E., Filharmonia wroslawska na Zakaukaziu, "Ruch Muzyczny", 15 czerwca, 1980



*Սարգիս Արտավազդի ԲԱԼԲԱԲՅԱՆ
Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ղեկավար,
արվեստագիտության թեկնածու*

**ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ. ՄԱԵՍՏՐՈ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՉԵՔԻՋՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ
ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ**

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն ստեղծվել է 2005թ. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մի խումբ երաժիշտների նախաձեռնությամբ: Նվագախմբի կազմում ընդգրկված էին կոնսերվատորիայի ուսանողները: Անցած 14 տարիների ընթացքում նվագախումբը Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ ելույթ է ունեցել բազմաթիվ երկրներում՝ մշտապես բարձր պահելով նվագախմբային հայ կատարողական արվեստը:

Նշեմ, որ ստեղծման առաջին իսկ օրերից նվագախումբը սերտորեն համագործակցում է Մաեստրո Հովհաննես Չեքիջյանի և Նրա ղեկավարած Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի հետ: Հատկանշական է, որ նորաստեղծ նվագախմբի երրորդ համերգը տեղի ունեցավ երգչախմբի ընկերակցությամբ: Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ նվագախումբը կարողացավ պատվով հաղթահարել այդ տարի նվագախմբին վստահված հայրենանվեր գործը. 2007թ. ապրիլի 24-ին ազգային ակադեմիական երգչախմբի հետ համատեղ հանդես եկավ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ ոգեկոչելով Հայոց ցեղասպանության 92-րդ տարելիցը:

Այսօրվա պես հիշում եմ Մաեստրո Չեքիջյանի անխոնջ և բազմաբովանդակ փորձերը Տերյան ստուդիայի փորձասենյակում: Նրա անցկացրած փորձերն այնքան արդյունավետ էին, որ Մոցարտի «Ռեքվիեմի» կատարման բոլոր դժվարությունները նորաստեղծ նվագախմբի համար լիովին հաղթահարելի դարձան: Ընդամենը մի քանի ամիս գործունեություն ծավալած նվագախումբը փորձերի առաջին իսկ րոպեներից կատարում էր Մաեստրոյի բոլոր նկա-

տառումներն ու խորհուրդները: Այստեղ, ըստ իս, ազդեցություն ունեին ոչ միայն Մաեստրոյի՝ հիսունից ավելի նվագախմբերի հետ աշխատանքային փորձը, այլ նաև, որ ամենակարևորն է, Մաեստրոյի՝ երիտասարդների հետ համագործակցելու մոտեցումը: Արդյունքում փորձերն այնքան հետաքրքիր էին անցնում, որ շատ դժվարությամբ էիր հեռանում փորձասենյակից. կարծես անընդհատ ցանկանում էիր լսել Մաեստրոյի խորհուրդները և պատկերավոր համեմատությունները:

2007թ. ապրիլի 24, ժ. 19.00
Այլ. Սպենդիարյանի անվան ազգային օպերայի և բալետի թատրոն

**Երիտասարդական
ՆՎԱԳԱԽՈՒՄԲ**

Գեղարվեստական ղեկավար ՅՈՒՐԻ ՂԱՎԹՅԱՆ
Գլխավոր դիրիժոր ՍԵՐԳԵՅ ՍՄԲԱՏՅԱՆ

**Հայաստանի պետական
ակադեմիական ԵՐԳՉԱԽՈՒՄԲ**

Գեղարվեստական ղեկավար ՅՈՒՐԻ ՂԱՎԹՅԱՆ
ԴԻՐԻՋՈՐ ՍԵՐԳԵՅ ՍՄԲԱՏՅԱՆ

Մենակատարներ
ԱՐԾՎԻԿ ԴԵՄՈՒՐՉՅԱՆ սոպրանո
ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ մեցո-սոպրանո
ՍՈՒՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ տենոր
ՎԱԶԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ բաս

ոչ ոք, ոչինչ չի մոռացվել

Տեղեկությունների համար զանգահարել 56 27 50

Նվագախմբի և երգչախմբի հաջորդ «հանդիպումը» 2008թ. դեկտեմբերի 6-ին էր. Վլադիմիր Սպիվակովի ղեկավարությամբ Սպիտակի երկրաշարժի տարելիցին նվիրված համերգաշարով Հայաստան էր ժամանել «Մոսկվայի վիրտուոզներ» կամերային նվագախումբը: Վերջիններիս միացել էին նաև երաժիշտներ սիմֆոնիկ նվագախմբից: Եվ երբ Վլադիմիր Սպիվակովին հարցրել էին, թե

քանի փորձ է ցանկանում անցկացնել երգչախմբի հետ, նա պատասխանել էր. «Հայաստանի կապելլայի դեպքում՝ մեկ փորձ»:

Նվագախմբի գործունեության մեջ մշտապես կարևորում ենք մեր մեծերի հորեղանների նշումը և մշտապես հանդես գալիս հորեղանական երեկոներին ակտիվ մասնակցությամբ: 2009 թվականի հունվարի 30-ին Մաեստրո Չեքիջյանի 80-ամյա հորեղանին նվիրված երեկոյի բացումը վստահված էր սիմֆոնիկ նվագախմբին: Մեծ հաճույքով և բարձր պատասխանատվությամբ երգչախմբի ընկերակցությամբ Հենդելի «Հալլելույա»-ով բացեցինք հանդիսավոր երեկոն:

Ընդհանուր առմամբ, ի տարբերություն նվագախմբերի, մեծակտավ ստեղծագործությունների կատարմամբ հանդես գալու երգչախմբերի հնարավորություններն ամբողջ աշխարհում սահմանափակ են: Նրանք կարծես սպասում են նվագախմբերից առաջարկների՝ հանդես գալու այս կամ այն մեծակտավ երկի կատարմամբ, քանի որ հիմնականում նվագախմբերի գեղարվեստական ղեկավարներն են որոշում երգչախմբերի հետ համերգների քանակը և ժամկետները: Միջազգային փառատոները նախ ընտրում են փառատոներին մասնակցող նվագախմբերին, հետո միայն մտածում երգչախմբեր ներգրավելու հնարավորության մասին: Սակայն սա Եվրոպայում: Հայաստանում ճիշտ հակառակն է: Մաեստրոյի և երգչախմբի բեղուն գործունեության շնորհիվ հենց նրանք են նախաձեռնում համերգային երեկոներ՝ դրանցում ընդգրկելով նվագախմբերի և մենակատարների ոչ միայն Հայաստանից, այլ նաև արտերկրից: Արդյունքում հերթական տպավորիչ հանդիպումն է երգչախմբի և նրա ղեկավարի հետ: 2010թ. մարտի 17-ին Ա.Խաչատրյան համերգասրահում կայացավ համերգային երեկո, որի առաջին բաժնում երգչախումբը ներկայացրեց բազմաժանր a cappella ծրագիր՝ սկսած Կոմիտասից մինչև Գերշվին: Իսկ երկրորդ բաժնում արդեն Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի ընկերակցությամբ հնչեցին Բեթհովենի «Ֆանտազիան»՝ դաշնամուրի, նվագախմբի և երգչախմբի համար և Շուբերտի «Մարիամի հաղթական երգ» կանտատը (մենակատար՝ Մագդա Մկրտչյան): Ի

դեպ, մասետրոն Բերիովենի «Ֆանտազիայի» դաշնամուրի մենանվագը վստահեց նվագախմբի երիտասարդ դաշնակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Լիլիթ Զաքարյանին: Համերգն անցավ լեփ-լեցուն դահլիճում: Ծափահարությունների տարափի տակ Մասետրոն «ստիպված էր» հինգ անգամ բեմ դուրս գալ:

Ճրագիր / Program
Ա բաժին / Part A

Կարա-Մուրզա՝ Լեփո, Լե, Լե
Kara-Mourza: Lephoh, le, le
Եկմայան՝ Սիւս ծագեց կարմիր արև
Yekmalian: "And the red sun raised"
Սահարուն՝ Տոսն մրմուռ
Saharouni: "Janes mrmour"
Գերշին՝ "Oh, I can't sit down!"
(հատված «Պորգի և Բես» օպերայից)
Gershwin: "Oh, I can't sit down!"
(excerpt from the opera "Porgy and Bess")
Սափրիչունել՝ "He's got the whole world in his hands"
(մշ. Սարկ Կայե)
Spirituel: "He's got the whole world in his hands"
(arr. by Mark Haye)
Սափրիչունել՝ "Deep River" (մշ. Հ.Թ. Բորլեյ)
Spirituel: "Deep River" (arr. By H.T. Burleigh)
Տերոն Դեվիս՝ "The Wonders of His Hands"
Geron Davis: "The Wonders of His Hands"
Կոմիտաս՝ Սուրբ, Սուրբ (հատված պատարագից)
Komitas: Sanctus, Sanctus (excerpt from Liturgy)
Կոմիտաս՝ Գութանեղ
Komitas: Plough song
Կոմիտաս՝ Կալի երգ (մենակատար՝ Սարգիս Աղամալյան)
Komitas: Work song (soloist: Sargis Aghamalian)

Կոմիտաս՝ Լոնո գութանեղ
Komitas: Lori Plough Song
Սենակատարներ / Soloists
Կարինե Ավետիսյան / Karine Avetisyan
Լիլիթ Ալեքսանյան / Lilit Alexanian
Սարգիս Աղամալյան / Sargis Aghamalian
Բորիս Հակոբյան / Boris Hakobian

Բ բաժին / Part B

Բեթովեն՝ Ֆանտազիա դաշնամուրի, երգչախմբի և նվագախմբի համար
Beethoven: Fantasy for piano, choir and orchestra
Սենակատար՝ Լիլիթ Զաքարյան
Soloist: Lilit Zakarian

Շուբերտ՝ Կանտատ C-dur «Միրյամի հաղթական երգը»
Schubert: Cantata C-dur "Mirjam's Siegesgesang"
Allegro giusto – Allegretto – Allegro agitato
Սենակատար՝ Սազդա Մկրտչյան
Soloist: Magda Mkrtchian

Դիրիժոր
Հովհաննես Չեքիճյան
Conductor
Ohannes Tchekidjian

Վաստակավոր կուլեկտիվ
Հայաստանի պետական
ակադեմիական երգչախումբ
Գերազմատական դերակատար և գլխավոր դիրիժոր
Հովհաննես Չեքիճյան
Armenian State Academic Choir
Artistic Director & Principal Conductor
Ohannes Tchekidjian

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԵՐԳԱՐԱՐ
ARAM KHACHATURIAN CONCERT HALL

17 Մարտի 2010
March 2010

Հայաստանի պետական
երիտասարդական նվագախումբ
Գերազմատական դերակատար և գլխավոր դիրիժոր
Սերգեյ Սմբատյան
Youth State Orchestra of Armenia
Artistic Director & Principal Conductor
Sergey Smbatyan

Սենակատարներ
Լիլիթ Զաքարյան, դաշնամուր
Սազդա Մկրտչյան, սուպրանո
Կարինե Ավետիսյան, սոպրանո
Լիլիթ Ալեքսանյան, մեծ սոպրանո
Սարգիս Աղամալյան, տենոր
Բորիս Հակոբյան, բաս

Դիրիժոր
Հովհաննես Չեքիճյան
Conductor
Ohannes Tchekidjian

Soloists
Lilit Zakarian, piano
Magda Mkrtchian, soprano
Karine Avetisyan, soprano
Lilit Alexanian, mezzo soprano
Sargis Aghamalian, tenor
Boris Hakobian, bass

Կոնցերտմայստեր՝ Արամ Թուրաբյան
Piano concertmaster: Aram Turabian

Armavia Արմավիա

Հայաստանի Հանրապետություն
ՀՀ Աշխարհային Նվագախմբային Կենտրոն
Ministry of Culture of RA

Նվագախմբի հանդիպումները Հովհաննես Չեքիճյան դիրիժորի և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի հետ բազում են՝ 2011թ. նոյեմբերին «100 համերգ մինչև Հայոց

Ցեղասպանության 100-ամյակ» ծրագիր, «Վիվա-սելը մշակույթի բարեկամ» համերգ-երեկո և այլն:

Ցանկանում եմ առանձնացնել 2013թ. մայիսի 29-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կայացած համերգը, որը նվիրված էր Մեծ Բրիտանիայի և Ուելսի արքայազն Չարլզի՝ Հայաստան ժամանմանը: Բացի a cappella կատարումներից, սիմֆոնիկ նվագախումբը երգչախմբի հետ կատարեց Հենդելի «Հալլելույա»-ն և Կարլ Օրֆի «Կարմինա Բուրանայի» ֆինալը: Ակնհայտ էր արքայազն Չարլզի հիացմունքը, ով համերգից հետո ցանկություն հայտնեց անձամբ հանդիպել Մաեստրո Չեքիջյանին՝ ողջունելու և շնորհավորելու նրան այսպիսի կոլեկտիվ ունենալու համար:

Պետք է նշեմ, որ Հովհաննես Չեքիջյանը նվագախմբերի ուշադրությունը մշտապես կենտրոնացնում է Հայաստանում երկար ժամանակ չկատարված ստեղծագործությունների վրա՝ շեշտը դնելով հայ կոմպոզիտորների երկերի հնչեցմանը:

Վերջին տարիներին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կազմով մեկնած բազմաթիվ հյուրախաղերի ընթացքում հնարավորություն ունեցա թե՛ որպես նվագախմբի տնօրեն, գեղարվեստական մասի պատասխանատու և թե որպես երաժիշտ՝ անձամբ համագործակցել և համերգներով հանդես գալ Ֆրանսիայի, Գերմանիայի, Չեխիայի, Լիբանանի մեծ երգչախմբերի հետ: Մեզ համար այնքա՛ն խորթ էին այդ երգչախմբերի երգեցողությունը, տարբեր լեզուներով երգելիս բառերի արտաբերման, ինչպես նաև ինտոնացիոն և միաձույլ հնչողության խնդիրները և որ պակաս կարևոր չէ՝ կարգապահական հարցերը: Ակամա սկսում ես համեմատություններ անցկացնել մեր ակադեմիական երգչախմբի հետ: Մաեստրոյի բարձր պրոֆեսիոնալիզմը, անհատական մոտեցման մեթոդները, տարիների փորձը վաթսուն տարուց ավելի մեր ազգային երգչախմբի կատարողական որակը պահում է ամենաբարձր մակարդակի վրա: Արդյունքում երգչախումբը ցանկացած

¹ Մասնագիտությամբ կոնտրաբասահար եմ:

ստեղծագործություն կատարում է առանց նոտաների. ի դեպ, ըստ մեր ունեցած տեղեկությունների, այս առումով երգչախումբը միակն է տարածաշրջանում: Պետք է նշեմ, որ որպես ունկնդիր մենք սովոր ենք կատարյալ լռության մեջ վայելել Մոցարտի, Վերդիի, Բեռլիոզի «Ռեքվիեմը»՝ չմտածելով անգամ երաժշտական ընթացքը խաթարող նոտաների թերթումից առաջացող աղմուկի մասին, որին, ցավոք, ականատես եղա եվրոպական վերոնշյալ երկրներում երգչախմբերի համերգների ժամանակ, որն ինձ համար շա՛տ խորթ էր: Հիրավի, ինչպես նշում է Մաեստրոն. «Բեմ բարձրացողը նոտաներն իր սրտում և մտքում պետք է ունենա և ոչ թե ձեռքին»²: Սա, իհարկե, խոսում է ոչ միայն բարձր պրոֆեսիոնալիզմի, այլ նաև տարիների հսկայական աշխատանքի մասին:

Որպես նվագախմբի գեղարվեստական մասի պատասխանատու՝ ցանկանում եմ փաստել, որ Մաեստրոյի խիստ հսկողությամբ երգչախմբի գրադարանում պահվում են ոչ միայն երգչախմբային պարտիտուրներն ու ձայնաբաժինները, այլ նաև նվագախմբի նվագաբաժիններ, որը նույնպես վկայում է բարձր պրոֆեսիոնալ արժեքների, պահանջկոտության և խիստ կարգապահության մասին: Արդյունքում մենք շատ հաճախ օգտվում ենք այս գրադարանից, որտեղ խնամքով պահվում են հայ կոմպոզիտորների պարտիտուրների և նվագաբաժինների եզակի նմուշներ:

Նվագախմբի, Մաեստրոյի և երգչախմբի համագործակցության կարևոր իրադարձություններից էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնի պատրաստումն ու կատարումը Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 70-ամյակին նվիրված համերգային երեկոյի ընթացքում: Հիմնի խոսքերի հեղինակը Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն Կարո Վարդանյանն է, իսկ երաժշտությունը գրեց կոմպոզիտոր Արամ Սաթյանը: Հիմնի պատրաստումը և ներկայացումը գրեթե անհնար էին թվում, քանի

² Ասատրյան Ա., Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 38:

որ ընդամենը յոթ օրվա ընթացքում Արամ Սաթյանը պետք է հասցներ գործիքավորել (պատրաստեր պարտիտուրը), ապա տողերիս հեղինակը ապահովեր դրա համակարգչային շարվածքը, պարտիտուրի և նվագաբաժինների պատրաստումը, դրանք փոխանցեր նվագախմբի կատարմանը: Մաեստրոն մի քանի փորձում արդեն պատրաստել էր երգչախումբը և սպասում էր պարտիտուրին: Պարտիտուրն ու նվագաբաժինները պատրաստ եղան համերգից ընդամենը երկու օր առաջ: Հենց այդ երկու օրվա կարճ փորձերի ընթացքում Մաեստրո Հովհաննես Չեքիջյանը կարողացավ միանգամից համախմբել բոլորին՝ իրականություն դարձնելով ՀՀ ԳԱԱ հիմնի պրեմիերան, որն աննկարագրելի հմայք հաղորդեց տոնական համերգ-երեկոյին: Այդ օրը բոլորս հուզված էինք և հպարտ. չէ՞ որ մեր՝ երիտասարդներիս ու մեծն Մաեստրոյի համատեղ աշխատանքի արդյունքում ծնունդ է առնում մի ստեղծագործություն, որը մնայուն արժեք է դառնալու:



2014 թվականի դեկտեմբերի 4-ին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը Մաեստրոյի և երգչախմբի հետ նվագախմբի կողմից կազմակերպվող Արամ Խաչատրյանի անվան միջազգային երկրորդ փառատոնի փակման գալա համերգի ժամանակ ներկայացրեց Արամ Խաչատրյանի «Ձոն ցնծության» մեծակտավ

ստեղծագործությունը՝ մեցցո-սոպրանոյի, տավիղների անսամբլի, ջութակահարների անսամբլի, նվագախմբի և երգչախմբի համար:

2015թ. ապրիլին մեկ այլ համագործակցություն եղավ՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակի գլխավոր միջոցառումը՝ 24-04 համաշխարհային նվագախմբի և Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի մասնակցությամբ: Մաեստրոյի ղեկավարած «Սուրբ-Սուրբը» դարձավ այդ համերգի ամենախորհրդավոր հատվածը: Երաժշտության լեզվով Մաեստրոն ներկայացրեց մի ամբողջ ազգի պատմություն:



Իսկ տարեվերջին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը և երգչախումբը դեկտեմբերի 23-ին՝ արդեն ավանդական դարձած համերգին՝ Մաեստրոյի ծննդյան օրը, նրա ղեկավարությամբ հնչեցրեց Գաբրիել Ֆորեի «Ռեքվիեմը»:

Շարունակելով համագործակցությունը՝ 2017թ. նոյեմբերի 30-ին երգչախմբի արական կազմը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ իրականացրեց Դմիտրի Շոստակովիչի 13-րդ

սիմֆոնիայի՝ “Бабуи ար”-ի հայաստանյան պրեմիերան, իսկ 2019թ. մայիսի 21-ին Եվրոպայի օրվան նվիրված համերգում նվագախումբն ու երգչախումբը հնչեցրին Բեթհովենի 9-րդ սիմֆոնիան։ Նվագախմբի առաջարկով երգչախումբը հանդես եկավ նաև նվագախմբի կողմից կազմակերպվող Դաս-Ա կրթական ծրագրում, ինչը յուրահատուկ նվեր էր մեր դպրոցականներին։



Համագործակցությունները բազմաթիվ են և բազմակողմանի։ Առաջիկայում սպասվում են նոր գեղեցիկ համերգային ծրագրեր՝ Կարլ Ջենկինսի Սիմֆոնիկ Ադիեմուսը և Մահլերի Երկրորդ «Հարություն» սիմֆոնիան։

Հիրավի, այսօր հպարտ ենք, որ Մաեստրո Չեքիջյանի ժամանակակիցն ենք ու հնարավորություն ունենք լսելու կատարողական հմտությունների մասին խիստ արժեքավոր խորհուրդներ, ինչպես նաև համագործակցելու այնպիսի մի մարդկային տեսակի հետ, ում հետ շփվելիս երբեք չես զգում քո և մեծն Մաեստրոյի միջև սերունդների տարբերությունը։



Ցանկանում եմ նշել նաև երգչախմբի անդամների և Մաեստրոյի միջև ձևավորված մարդկային բարձր մակարդակի հարաբերությունների, փոխադարձ հարգանքի և Մաեստրոյի նկատմամբ ակնածանքի մասին, ինչն այս օրերին հաճախ չես հանդիպի մեր մշակութային դաշտում:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի և անձամբ Սերգեյ Սմբատյանի անունից Մաեստրոյին ցանկանում ենք անխոնջ եռանդ, քաջառողջություն և նորանոր հետաքրքիր համերգային ծրագրերով լեցուն համերգաշարեր, որոնք, անկասկած, կգարդարեն մեր երաժշտական կյանքը և անգնահատելի հետք կթողնեն հայ կատարողական արվեստի պատմության մեջ: Յուրաքանչյուր անգամ ներկա գտնվելով մեր ազգային երգչախմբի համերգներին՝ առաջին հերթին մեծ հպարտությամբ եմ լցվում, որ ունենք այսպիսի ազգային հարստություն, որը միանշանակ եզակի է ոչ միայն իր կուռ հնչողությամբ և նրբագեղ հնչերանգներով, այլ նաև ապշեցնող կարգապահությամբ և, միաժամանակ, նուրբ մեղեդայնությամբ:

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ
ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ**

ԽՍՀՄ (1978) և ՀԽՍՀ (1967) ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ (1975) և ՀԽՍՀ (1970) Պետական մրցանակների դափնեկիր, Հայաստանի ազգային հերոս (2017), ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր (2018), պրոֆեսոր, դիրիժոր Հովհաննես Չեքիջյանը (ծնվ. 1929) հայ երաժշտարվեստի տիտաններից է: Անգնահատելի է Մաեստրոյի բեղուն կատարողական գործունեությունը, որը բարձր մակարդակով, խմբերգային արվեստի լավագույն ավանդույթների և ակադեմիական սկզբունքների պահպանությամբ բեմ հանեց, հնչեցրեց ազգային երաժշտական գոհարները և համաշխարհային գլոբալ գործոցները՝ կրթելով, հուզելով հայ և օտարազգի հանդիսականի սրտերը: Միևնույն ժամանակ Մաեստրոյի անձնական հմայքը, տաղանդը, մարդկային հատկանիշները նույնպես ներշնչանքի աղբյուր են ծառայել իր հետ անձնական շփման առիթ ունեցող մարդկանց համար: Հայ կերպարվեստագետները բացառություն չեն կազմել: Մաեստրոյին իրենց ստեղծագործություններում հավերժացրին նկարիչներ Ռուդոլֆ Խաչատրյանը, Լիլիա Կարճիկյանը, Միքայել Հարությունյանը, Արամ Սարիբեկյանը, ռեժիսոր, ծաղրանկարիչ Վարդան Աճեմյանը, քանդակագործներ Լևոն Թոքմաջյանը, Էդուարդ Շախիկյանը և Ալիս Մելիքյանը: Մարտիրոս Սարյանը, Երվանդ Քոչարը, Գրիգոր Խանջյանը և Հակոբ Հակոբյանը թեև չեն հասցրել կերտել Չեքիջյանի կերպարը, սակայն իրենց բարձր գնահատանքն ու անկեղծ հիացմունքն արտահայտել են խոսքի միջոցով:

Եգիպտահայ անվանի արվեստագետ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ (1977), ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր

(1977) Հակոբ Հակոբյանի (1923-2013) համար «Չեքիջյանը հայերենի ու հայկականի մեծ դեմք է: Անհատականություն»¹:

2018թ. դեկտեմբերի 23-ին օպերային թատրոնում կայացավ Մաեստրո Չեքիջյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հոբելյանական երեկոն, որի ընթացքում Մաեստրոն կապելլայի կողմից ստացավ անակնկալ-նվեր՝ իր սեփական դիմանկարը, որը վրձնել էր ծագումով ուկրաինացի, 1979 թվականին Ռովենի Արվեստների ինստիտուտում մասնագիտացած գեղանկարչուհի Լիլիա Կարճիկյանը (ծնվ. 1963): Նկարչուհին մի շարք անհատական ցուցահանդեսներ է կազմակերպել Երևանում, Մոնրեալում, Լոս Անջելեսում, Ֆրեզնոյում, Չիկագոյում և այլուր:

Չեզոք ֆոնի վրա խոշոր պլանով հանգիստ վիճակում նստած և հայացքը դիտողին ուղղած Չեքիջյանն է. հպարտ կեցվածքով «խմբերգային արվեստի մարշալն», ինչպես Մաեստրոյին բնութագրել է Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հովհաննես Բաղրամյանը²: Համերգից հետո Մաեստրոն իր դիմանկարը նվիրաբերեց օպերային թատրոնին, որտեղ այն հանգրվանեց նկարչուհու ստեղծած մյուս հայ մշակութային գործիչների՝ Գոհար Գասպարյանի, Օհան Դուրյանի, Գեղամ Գրիգորյանի, Տաթևիկ Սազանդարյանի և այլոց դիմանկարների կողքին:

Նույն՝ 2018-ին Մաեստրոյի դիմանկարն է ստեղծել երիտասարդ խոստումնալից նկարիչ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի խոստումնալից ուսանող Միքայել Հարությունյանը (ծնվ. 1997), ով «Վահան Թեքեյան» մրցանակի (2017) և միջազգային տարբեր մրցույթների մրցանակակիր է: Իր կոմպոզիցիոն լուծմամբ, ընդհանուր հանդիսավորությամբ Հարությունյանի Չեքիջյանը մոտ է Կարճիկյանի պատկերին: Պատահական չէ աչքի ընկնող ատրիբուտը՝ «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն

¹ Տե՛ս Առաքելյան Ս., Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2014, էջ 97:

² Տե՛ս Ասատրյան Ա., Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, էջ 7:

կոչմանն արժանանալու կապակցությամբ Չեքիջյանին շնորհված Հայրենիքի շքանշանը: Միևնույն ժամանակ՝ նախորդ դիմանկարի պաթոսն այստեղ իր տեղը զիջել է ավելի ջերմ և հոգեբանական, կամերային մեկնաբանմանը, ինչին նպաստում են լուսաստվերային խաղը, պաստոզային կատարումը, ներկի լուսարձակ ջերմությունը: Ուշագրավ է այն հիացմունքը, որով Մաեստրոյի անհատական հմայքի մասին խոսում են Կարճիկյանն ու Հարությունյանը, ովքեր մշտապես հաճախում են Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի համերգներին: Մասնավորապես ուրախալի է այն ոգևորությունը, որով երիտասարդ արվեստագետը պատմում էր անձնական շփման մեջ Մաեստրոյի հարուստ ներաշխարհի, սուր դիտողականության, արվեստի բոլոր ճյուղերին առնչվող դիպուկ բնութագրերի, երիտասարդ հոգու և պահանջկոտության մասին:

Իր կոմպոզիցիոն լուծմամբ այս դիմանկարներին է մոտենում նաև Քիչինևում Ռեպինի անվան գեղարվեստի ուսումնարանի շրջանավարտ, Սանկտ Պետերբուրգի բնակիչ Արամ Սարիբեկյանի՝ դեռևս 2001թ. վրձնած դիմանկարը:

Տարբեր է իր մեկնաբանմամբ ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1977), գեղանկարիչ, գրաֆիկ Ռուդոլֆ Խաչատրյանի (1937-2007) Չեքիջյանը: Ռոմանտիկ ոգով համակված, արտաքին նկարագրական մանրամասներից զուրկ դիմանկարը բացահայտում է Մաեստրոյի ներքին հույզը: «Երբ նկարում էի մաեստրո Չեքիջյանին, հիշում է Խաչատրյանը, նա ասաց. «Ես շատ մեղք եմ»: Ես նրան պատասխանեցի՝ իհարկե մեղք կլինես... Մարդու համար ամենաթանկը ժամանակն է: Դուք ընտրել եք արվեստների արվեստը հանդիսացող երաժշտության ամենադժվարին ուղղությունը: Իմ գործիքը այս մատիտն է, իսկ Ձերը՝ 90 հոգուց բաղկացած մի մեծ ընտանիք՝ իր բոլոր հոգսերով, որը Ձեզնից խլում է այդ ամենաթանկարժեք ժամանակը...»³: Սակայն, թվում է, թե խնդիրը ոչ միայն ժամանակն է, այլ նաև հայ երգին ու ժողովրդին ծառայելու ազգանվեր գործի մեծ պատասխանատվությունը: Այստեղից էլ՝

³ Տե՛ս Առաքելյան Ս., Հովհաննես Չեքիջյան, էջ 96:

կերպարի ներքին լարվածությունը, որը բացահայտվում է լուսաստվերային կտրուկ հակադրումով, դինամիկ կոմպոզիցիոն ռիթմով: Միևնույն ժամանակ խաչատրյանական Չեքիջյանը սովորական մտավորական չէ. Խաչատրյանի նախասիրած լևկասի լուսափայլությունը, որը, ըստ արվեստաբան Արարատ Աղասյանի, «...հոգևոր մի այլ խորությամբ, արտաժամանակ մի նոր չափումով և խորհրդավոր, սրբազնական նշանակությամբ է օժտում մարդկանց դեմքերն ու առարկաները»⁴, ասես սրբացրել է Մաեստրոյի կերպարը և նրա լուսավոր ու տատանակավոր առաքելությունը: Ուշագրավ է, որ Ռուդոլֆ Խաչատրյանի եղբայրը Հայաստանի ժողովրդական արտիստ, կապելլայի երկարամյա մենակատար Ալբերտ Խաչատրյանն է, ում միջոցով էլ տեղի էր ունեցել ուշագրավ ծանոթությունը:

Իր կոմպոզիցիոն մտահղացմամբ, հոգեբանական բնութագրմամբ և ընդհանուր տրամադրությամբ Խաչատրյանի հեղինակած դիմանկարին մոտ է քանդակագործ, ՀՀ վաստակավոր նկարիչ (1983), ՀՀ ժողովրդական նկարիչ-քանդակագործ (2008), միջազգային մրցույթների դափնեկիր Լևոն Թոքմաջյանի (ծնվ. 1937) կերտած դիմաքանդակը, իսկ քարը կերպարին այլ երանգներ՝ կշիռ և ուժ է հաղորդել: Գրանիտի անհարթ և անողորկ ֆակտուրան ինչպես Մաեստրոյի անհանգիստ բնավորության, այնպես էլ հսկայական ներուժի և «մոնոլիտ» անհատականության պլաստիկ թարգմանն է: Թոքմաջյանի Չեքիջյանը մարտիկ է: «Արվեստի կռիվը միշտ էլ եղել է մարդու բարի ուժը նրա գեղեցկությունը կործանող բռնության դեմ: Բոլոր ժամանակների արվեստագետները քաջ կռվողներ են եղել. մարդու բարձր նպատակի, նրա դժվար ճանապարհի համար անձնվեր կռվողներ», - խոստովանում է Չեքիջյանը⁵:

⁴ **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 186:

⁵ Տե՛ս **Առաքելյան Ս.**, Հովհաննես Չեքիջյան, էջ 260:

Թոքմաջյանը շուրջ 16 տարի կապելայի երգիչ է եղել, ինչն իր վկայությամբ մեծ ազդեցություն է ունեցել որպես արվեստագետ իր ձևավորման վրա. «...Ես Մաեստրոյին քանդակել եմ բազմաթիվ անգամներ, քարի, բրոնզի մեջ արտահայտելով իմ ոգևորությունը նրա դիմաքանդակներում, ձեռքերի շարժումներում: Մաեստրո Չեքիջյանն ինձ սովորեցրեց այն, ինչը ես չսովորեցի քանդակագործի իմ ուսումնառության 11 տարիներին: Այն է՝ ամեն ինչում լսելի և շոշափելի դարձնել երաժշտությունը, քարը տաշել այնքան, մինչև նրա միջից դուրս ժայթքի երգը, մեղեդին:... Չեքիջյան արվեստագետը ինձ համար նույնն է, ինչ գունանկարչության մեջ Մարտիրոս Սարյանը... Շնորհակալ եմ իմ սիրելի Մաեստրո. դու միշտ ինձ հետ ես, իմ մտքերի, իմ ամենաուրախ և ամենատխուր պահերին: Դու անմահ ես...»⁶:

ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1985) Մարկոս Արզումանյանի (1912-1990) և ՀՀ վաստակավոր նկարիչ-քանդակագործ (2014), միջազգային մրցույթների դափնեկիր Էդուարդ Շախիկյանի (ծնվ. 1950) ստեղծագործություններում մեր աչքերի առջև հառնում է խմբավար, դիրիժոր Չեքիջյանը: ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ (1960), ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ (1947), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1956), ՀԽՍՀ նկարիչների միության նախագահ (1945-1951) Մարտիրոս Սարյանը (1880-1972) ժամանակին ասել է. «Ժողովրդի դառը ճակատագրից ծնված Կարա-Մուրզայի, Կոմիտասի, Եկմայանի երգերը Հովհաննես Չեքիջյանի մեկնաբանությամբ ու ղեկավարությամբ հնչում են այնքան վեհ և այնպիսի խոնարհ իմաստությամբ, որ լցվում-լիանում ես այրող ու մաքուր բոցով... Բախտավոր ու հպարտ ենք մեր Չեքիջյանով»⁷:

Արզումանյանական Չեքիջյանն այդ վեհության, խոնարհ իմաստության, մաքրության կրողն է: Նա պատկերված է երաժշտության հոգեկան վայելքի պահին, երբ ականթարթը կանգ է առել, և Մաեստրոյի կեցվածքը ասես աղոթքի բռնված ուխտավորի

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 214:

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 13:

հանդարտ լուսավոր հանդիսավորությունը կոնտրաստի մեջ է մտնում առաջին պլանում պատկերված ջութակահարների դինամիկ նվագի հետ:

Շախիկյանը 2000-ից երգում է Չեքիջյանի ղեկավարած Հայաստանի ազգային սկադեմիական երգչախմբում: Արվեստագետի Չեքիջյանը, ըստ իր բնութագրման. «Հմայված լռության ասպետն է»⁸, սակայն սա արդեն գործն ավարտին հասցրած արվեստագետի բերկրանքն է, երբ երաժշտության հոգեկան վայելքը փայլուն մատուցվել և փոխանցվել է մարդկանց սրտերին: «Կա մի պահ, մի արարչական, կախարդված պահ կա, երբ մարում են խմբերգի վերջին հնչյունները, ու դա հիվանդում քար լռություն է տիրում: Քար լռություն է: Ոչ մի շարժում չկա: Մենք՝ երգիչներս, արձանացած ենք շարքում, Մաեստրոն՝ աչքերը փակ, զմայլանքը դեմքին, ձեռքերը ճախրանքի ականթարթում սեպված... Իսկ դյուրված հանդիսատեսը զգացմունքների բոլոր նյարդերով դեռ երաժշտության հիպնոսի մեջ է: Ու հանկարծ... հանկարծ դա հիվանդ սթափվում է, ու մեկից թնդում են ծափերը, վերածվում ծափող-ջուլնների... Չգիտեմ՝ ով-ինչպե՞ս, ես այդ լռության պահի բերկրանքն եմ սիրում: Գուցե պատճառն այն է, որ ես քանդակագործ եմ, ու այդ քար-լռության կերպարը ինձ համար գունեղ ու պերճախո՞ս է հառնում: Գուցե: Սակայն այդ լռությանը հասնելու համար, այդ պահը արարելու, «քանդակելու» համար միայն չեքիջյանական տաղանդ է պետք: Ահա թե ինչու, ամեն անգամ, երբ վրա է հասնում այդ ականթարթը, ես ականդետ նայում եմ Մաեստրոյի արձանացած, արտիստիկ կեցվածքին ու մտովի «վերնագրում» եմ նրան՝ Հմայված լռության ասպետ...»⁹:

Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում պահվող այս քանդակի կոմպոզիցիոն լուծումը, խոսուն ժեստը, լուսաստվերի թրթռուն խաղն ու ցուանքները պլաստիկորեն կերպավորում են

⁸ **Շախիկյան Է.**, Հմայված լռության ասպետը, «Օրինաց երկիր», 30 հունվարի, 2004:

⁹ Նույն տեղում:

Մաեստրոյի հուզմունքը, պահի վեհ հանդիսավորությունը և մոգականությունը: «Ոգևորված մեծ վարպետի անզուգական տաղանդով, նրա անկրկնելի կախարդական ձեռքերով...»՝ տաղանդավոր քանդակագործը բրոնզից է ծուլել իր սիրելի Մաեստրոյի ձեռքերը:

Մաեստրոյի խմբավարական ժեստը, հայացքը, արտիստիզմը, համերգի պահին ստեղծագործական պոռթկումը առավելագույն արտահայտչականության է հասցրել ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1965), պրոֆեսոր, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր (1970) Վարդան Աճեմյանը (1905-1977) իր ընկերական շարժում¹⁰:

Անվանի ռեժիսորը գրում է. «Ես հենց այսպիսին եմ տեսել Հովհաննես Չեքիջյանին՝ միշտ թռիչքի մեջ, շարունակ որոնող, մշտապես ոգեշնչված, անվերջ բարձրացող... Եթե ուշադիր նայեք նրա ձեռքերին ու աչքերին, վստահաբար դուք կտեսնեք նրա հոգու հայացքը, այն մոգական ուժը, ինչով նա ձգում ու «մարտի է» տանում իր «գինվորներին»... Հապա իմ ճանաչած Չեքիջյանի հումորը, կատակը, դիպուկ ու սրամիտ խոսքը, ինչով ամբողջանում է անսովոր տաղանդի տեր բարեկամիս մարդկային նկարագիրը»¹¹:

XX դարի հայ նշանավոր արվեստագետ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ (1976) Երվանդ Քոչարի (1899-1979) խոսքերով. «...Չեքիջյանը պարզապես Աստծո պարզ է, և միայն նրա հայրենակիցը լինելու համար արժե հայ ծնվել: Ինձ համար նույնացան Դավթի Թուր Կեծակին ու Չեքիջյանի մոգական փայտիկը...»¹²:

Չեքիջյանի «մոգական փայտիկը» իր կենտրոնական տեղն է գտել Մաեստրոյի 90-ամյա հոբելյանին նվիրված միջոցառման առիթով հատուկ հոբելյարի համար ստեղծած գեղեցիկ նատյուր-

¹⁰ 1968-ին լույս է տեսնում Աճեմյանի «Ժպիտներ, ընկերական շարժեր» ալբոմը, որտեղ գետեղվում է հայ մտավորականների՝ Լևոն Հախվերդյանի, Հրաչյա Ներսիսյանի, Հովհաննես Չեքիջյանի, Մետաքսյա Սիմոնյանի, Տաթևիկ Սազանդարյանի և այլոց մատիտանկար-շարժերի հարուստ պատկերաշարը:

¹¹ Տե՛ս Առաքելյան Ս., Հովհաննես Չեքիջյան, էջ 94:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 18:

մորտում, որը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը սիրով նվիրել է Մաեստրոյին: Հեղինակը շնորհաշատ նկարիչ, Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում պահվող Կոմիտաս վարդապետի և Տիգրան Չուխաճյանի դիմանկարների հեղինակ Ալբերտ Սալյանն է:

«Վեհանուն Չեքիջյան»․ այսպես է բնութագրել Մաեստրոյին ԽՍՀՄ (1983) և ՀԽՍՀ (1967) ժողովրդական նկարիչ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1961) և արվեստի վաստակավոր գործիչ (1963), ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր (1969), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1990), ՌԴ գեղարվեստի ակադեմիայի պատվավոր անդամ (1991) Գրիգոր Խանջյանը (1926-2000): Նկարիչը խմբավարի ազգանվեր գործունեության առեղծվածը փնտրել և գտել է «երգ Արարելու-Ստեղծելու մեջ, իր մեջ հողի օրհնությունը կրող կոմիտասյան մեղեդուն նոր շունչ ու իմաստ տալու և բեմի վրա ժանյակների շարան հիշեցնող իր արտիստներից միջնադարյան որմնանկար հյուսելու մեջ»¹³:

Նշենք նաև, որ արվեստաբան Արարատ Աղասյանի «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» գրքից տեղեկացանք, որ Փարիզում ծնված, 1947 թվականին Հայաստան ներգաղթած և այստեղ մասնագիտական կրթություն ստացած, շնորհալի քանակագործուհի Ալիս Մելիքյանը 1967-ին կերտել է Մաեստրոյի քանդակը¹⁴: Ցավոք սրտի, մեզ դեռևս չի հաջողվել գտնել այդ քանդակին առնչվող որևէ տեղեկություն, սակայն հույս ունենք, որ ապագայում մեր որոնումները դրական արդյունքի կբերեն:

Հուսով ենք նաև, որ Մաեստրո Հովհաննես Չեքիջյանին կերպարվեստում անմահացնող աշխատանքներն ապագայում ևս կհամալրվեն մեծ խմբավար-դիրիժորի, հայ մտավորականի հարուստ

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 97:

¹⁴ Տե՛ս **Աղասյան Ա.**, Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 214:


**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԸ
ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԵՎ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ԱԶՔԵՐՈՎ**




Լիլիա Կարճիկյան,
Հովհաննես Չեքիջյան,
յուղաներկ, 2018



Միքայել Հարությունյան,
Հովհաննես Չեքիջյան, 2018,
յուղաներկ



Արամ Սարգսեյան,
Հովհաննես Չեքիջյան,
յուղաներկ, 2001



Ռուդոլֆ Խաչատրյան,
Հովհաննես Չեքիջյանի
դիմանկարը, սեպիա,
լևկաս, 1977



Վարդան Աճեմյան, Հովհաննես Չեքիջյան, մատիտանկար, 1962



Լևոն Թորմաջյան, Հովհաննես Չեքիջյանի դիմաքանդակը, գրանիտ, 1982



Մարկոս Արզումանյան, Հովհաննես Չեքիջյան, 1969



Էդուարդ Շախիկյան, Հովհաննես Զեքիջյան, բրոնզ, 1987



Էդուարդ Շախիկյան, Հովհաննես Զեքիջյանի ձեռքերը, բրոնզ

Աննա Ասատրյանը հրապարակում է Արարատ Աղայանի շնորհավորական ուղերձը և Մատեստոյին հանձնում Արվեստի ինստիտուտի նվերը՝ Ալբերտ Սալյանի «Նատյուրմորտը»

**ԱԿՆԹԱՐԹՆԵՐ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆ – 90»
ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՑ**



Նստաշրջանի բացումը, Երևան, ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճ,
12 հուլիսի, 2019թ.



Արարատ Աղայանի բացման խոսքը



Մաեստրո Հովհաննես Չեքիջյանը՝ նստաշրջանի բացման ժամանակ



Մաեստրո Հովհաննես Չեքիջյանը՝ նստաշրջանի փակման ժամանակ,
Արզական, 13 հուլիսի, 2019թ.

ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՁԱԿԱՆՈՒՄ





Արվեստագիտության դոկտոր Նազենիկ Սարգսյանը զեկուցման պահին



Արվեստագիտության թեկնածու Հովհաննես Մանուկյանը զեկուցման պահին



Արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյանը զեկուցման պահին



Արվեստագիտության թեկնածու Աննա Հարությունյանը զեկուցման պահին



Հովհաննես Չեքիջյանը և Սարգիս Բալթարյանը



Հովհաննես Չեքիջյանը և Մարգարիտա Քամայանը



Հովհաննես Չերիջյանը և Նաիրա Մադոյանը



Հովհաննես Չերիջյանը և Աննա Ասատրյանը

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԼՍՎՈՒՄ ԵՆ ՄԵԾ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՄԲ



Կապելլայի տնօրեն Դավիթ Թերզյանը և ՀՀ վաստակավոր արտիստ Պերճ Քարազյանը



Կապելլայի արտիստներ Գայանե Միրզոյանը և Էդուարդ Շախիկյանը

ՋԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ ԼՍԿՈՒՄ ԵՆ ՄԵԾ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՄԲ



ՀՀ վաստակավոր արտիստ Սարգիս Աղամալյան



Կապելլայի արտիստները

**ԵՐԳՉԱԽՄԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՐԺԱԼ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ՀԵՏ**



ՆՍՏԱՇՐՋԱՆՆ ԱՎԱՐՏՎԵՑ... ԿՀԱՆԴԻՊԵՆՔ 5 ՏԱՐԻ ԱՆՑ



ներաշխարհը բացահայտող, աստվածաշնորհ առաքելությունը ներկայացնող նոր և տաղանդավոր ստեղծագործություններով:

Օգտվելով առիթից, մեր սիրելի՛ Մաեստրո, թո՛ւյլ տվեք Ձեզ շնորհակալություն հայտնել, որ հարստացրել եք մեր իրականությունը, որ հիշեցնում եք ազգային ու հոգևոր մեծ արժեքների և ավանդույթների մասին, ազգային ինքնության մասին, կենդանացնում և լուսավորում եք մեր ընդարմացած հոգիները: Թո՛ւյլ տվեք մաղթել Ձեզ արևշատություն, երկար տարիների առողջ կյանք, թող Ձեր բեղմնավոր գործունեությունը Աստծո օրհնությամբ շարունակական լինի:

Հ.Գ.

Շնորհակալ եմ նաև միջոցառման կազմակերպիչներին, մասնավորապես մեծարգո Արարատ Աղասյանին և Աննա Ասատրյանին՝ այս գիտական նստաշրջանին և գեղեցիկ միջոցառմանը մասնակցելու հնարավորության համար, որ ինձ համար մեծ պատիվ է:

*Աննա ԱՍԱՏՐՅԱՆ
Նաիրա ՄԱԴՈՅԱՆ
Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի
Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս,
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ*

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԵՔԻՋՅԱՆԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՊԵՆԼԱՅԻ
ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐԸ.**

**ԼԵՆԻՆԳՐԱԴՐՈՒՄ ՄԱԵՍՏՐՈՅԻ ԱՌԱՋԻՆ
ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐԻ 55-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

2019 թվականը հորեղանակա՞ն է Հովհաննես Չեքիջյանի հա՞մար: Սակայն 2019-ին հորեղաններ կան նաև Մաեստրոյի կատարողական կյանքում: Դրանցից մեկը Մաեստրոյի և հայկական կապելլայի լենինգրադյան առաջին հյուրախաղերի հորեղանն է:

55 տարի է մեզ բաժանում այն օրերից, երբ 1964 թվականի հոկտեմբերի 29-ին, 30-ին, 31-ին և նոյեմբերի 1-ին կապելլան Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ նվաճեց Լենինգրադը: Չորս համերգներին կատարվում են Մոցարտի “Requiem”-ը, Շուբերտի C-dur կանտատը, իսկ համերգներից երկուսում a cappella ծրագիր էր:

Լենինգրադի Մ.Գլինկայի անվան ակադեմիական կապելլայի խմբավար Վ.Բարանովը նկատեց. «Մեծ գովեստի է արժանի երգչախմբի գեղարվեստական ղեկավար, տաղանդավոր երաժիշտ Հովհաննես Չեքիջյանը. նրա կամքը, պարտիտուրի անթերի իմացությունը, հատու ժեստերը, խմբավարի նուրբ զգացողությունը թույլ տվին նպատակամետ կերպով վարելու ամբողջ համերգը, ստեղծելու լավ անսամբլ և հուզական լարում: Երգչախումբը լենինգրադցիներին գերեց՝ ծրագրից դուրս կատարելով նաև Կոմիտասի երկու խմբերգերը: Այստեղ իր ամբողջ ուժով դրսևորվեց

երգչախմբի՝ այդ սքանչելի անսամբլի վարպետությունը, վճիտ հնչեղությունը, ազգային երանգը»¹:



1964-ին սկիզբ առած բարեկամությունը Լենինգրադի ունկնդրի հետ շարունակվեց հետագայում. հաջորդեցին համամիութենական մի շարք պրեմիերաներ²: Մաեստրո Չեքիջյանի ղեկավարու-

¹ **Բարանով Վ.**, Կոմիտասի հայրենակիցները երգում են Լենինգրադում, «Գրական թերթ», 4 դեկտեմբերի, 1964:

² Լենինգրադում Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի ելույթների վերաբերյալ առաջին ուսումնասիրությունները կատարել ենք մենք: Տե՛ս **Ասատրյան Աննա**, Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի լենինգրադյան հյուրախաղերը, Մշակույթների երկխոսություն, Հայաստանի մշակութային կապեր (պատմություն և արդիականություն), միջազգային գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2008, էջ 87-91: **Ասատրյան Աննա**, Ленинградские гастрели Государственной академической капеллы Армении, Социально-психологическое обеспечение профессиональной деятельности.

թյամբ երգչախումբը 97 համերգ է ունեցել Լենինգրադում, մասնավորապես Լենֆիլհարմոնիայի Շոստակովիչի անվան մեծ համերգասրահում, որից 70-ից ավելին՝ Եվգենի Մրավինսկու ղեկավարած սիմֆոնիկ նվագախմբի ընկերակցությամբ՝ բոլորն էլ Հ.Չեքիջյանի ղեկավարությամբ:

Մեր զեկուցման մեջ կանդրադառնանք լենինգրադյան այն համերգներին, որոնցում Մաեստրո Չեքիջյանն ու նրա ղեկավարած կապելլան իրականացրել են տարբեր ստեղծագործությունների համափութենական պրեմիերաները:

1966-ին Լենինգրադի ֆիլհարմոնիայի հրավերով կապելլան հունվարի 26-ին կատարում է Մոցարտի “Requiem”-ը և Շուբերտի C-Dur Կանտատը՝ մեներգչուհի Գոհար Գալաչյանի մասնակցությամբ:



Тематический сборник, Санкт-Петербург, 2009, стр. 114-117 ևն: Լենինգրադում Հայաստանի պետական ակադեմիական երգչախմբի ելույթների ամբողջական ցանկը տե՛ս **Ասատրյան Աննա**, Ամենայն հայոց մաեստրոն. Հովհաննես Չեքիջյան, Երևան, 2009, Հավելված 3, էջ 153-159:

Հաջորդ օրը կապելլան հանդես գալիս a cappella ծրագրով, իսկ հունվարի 30-ի համերգի հայտագրում տեղ են գտնում Սմե-տանայի F-Dur կանտատը և Ռուսինիի “Stabat Mater”-ը, որոնց համերգային կենսագրությունը Խորհրդային Միության մեջ, ի դեպ, սկիզբ առավ Մաեստրոյի շնորհիվ:



“Вечерний Ленинград”-ում լույս է տեսնում Արամ Տեր-Հովհաննիսյանի «Բրավո, կապելլա» թղթակցությունը: «1966-ի ցրտաշունչ գարունն էր,- հետագայում կհիշի Հ.Չեփիջյանը,- Լենինգրադը պարուրված էր իր անբաժան մառախուղով: Ես դեռ Երևանում վերցրել էի Արամ Տեր-Հովհաննիսյանի հասցեն և փորձից ազատ մի երեկո այցելեցի ծերունագարդ դիրիժորին: Զրուցեցինք, տիկնոջ հետ հրավիրեցի մեր համերգին: Եկան, ունկնդրեցին, և երբ համերգի ավարտին համերգասրահին իր գոհունակությունն էր

հայտնում, ես բեմ մտա մեծարգո մանստրոյի հետ և այն տարիների դեռ անվարժ իմ ռուսերենով սրահին պատմեցի, որ երգչախմբի մեծ երախտավոր, անվանի դիրիժոր Արամ Տեր-Հովհաննիսյանն իրենց համաքաղաքացին է: Ծափերը սաստկանում են, մանստրոն ողջունում է համերգասրահին դողդոջուն ու հուզված»³:

1967-ի մարտի 2-ը և 3-ը հիշարժան օրեր էին թե՛ Կապելլայի, թե՛ Լենինգրադի երաժշտական կյանքի տարեգրության մեջ. շնորհիվ հայ ականավոր դիրիժորի՝ Լենինգրադի ֆիլհարմոնիայի Շոստակովիչի անվան համերգային դահլիճում Բեռլինգի «Requiem»-ի լենինգրադյան պրեմիերան է՝ մասնակցությամբ Լենֆիլհարմոնիայի ակադեմիական սիմֆոնիկ նվագախմբի, Հայաստանի պետական երգչախմբի, վերին օթյակներում տեղավորված չորս հավելյալ նվագախմբերի:

ГОСУДАРСТВЕННАЯ ОРКЕСТРОВАЯ ФИЛАРМОНИЯ БОЛЬШОЙ ЗАЛ 9/9, Бакинское, 2 Телефоны: 2-37-45, 2-4-45-46				РЕПЕРТУАР со 2 по 13 МАРТА 1967 г.			
2 четверг	3-4 пятница	6 воскресенье	10 пятница	44 пятница	11 суббота	12 воскресенье	13 воскресенье
